

ՄԱՍԻՍ

ԿԻՍԱՄԱՐԱՆՅՈՒՆ ԳԱՆՂԵԱՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

Թ Ի Ի 16-17 . Բ Ո Վ Ա Ն Դ Ս Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՕԳՏԱԿԱՐԸ ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ
ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏՆԵՐԸ

Արդի Թատրոնը Յուլիանուսի մէջ
ՔՈՆՍՏԱՆԹԻՆ ՄԱՔՐԻՍ

ԴԱՍ ՄԸ

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ԱՆԵԼ ՀԷՔԵԱԹԸ

(Թիթեռնիկին պատմութիւնը)
ՍՏԵՓԱՆ ՔԱՐԲՈՒՅԼԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ԳԻՄԱՍՏՈՒԵՐՆԵՐ

Սիպիլ

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ

ԳՐԶԻ ՄԸ ԱՆԿՈՒՄԸ

ՅՈՎԶ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐ

ՀԷՆՐԻԲ ԻՊՍԷՆ

ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՐՀ

Կանանց շարժումը Ռուսիոյ մէջ
ՔԷՔԷ ՇԻՐՄԱԽԸՐ

ԲԱՅ ՆԱՄԱԿ

ԾԲ. Մ. ՎԱՀԷ

ՋՈՋ ՏԱՏԻՆ ՊԱՏՄԱԾՆԵՐԸ

«Վախին ծնունդը»

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Յաւս, Վայրկեան մը

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ

Սօցի

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԱՆ

ՄԱՅՐԸ ԻՐ ԾԻՋԻՔԱԿԱՆ ԿՐԹԻՉ

Յղի կնոջ սննդառութեան եղանակը

ՀԷՌՄԱՆ ՔԼԷՆՔԷ

SONNET

HENRI BECQUE

ԲԱՐՔԵՐ ՈՒ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

ՍԿԵՊՏԻԿ

ՎԵՐՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Տրէյֆիւսի գործին հոգեբանութիւնը

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

48^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 16-17

28 ՕԳՈՍՏՈՍ 1899

ՏՆՕՐԷՆ—ԽՐԲԱԳՐԱՊԵՑ ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ՄԱՏԹԵՆՈՍԵԱՆ

ԿԸ ԽՆԴՐՈՒՒ

Կը խնդրուի բոլոր Պատ. գործակալներէն և բաժանորդներէն, որպէս զի փութան շուտով մեզ զրկել երկրորդ վեցամսեակի բաժանորդագինները, ասով նիւթապէս չի վնասելու համար մեր ձեռնարկին: Յետոյ կը խնդրուի նաև բոլոր այն գործակալներէն և բաժանորդներէն, որոնք տակաւին անցեալ վեցամսեակի հաշիւները չեն կարգադրած, որպէս զի հաճին անյապաղ իրենց հաշիւները մաքրել, նկատողութեան առնելով որ թերթերու վարչութիւնները վարկի հաստատութիւններ չեն, որպէս զի կարող ըլլան տարին տասներկու ամիս ապառիկ թերթ զրկել:

Խմբագրութեանս մէջ ստացուած են

ԲԱՆԱՍԷՐ. Հնախօսական, պատմական, լեզուաբանական և քննական հանդէս, Հասոր Ա., Բ. Գիրք. Տնօրէն Կ. Յ. Բաամաշեան, Բարիք, 1899:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ (Գործնական) արդի աշխարհաբարի. Բ. Գիրք. Հեղինակութիւն Զապէլ Տօնէյեանի, հրատարակութիւն Պ. Պաշենց գրատան: Տպագրութիւն Յ. Մասրէսուեան. 206 էջ, Պոլիս, 1899. Գին 4 դրշ:

Մանչ տղայոց եւ երիտասարդաց զգասուքեան վրայ (Գիճնիթիւն). Ծնողքներու և դաստիարակներու ուղղուած. թարգ. Գերմաններէնէ: Տպագրութիւն Յ. Մասրէսուեան. հրատարակութիւն Պ. Պաշենց գրատան. Պոլիս 1899. 42 էջ. Գին 2 դրշ:

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՄԱՍԻՍ, Ա. ՎԵՑԱՄՍԵԱԿ, 392 մեծագիր էջերով, ճոխ բովանդակութեամբ հատոր մը. կը ծախուի 25 Արշի, խմբագրատան մէջ: Գաւառներէ և արտասահմանէ ուղղուները պէտք է վճարեն 5 Արշ. ևս, իբր թղթատարի ծախք:

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԺԹ. Տարեցլան 1899—1900

Վարժարանիս ԺԹ. տարեջրձանը կը սկսի յառաջիկայ (1899) սեպտեմբեր 1ին, և նորեկ աշակերտներու մուտքի քննութիւնները տեղի կ'ունենան օգոստոս 30ին և 31ին, իսկ դասերը կանոնաւորապէս կը սկսին սեպտեմբեր 1ին: Թոշակաւոր աշակերտներու ընդունելութեան պայմաններուն և ուրիշ տեղեկութեանց համար, ծնողք կամ պաշտպաններ կրնան հիմակուրէն գիմել Պոլիս՝ Ազգ. Պատրիարքարան և կամ Կարին՝ վարժարանին տեսչութեան: Յառաջիկայ տարուան համար ձրի աշակերտներու ընդունելութիւնը արդէն կատարուած ըլլալով, այդ մասին ո՛ր և է գիմում առանց հետեւանքի պիտի մնայ:

Կ Ն Ի Ք

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ, ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐՈՒՆ

Կը խնդրուի ընդհանուր Ռուսահայ եւ Տաճկահայ հեղինակներէ, որպէս զի իրենց հեղինակութենէն հաճին երկերկու օրինակ ուղարկել Խմբագրութեանս, թերթիս տնօրէնին հասցէով: Խմբագրութեանս ուղարկուած գրքերը թերթի կողքին վրայ պիտի ծանուցուին:

ՄԱՍԻՍ

48^{րդ} ՏԱՐԻ

— 28 ՕԳՈՍՏՈՍ 1899 —

ԹԻԻ 16-17



23^{րդ} ՏԱՐԵԴԱՐՁ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ
ՕԳՈՍՏԱՓԱՌ
ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ
ՎԵՀԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ
ՄԵԾԱՆՈՒՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԹՈՒՐԲԻՈՅ

Օսմանեան ընդարձակ կայսրութեան բովանդակ տարածութեան վրայ նախորդ տարբու արտակարգ փայլով եւ ընդհանուր հրեւումնով տօնուեցաւ

ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՍԵՐ

Դանակալութեան 23^{րդ} բարեբաւտիկ տարեդարձը:

Բոլոր հպասակ ժողովուրդները՝ եղբայրական սերս կապով մը զօղուած իրարու հետ, հաւասարմական եւ երախտագիտական միեւնոյն զգացումները արտայայտեցին իրենց Օգոստոսիան Կայսեր, շնորհակալութեամբ յիշելով բոլոր այն բարիքները՝ զորս իրենք կը վայելէին իրենց հանճարեղ վեհապետին բարձր հովանաւորութեան տակ:

Արդարեւ, ոչ մէկ ասէն Թուրքիա այսչափ նշանաւոր դիրք մըն էր բռնած բովանդակ եւրոպայի մէջ, քե՛ր իր զինուորական հզօր կազմակերպութեամբ, քե՛ր ելմական արգասաւոր վիճակով, նարսարառութեան յարանուն յառաջդիմութեամբ, հաղորդակցութեանց միջոցներուն դիւրանալովը, երկարուղիներուն շինութեամբ եւ մտաւոր զարգացմամբ, որչափ այն երջանկաբէր օրէն ի վեր ուր Ն. Վ. ՕԳՈՍՏԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՍԵՐԸ Օսմանեան Գահը բազմեցաւ:

Մասիս՝ այս առթիւ կը ձայնակցի բովանդակ մամուլն արտանուէր խնդակցութեանց եւ իրեն պարտք մը կը համարի գոչել միլիոնաւոր ժողովուրդներուն հետ

Կեցցե՛ք, յաւերժ կեցցե՛ք

Օգոստոսիան ինքնակալն Թուրքիոյ

ԱՊՏ-ԻԻԼ ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ ՂԱԶԻ



ՕԳՏԱԿԱՐԸ ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ՝ ՄԷՋ

ՄԻՐԱՅԻՆ, ՇԱՄՏԱՆԱԾԱՆ



ԳՏԱԿԱՐԸ չար-
համարել, ամէն
զոհողութիւնը-
նել օգտակար
բան մը ձեռք

անցնելու համար, ասիկա պէտք է պա-
րագան ըլլայ այն բոլոր անհատներուն
և հասարակութիւններուն, որոնք իրենց
կենդանական և ընկերային գոյութեան
մէջ այնքան արտաքին սատարող պատ-
ճառներու պէտք ունին, իրենց ֆիզի-
քական և մտաւոր նոր սկսուած զար-
գացումի գործը առաջ քշելու համար։
Տկար կազմուածքի տէր մէկը, որ շատ
կթոա կերպով կը կապուի կեանքին,
պարզ և ուժով աննդառութեան մը
միայն պէտք ունի. իրեն համար չեն
քիմքի քմահաճոյքներէն ստեղծուած զա-
նազան նրբաճաշակ խորտիկները, որոնք
միեւնոյն ատեն սակայն կրնան վայելք-
ներ ըլլալ զօրաւոր կազմուածք ունեցող
փափկակերի մը համար։ Իսկ ինչպէս որ

տկար կազմուածքի տէր անձի մը, փափ-
կակերի անունդը տալով շատ սխալ
բան մը ըրած պիտի ըլլայինք, նմանա-
պէս հասարակութիւններու բարոյական
աննդառութեան ատեն երբ նկատողու-
թեան չենք առներ անոր մտաւոր ու ըն-
կերական կազմուածքին չափը, միշտ
սխալելու ենթարկուած ենք, անոր մեր
բարոյական անունդը տուած ատեննիս։

Այստեղ գեղեցիկին և օգտակարին
առանձնապէս, իրարմէ տնկախաբար
ունեցած գոյութեան իրաւունքի մը
տէր ըլլալու կամ չըլլալու ակադէմական
խնդրի մասին չէ որ կ'ուզեմ խօսիլ.
իմաստասիրօրէն, միայն գեղեցիկը ինչ-
պէս նաեւ միայն օգտակարը ու յետոյ
ատենց խառնուող գեղեցիկ-օգտակարը
կրնայ գոյութիւն ունենալ։ Այդ չէ առ-
այժմ զիս հետաքրքրողը, այլ սա շատ
կարեւոր կէտը թէ մեր ներկայ բարո-
յական ու մտաւոր կացութեանը մէջ
որի՞ն պէտք է նախապատուութիւն
տանք, գեղեցիկի՞ն թէ օգտակարին։
Ըսի արդէն. իմաստասիրօրէն երկու-
քին ալ առանձին առանձին գոյու-
թիւնը արդարանալի է. բայց ինչպէս
որ արեւին տակ բացարձակ ճշմարտու-

թիւն չկայ, այս ճշմարտութիւնն ալ յաւարաբերական է. առանձնապէս օգտակարին ինչպիսի նաև առանձնապէս դեղեցիկին դոյութիւնը որոշ պայմաններու մէջ կրնայ արդարանալի բլլալ:

Հիմա, որո՞նք են մե՛ր պայմանները որոնց մէջ մենք ալ գիտակցութեամբ մեր բոլոր հանրային գործունէութիւններուն ատեն, կամ գեղեցիկին և կամ աւելի օգտակարին պահանջումներուն գոհացում պէտք էինք տալ: Բնական է այս յօդուածի սահմաններուն մէջ չեն կրնար մտնել այն բոլոր հանրային գոյն ունեցող գործունէութիւնները որոնց մէջ գեղեցիկին կամ օգտակարին հետեւելու ուղղութեան խնդիր մը կրնայ ծագիլ:

Այս առթիւ կ'ուզեմ միայն մեր ներկայ գրականութիւնը նկատողութեան տանել: Արդէն ըստած է ընդհանրապէս թէ գրականութիւն մը իր ժամանակին և զինքը արտադրող հասարակութեան հոգին է. թէև ճիշդ բլլայ այս սահմանումը, սակայն շատ տարտամ է ըմբռնելու համար գրականութեան ընկերական դերը: Երբ մեկին տարրալուծումի մը ենթարկենք գրականութեան էութիւնը կը տեսնենք որ անիկա նախապատմական և նախնական պայմաններու մէջ վանկերու արտաբերութեան ու զայնս կշռութեամբ մը երգելու պահանջն է, ծնած՝ մարդուն ներքին, հոգեկան և արտաքին, շրջապատի կրկին պատճառներէ: Սակայն մարդս կենդանական դասակարգին մէջ որքան կը զարգանայ մտաւորապէս, այնքան ալ իր բոլոր բնադրական պահանջները կը փոխուին նպատակաւոր գործունէութիւններու, որոնք կը ձգտին մարդկային ցեղը աշխուսցնել: Նմանապէս գրականութիւնն ալ նախնական պայմաններէ վեր մարդկային ընկերութիւններու քով, բնազդական պահանջի մը գոհացումը չէ լսի, այլ ձգտում մը ունի աշխուսցնելու, կատարելագործելու պահանջ մը որ բնու-

թենէն կենդանական բոլոր տեսակներուն արուած է:

Մեր խօսքը մասնաւորելով տաճկահայերու ժամանակակից գրականութեան վրայ, երկու գլխաւոր շրջաններ ունեցած է անիկա. մին սահմանափակ մտածումի, կրօնական նուիրապետութեան շատագոյնների շրջանը, իրեն գլուխ ունենալով Տերոյենց և նմաններ, և յետոյ ազատամիտները որոնք սակայն մեր պայմաններուն համապատասխան, ծրագրուած միահամուռ գրականութիւն մը չեն ըրած և չեն ալ կրցած իրենց ուղղութիւնը նուիրագործել, քանի որ դադարի մասին միշտ անփոյթ գտնուելով, գեղեցիկին բնազդական արտայայտութիւնը դարձուցած են իրենց գրական գործունէութիւնը, չկրնալով նաև հարկեցուցիչ դարձնել իրենց դպրոցը: Կրնանք ըսել թէ այսօր կրօնամիտ գրականութիւն մը բոլորովին դադարած է գոյութիւն ունենալէ մեր մէջ, և տեւողները եղած են գեղեցիկի այն dilétanteները որոնք անհրաժեշտ սնունդը չի տալով մեր ժողովուրդին զայն մտաւորական աշարիւնութեան մը ենթարկած են: Ասով չեմ ուզեր ուրանալ այն բացարձակ արժէքը, զոր շատ ճարտար գրողներ ունեցած են, գեղեցիկի պահանջումներու տեսակէտէն և որոնք սակայն չեն կազմուած մեր միջավայրի ամէն օր շեշտուող անհրաժեշտ օրէնքներուն տակ, այլ անձնական հակումներով կամ իրենց սենեակին մէջ, մեր զարգացման պայմաններէն տարբեր պայմաններու մէջ գտնուող ժողովուրդներու գրական արտադրութիւնները կարգալով ու իրենք ալ դառնալով սենեակի գրողներ, որոնք սակայն իրենց գրչի արտադրութիւնները իրենց սենեակէն դուրս ժողովուրդին մէջ հանած են, առանց մտածելու թէ աննպատակալարմար բան մըն է իրենց կատարածը: Մարդ որքան չգոհացուած պէտքերով ծանրանայ, այնքան իր ու-

նեցածներէն հարկադրուած է զեղջելու
զուտ հաճելին, գեղեցիկը, ատով ան-
հրաժեշտը, կենսականը կարելի եղածին
չափ մեծ քանակով մը ձեռք անցընելու
համար: Ընդհանուր օրէնք մըն է ասիկա
և շատ մը տգէտ անձեր բնազդաբար
կը կատարեն նոյն բանը: Սակայն այն
բոլոր պարագաներուն մէջ ուր բնազ-
դական գործունէութիւն մը տեսելու
համար անհրաժեշտ պարզութիւն մը
չի կայ և միւս կողմէն ալ բարդ պայ-
մաններուն տակէն յաջող կերպով ել-
լելու անհրաժեշտ զարգացումը կը պակ-
սի, բնական է որ ամէն բան կը սկսի
ծուռ ճամբով մը երթալ: Մեր գրական-
ութեան մէջ ալ այս պարագան եղած
է որ մեր հասարակութիւնը միշտ միա-
կողմանի և անպատրաստ պահած է,
հանդէպ կեանքի լայն կերպով ըմբռ-
նուած կռիւին տոկալու համար անհրա-
ժեշտ, առողջ, շինիչ գաղափարները ներ-
շնչելու թերանալով: Ու այդ թերա-
ցումն է որ մինչեւ այսօր քիչ կամ շատ
տեսելու վրայ է: Իրաւ է որ մինչեւ
մեր օրերը հասնող գրականութեան կա-
րեւորութիւնը չենք կրնար ուրանալ,
այսօրուան մեր լեզուն որ շատ մօտ է
իր վերջնական ձեւին յանգելու, անմի-
ջապէս մենէ առջիներուն կը պարտինք:
Բայց մենէ առջիները, իբր գեղապաշտ-
ներ սահմանափակօրէն ըմբռնած են
կամ դորձադրած գրականութեան դերը:
Գրականութիւնը այսօր, իր բոլոր սե-
ռերով, միակ բնազդական պահանջի մը
գոհացումը չէ, այլ օւկան մըն է այն,
որով զանազան ձեւերու տակ, զանա-
զան կերպերով, վէպերով, թատրոն-
դութիւններով, բանաստեղծութիւննե-
րով, արձակ էջերով պէտք է ընթեր-
ցողներուն մօթին ու հոգիին աչքերը
բանայ: Ասով մարդ իր շուրջը անցած
դարձածը կ'ըմբռնէ, ու նաև կեանքի
կռիւին մէջ յաղթական ելլելու համար
անհրաժեշտ առողջ գաղափարներով
ձուլուած աշխարհայեցողութիւն մը

կրնայ իւրացնել: Մեր ընթերցող հասա-
րակութիւնը այսօր անօթին է գաղա-
փարներու, զորս անոր մէջ ներարկե-
լու դերը ունի գրականութիւնը: Ու-
րեմն, գիտնալով պէտք է քիչ մը
մէկ կողմ ձգենք մեր լայն մտածողի
հաւակնութիւնները և քիչ մը նեղ (!)
մտածելով մտնենք մեր հասարակու-
թեան զարգացման պայմաններուն մէջ,
փնտռելու համար այն դարմանը, որով
թերեւս յառաջիկային յաջողէինք ամս-
քել իր մտաւորական անարիւնութիւնը:
Մեր գործարանաւորութեան մտաւորա-
կան մասին մէջ բոյն դրած այսօրուան
այս անարիւնութիւնը կրնայ տակաւ մեր
ընդհանուր կազմուածքին սպառնացող
հանգամանք մը ստանալ, ու այն ատեն
երբ ընդհանուր անարիւնութենէ մը վա-
րակուինք, ալ նոյն իսկ կը դժուարանայ
մեզ համար, առողջ գաղափարներու ըն-
տելանալու բարձրութեան մը հասնիլը:

Մեր ներկային համար շատ յոռետես
չեմ ես, ոչ թէ անոր համար որ զար-
գացման քիչ թէ շատ գոհացուցիչ պայ-
մաններու մէջ կը գտնուինք, այլ այն
պատճառով որ ընդհանուր բարուց ապա-
կանութիւն մը չէ հասած տակաւին և
թափանցող ակնարկ մը կրնայ անմիջա-
պէս համոզուիլ որ մասնաւորաբար ձգգ-
տում մը ունեցող գրականութիւն մը
ամէնէն աւելի անհրաժեշտ է մեզի հա-
մար: Գեղեցիկը գեղեցիկին համար ըսե-
լով մեր ուժերու վատնումը բոլորովին
աննպատակայարմար է մեր հասարակու-
թեան զարգացման աստիճանին, եւ
եթէ չենք ուզեր որ անիկա տղայ մնայ
միտքով պէտք է որ բոլոր գրելու հա-
ւակնութիւն ունեցողները փանթեղիստ-
ներու երամակէն զատուելով, իրենց
նպատակ ընտրեն մեր ժողովուրդին զար-
գացնող, առողջ օգտակար գաղափար-
ներ ներշնչելը, բան մը որուն այնքան կա-
րօտ է ինքը:



ԱՐԴԻ ԹԱՏՐՈՆԸ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԷՁ

ՔԱՍԹԱՆԹԻՆ ՄԱՔՐԻՍ



ՈՅՆ իսկ ներկայ օրերուս մէջ յունական թատրոնը իր վերջնական դիմագծութիւնը չէ ստացած տակաւին : Թատերական խումբերը, կամ ինչպէս որ Յունաստանի մէջ կը կոչեն թիաւները բեմին վրայ չեն ներկայացուցած բնաւ նոր Յունաստանի այն բոլոր արտադրութիւնները, որոնք իբր թատերական գործեր արժանի կրնային ըլլալ ծախահարութեան : Իսկ գալով Յունաստանի ժողովուրդին, անիկա սիրող է թատրոնին, առանց անոր մասին յստակ գաղափար մը ունենալու եւ սիրով կ'ընդունին ինչ որ բեմէն իրեն ներկայացուի :

Պուքրէշի մէջ է միայն որ առաջին անգամ ըլլալով ներկայացուած են յունական արդի թատերգութիւնները. ճիշդ այն տեսակ տեսն մը, ուր Ռուսմանիոյ մայրաքաղաքը բնակավայրն էր յոյն գիտուններու եւ գրա-

գէտներու, ճշմարիտ կեդրոն մը դարձած ըլլալով արդի Յունաստանի խնայականութեան Եանկարծ գոյութիւն ստացող այս թատրոնին կազմակերպիչները բարձր նպատակ մը ունէին եւ զայն պահեցին մինչեւ վերջը : Ժաք Ռիզոս Ռանկավիս որ երբեմն, իբր ուսուցչապետ, համալսարանի բեմէն կը բացատրէր, հին ժամանակներու անմահ գլուխ-գործոցները, այս ձեռնարկի գլխաւոր շարժիչներէն մէկը եղաւ, եւ չնորհիւ իր հօրեղոր Ալէքսանդր Սուճօի (Ալէքս Վօտա) աջակցութեան, յաջողեցաւ հիմնել այս յունական թատրոնը, զոր ինք կը նկատէր մին այն գլխաւոր լծակներէն որոնցմով իր նախկին զարգացումէն եւ քաղաքակրթութենէն վար ժողովուրդ մը նորէն անոնց կը ձգտի : Իրեն համոզումով թատրոնը այնքան օգտակար պէտք էր ըլլալ որքան բարձրագոյն վարժարանները որոնց հիմնարկողը եղած է ինք նմանապէս, եւ ուր կոչած է իբր ուսուցչապետ, իր ժամանակին ամէնէն նշանաւոր յոյն գիտնականները : Հելլենական վերածնունդի այս պզտիկ տե-

սարանին մէջ երեւցած են բաւական կարեւոր անձնակերպութիւններ, ինչպէս Սօմաքիս որ ժամանակակից յունական թագաւորութեան սկիզբներուն նախագահն էր Աթէնքի վճռարեկ ատենին եւ շատ ուրիշներ :

Աւելի վերջերը, Օթօն Ա. թագաւորին ատեն, նախ Նաուրիի եւ յետոյ Աթէնքի մէջ Ալէքսանդր Ռանկավիտ, Սուժօ երկու բանաստեղծները, Օսֆանիտէս եւ ուրիշներ, գեղարուեստական ճշմարիտ եւանդով մը, աշխատեցան Յունաստանը օժտել տեւական թատրոնով մը, բայց, դժբաղդաբար մինչեւ այսօր չեն յաջողած ներդաշնակ թատերական խումբ մը կազմակերպել : Այսուհանդերձ խիստ շահեկան է ուսումնասիրութիւն մը բոլոր այն սկսնակութիւններուն (début) վրայ, որովհետեւ այդ միջոցով կարելի է ըմբռնել ներշնչումներն այն բոլոր Յոյներուն, որոնք իրենց երկրին տեւական բան մը տալու համար այնքան երազած ու այնքան ալ աշխատած են :

* * *

Այսօր աւելի պաշտօնական գոյն ունեցող ձեռներեցութեան մը հանդէպ կը գտնուինք, որովհետեւ նոյն ինքը Գէորգ թագաւորը իր ձեռքը առած է այդ գործը : Իր՝ Բաթրասի մէջ յունական ամէնէն նշանաւոր ողբերգակ գրող Տիկին Էվանթէլին Բառասքէվօրուլօի ըսած խօսքերուն գործն ալ կցելով Գէորգ թագաւորը յունական նոր թատրոնին տնօրէնը կը կարգէր Յունաստանի ամէնէն ծանօթ գրագէտներէն մին, Անձէլօ Վլաքօ, եւ անոր կը յանձնէր գործին կազմակերպութիւնը : Իրեն օգնական ունենալով Ս. Սթէֆանօ բանաստեղծը, որուն ընդհանուր քարտուղարի պաշտօնը տուաւ. Պրն. Վլաքօ կը որոշէր յունական բեմը Բօմֆէսի Ֆռանսէզի տիպարին վրայ չինել :

Միանգամ ընդ միշտ ըսենք որ եթէ այդ մեծ բեմը, միակը որ արժանի էր այդ անունը կրելու, գոյութիւն ստացած չըլլար, ամէն կողմ Յունաստանի մէջ, ուր յունարէն լեզուն կը հասկցուէր. պիտի ներկայացուէին յունական կտորներ : Այն ատեն քիսաներ կը կազմուէին որոնք ապագայ դերասաններ

րէն չէին պահանջէր բան մը որ յաշա արուեստին անհրաժեշտ էր : Այսպէս կազմուած խումբեր կը պատէին յունական քաղաքները, իրենց խեղճ ներկայացումներու ցուցակովը որոնք ուրիշ բաներ չէին բաց եթէ օտար լեզուներէ թարգմանուած ստորին տեսակին պատկանող կտորներ, առանց բացառապէս ուժով եւ ինքնուրոյն գործ մըն ալ թարգմանելու, որովհետեւ կը վախճային որ ատով դժգոհ կը ձգէին հանդիսականները եւ կը վախճնէին դայան. քանի որ անոնք չունէին կատարեալ կրթութիւն մը եւ շատ քիչ բացուած էին բարձր դաղափարներու որոնք չեն ստացուիր առանց մաքրի որոշ մշակման եւ աշխատութեան : Այս պայմաններուն մէջ կը խաղային Տ. Էնըրիի եւ ուրիշ երկիրներու համանման հեղինակներէ թարգմանուած կտորներ, որոնք երկար ատեն միայնակ կ'երեւային պատի ազդեցութեւ վրայ եւ որոնք գրեթէ միայն կը ծափահարուէին հասարակութենէն : Յունական թատրոնը չըլուն էր միեւնոյն ատեն, մղուելով հովերէն որոնք զինքը երբեմն հոս երբեմն հոն կը նետէին :

Բայց հակառակ այս խեղճութեան եւ այս թափառական կեանքին, այդ դերասաններուն մէջ կը գտնուէին այնպիսիներ որոնք իրենց զօրարին կոչումին կը կցէին նաեւ մտաւորական կապ մը, բուն եւանդ մը, բան մը, որ մէկէ աւելի անգամներ ստուգուած մեծ ու կարեւոր արդիւնքներ ունեցած է, ազատելով զիրենք այնքան խղճալի կերպով նեղ գծուած սահմաններէն ու ճակատագրային միջակութենէ : Իրենցմէ շատեր տաղանդ մը, նոյն իսկ մեծ տաղանդ մը եղած են, որովհետեւ ոչ միայն յաջողած են ընդունել տալ, այլ եւ յաղթանակել այս գրեթէ անգործողին. անոր յոյս տալով բարձր արուեստին խօնութիւնը : Բայց այդ աստիճանին հասնելու համար անլուր դժուարութիւններու հարկադրուած են յաղթել : Այսպիսիները դժբաղդաբար բացառութիւններ են, որոնք իրենց փառքին մեծնալուն հետ տղտի տեսնէին նաեւ յունական թատրոնին բարձրանալը, եթէ բոլորովին յաւակնութիւններու անձնատուր չըլլալով խումբերու գլուխը չանցնէին, եւ իրենց հետ թշուառութեան ճամբուն մէջ չ'առաջնոր-

դէին կարգ մը խեղճ մարդիկ, որոնք յուսախափութիւններու ենթարկուելէ վերջ, միայն տաղտուկ մը ունին, իրենց օրական ապրուստը ճարել, կը յիշեմ, վերջերս Դանուբեան քաղաքի մը մէջ թիառական գերատաններէն մէկուն պատահած ըլլալս, որոնց կատակերգական խաղերուն վրայ յաճախ զարմացած եմ: Իրեն հետ թատրոնի վրայ խօսեցանք, եւ ես հաճոյքով կը լսէի իրեն: Բայց շուտով կը զգայի խոր, գառն արտութիւն մը երբ կը տեղեկանայի այն բոլոր անյաջողութիւններուն որոնց ենթարկուած էր ինքը: Սակայն իր խօսքերը աւելի տխուր եւ աւելի դառն էին քան թէ իմ կրած տպաւորութիւններս: Անոնք իմ ականջիս կը հնչէին այնքան աւելի արամօքէն որքան կը խառնուէին մեծ գետին ազմուկներուն, որուն ալիքները դարիւ դարիւ կը սահէին: Այս խեղճ մարդոց բազմիկ գաթանութիւնը կը տեսնէի այն բանին մէջ, որ ոչ ոք այդ մարդոց արժէքը կը գնահատէր եւ կը մտածէի թէ գրեթէ դիւցազնական ճիւղերու պէտք կար վերհիմնելու համար յուսական բեմը, երբեմն այնքան փառաւոր:

* * *

Արդի յունական թատրոնին համար առաջին անգամ դրողներու շարքին՝ Ալեքսանդր Ռանկավիտի գէմքը կը գծուի իբր գրականութեան մեծ ժողովրդականացնողը Յունաստանի մէջ, գործի մարդ մը որուն անունը չէ կարելի մոռնալ երբ խօսքը կը դառնայ Հելլենացիներու հայրենիքին մէջ եղող մտաւորական որ եւ է շարժման մը վրայ: Քօսթի Բալամոս որ Յունաստանի ներկայ նշանաւոր բանաստեղծը ըլլալով հանդերձ է նաեւ հիանալի քննադատ մը, խօսելով Ռանկավիտի վրայ կ'ըսէ թէ անոր մեծ գործերը միշտ հոյակապ պիտի թուին Յոյներու աչքին, ոչ թէ իրենց գեղեցկութեան եւ կատարելագործութեան համար, բայց որովհետեւ անոնք խկութիւնը եւ ծագումն են այն բոլոր մտաւորական շարժումներուն որոնք իրմէ վերջ Յունաստանի մէջ տեղի ունեցած են: Եւ ասիկա անոր համար չէ որ Ռանկավիտի ըրած գրականութիւնը գաղափարներու բարձրութեամբ կամ արտայայտութեան ինքնատուրութեամբ կը տարբերի

միւսներէն: Ընդհանրապէս նոյն իսկ կարելի է ըսել թէ իր ամէնէն աւելի հռչակ հանած կտորներուն մէջ գեղադիրտական զգացումը կը բացակայի: Մարդ Ռանկավիտի գրածներուն մէջ կը գտնէ անյեղի միանուագութիւն (monotonie), ընթերցումներէ թելադրուած նիւթեր, հրահանգիչ գրութիւններ, սակայն վարդապետական (dogmatique) կերպով մը: Իր դրած թատերագութիւններէն ամէնէն ինքնատիպը Այց մը Արամուզդինն է ապահովաբար: Բայց այն կտորը որ փրկած է Ռանկավիտի անունը եւ մանաւանդ զայն մինչեւ այսօր ներկայացումներու ցուցակին մէջ պահած, իր քաղաքական գոյն ունեցող կատակերգութիւնն է Քուքուշիի ամուսնութիւնը որ արդի Յունաստանի թատերական գրականութեան մէջ կ'ապրի: Այս թատերագութեան նոյն իսկ տիտղոսը առածի կարգ անցած է, եւ յաճախ կը դորձածուի խօսակցութեան մը մէջ, ցոյց տալու համար ամէնէն սոսկալի իրար անցում մը:

Աւելի վայելուչ, աւելի քնքուշ կը ներկայանայ մեզ Սրբոս Վասիլիատի բանաստեղծը որ ծնած է Բաթրասի մէջ եւ որ 1874ին Բարիզ գտնուած միջոցին կը մեռնէր: Վասիլիատի կը պատկանէր Յունաստանի ընտրեալ վիպագիրներու դասակարգին: Բայց իր բարձրութիւնը գլխաւորաբար կ'արդարանայ իր թատերագիրի գործունէութեամբ: Յունական թատրոնին համար ամէնէն գեղեցիկ երազները ունէր: Իր թատերական գաղափարները գետեղած է իր թատերագութիւններուն այնքան շահեկան մենախօսութիւններուն մէջ, բայց իր վաղահաս մահը կ'արգիլէր զինքը իրագործելէ ամէն բան զոր ծրագրած էր: Արդի Յունաստանի գրականութեան մէջ իրմէ կը մնան այսօր Քաշերիկ, Լուֆա Նոսարոս, Կաշաք, Բանդազուշանֆ, Իքսիլանդիս, Սիւմեթի, Անալքի: Իսկ ինչ որ իրեն առաջին տեղը կուտայ, արդի Յունաստանի բոլոր թատերագիրներուն մէջ, այն գեղեցիկ տառն է, որուն ներշնչումը բանաստեղծը առած է Բիւկմալիտի հին առակէն, եւ նաեւ ժողովրդական երգ մը Անհարաստիլ կիկը: Այս կտորը այնքան հիացողներ ունեցած է, որ անոնք ինչան գնահատման իր ծննդավայր

քաղաքին մէջ իր արձանը կանգնել տուած են : Վասիլիատիի գլուխ գործոցը թարգմանուած է Ֆրանսերէնի Տիկին ժիւլիէդ Ատամի կողմէ եւ յաջողութեամբ ներկայացուած է Բարիզի Օտէնի թատրոնին մէջ :

* * *

Ինչ որ Պիքէլաս ըրած է վիպագրութեան համար , Պէռնարտաքի զայն իրականացուցած է արդի Յունական թատրոնին մէջ , զոր վերածնած է : Ծագումով Կրէտացի , եւ 1833ին Միդիլէնի մէջ ծնած , Պէռնարտաքի նախ Աթէնքի համալսարանին գրականութեան ուսուցչակետ կարգուած է . ինքն է միեւնոյն ատեն արդի Յունաստանի դասական բանաստեղծը : Հմտութիւնը տաղանդին միացնելով , գրած է գեղեցիկ ողբերգութիւններ , անոնց մէջ ինքը յայտնուելով իբր բեմի վարպետ մը , եւ իր լեզուի արուեստագէտներէն մէկը : Ոչ միայն հետեւած է հին հեղինակներու , անոնց գաղափարները վերակենդանացնելով , բայց բեմին վրայ նորէն կեանք տուած է պատմական անձնաւորութիւններու որոնք իրենց ապրած ժամանակին մէջ իրենց գործերով նշանաւոր հանդիսացած են : Իր Մեռոպէն , Մարիա Տոփաքարին , Էօփրոզիւնը , Փառուդան հիանալի յաջողութիւն մը ունեցած են : Պէռնարտաքի շատ հին Յուն մըն է որ արդի Յոյներու միջավայրի մը մէջ կ'ապրի : Ժողովուրդը զինքը Լեսպոսի ճգնաւորը անուանած է , որովհետեւ հեռու յունական գործունէութեան կեդրոնէն կը բնակի իր Միդիլէնի խաղաղական կղզիին մէջ , միայն իր ուսումնասիրութիւններովը զբաղած եւ միայն իր հին սիրելի հեղինակներուն հետ ապրելով : Շատ հազուադէպ կերպով Աթէնք կուգայ , ներկայ գտնուելու համար իր թատրերգութիւններու վարժութիւններուն , ընտրելու համար գերասանները որոնք գլխաւոր դերերը պիտի կատարեն : Փառուդա , իր վերջին գործը , որ արդէն ուրիշ շատ մը լեզուներու թարգմանուած է , նմանապէս ողբերգութիւն մըն է : Անոր մէջ բանաստեղծը եւ հմուտ մարդը միացած են իրարու հետ ուսումնասիրելու համար չորրորդ դարու այս ալէկոծ հոգին : Մեծն Բոնաթանդին կ'ամուսնանայ , եր-

րորդ ամուսնութեամբ Փառուդաի հետ : Ֆէտրիպէս Փառուդա եւս՝ ազգապիղծ սէրով մը կը վառի Քրիստոյի համար , որ իր ամուսնոյն որդին է . եւ երբ Քրիստո կը մեռնի , Փառուդա կը թունաւորէ ինքզինքը : Պէռնարտաքի յանգաւոր տողերով հոյակապ պատկերալից գեղեցկութեամբ թարգմանած է կեղտական գրեթէ վայրենի այս սիրող կնոջ կիրքը : Այս ուեստը եւ ճարտարութիւնը կը միանան այս թատրերգութեան մէջ որով հեղինակը գրած է իր գլուխ գործոցը , փողփողուն հարստութեամբ :

Փառուդան որ յունական թատերական ցուցակի մէջ ամէնէն յաջող կտորն է , պատճառ եղաւ որ երկու մեծ ողբերգուհիներ Տիկին Էվանկէլինա Բառասքէվօրուլօ եւ Օրի Էքաղէոինի Վէոսի զիրենք չըջապատող մութէն զուրս ելլէին : Փառուդան նոյնքան գեղեցիկ կերպով ներկայացնող երկու մրցակիցներ եղած են ասոնք : Տիկին Բառասքէվօրուլօ , մեծ տաղանդի տէր արուեստագիտուհի մը , մինչեւ այն ատեն անձանթ մնացած , մէկ անգամէն նշանաւոր դարձաւ տիեզերական համակրութեամբ մը չըջապատուելով , մեծ ոգեւորութեամբ ընդունուած բովանդակ արդի Յունաստանէն , որ զայն Սառա Պէռնարի հետ կը բաղդատէ :

* * *

Օգոստ. 20 1890ին Յունաստանի թերթերը կը յայտնէին Քոռոմիլայի մահը : Այս անձը մեծ կարողութեան տէր մէկն էր եւ իր հարստութիւնը թոյլ կուտար իրեն , իր ճաշակին համաձայն ապրելու : Քոռոմիլա ինքզինքը տուած էր գրականութեան եւ գլխաւորաբար թատրոնին : Ինքնուրոյն եւ ազնիւ անձնաւորութիւն մը եղած է : Իր բոլոր թատրերգութիւնները յայտնապէս կը ձգտէին յունական թատրոնի վերաշինութեան . իր անունը արդէն իր գործերով ճանչցուած՝ երկար ատեն Յունաստանի մէջ պիտի ապրի , եւ մարդ կրնայ իրեն համար ըսել թէ թատրոնական շարժումին հոգին եղած է : Բոլոր գրական հրատարակութիւնները , հանգէտները , օրաթերթերը , տարեգրութիւնները զինքը իրենց աշխատակիցներուն մէջ կը հաշուէին , ոմանց տաւամ մը կուտար , ուրիշներու կատա-

կերպութիւն մը , հովուերգութիւն մը եւլն . Այս անաղարտ ակնարկներ , անխոնջ աշխատող մը , յաջող կերպով ձեռք զարկած է գրական բոլոր սեւերուն , բայց ամէնէն աւելի մանաւանդ հիւսնալի ճանչցող մը եղած է բեմական արուեստին : Շատ գրած է , եւ այս տարապայման առատութեան հետեւանօք իր գործերուն մեծագոյն մասը բաւական միջակ բաներ եղած են , բայց անոնցմէ ոչ մէկը անկատար կարելի է նկատել բեմական կարգադրութեան տեսակէտէն : Բանկաւայի , Անաբրեոն , Բեռլիքեսի մանր , Բեռնե եւ Անտրուիս այս տեսակէտով լաւ կտորներ են : Քուռովա ունի սակայն երկու թատերադրութիւններ որոնք անհուն յաջողութիւն մը ունեցած են եւ որոնք մինչեւ այսօր այն ամէն տեղերը ուր կը ներկայացուին , եռանդագին կ'ընդունուին , Միջերկրականի եղերքներէն սկսելով մինչեւ Ալգոֆի խորերը : Այն երկու կտորներէն առաջինն է Մառուշայի հարստութիւնը եւ երկրորդը Հովուիսի սիրականը . իբրեւ գրական արտադրութիւն մեծ բան մը չարժեք առաջինը բայց այնքան զուարթ , այնքան զուարճացնող , այնքան սրամիտ է ու ամէն անգամ այնքան կը ծափահարուի որ միշտ կը ներկայացուի :

Հովուիսի սիրականը աւելի կարեւոր գործ մըն է : Ամբողջ Յունաստանը գիտէ Զալաքոսդաի հետեւեալ երգը .

Հովուիսի մը սիրեցի , շատ գեղեցիկ աղջիկ մը — Այն ատեն պզտիկ Յուլուն մըն էի եւ միայն տառը տարեկանս — Օր մը երբ ծլած խոտին վրայ նստած էինք — Մարքօ , ըսի իրեն , կը սիրեմ քեզի : Մարքօ , քեզի հետ պիտի ամուսնանամ . — Մարքօ ձեռքը մէջքիս դնելով բերնէս համբոյր մը առաւ — Եւ ըսաւ ինծի . սիրոյ հաւաքանքներուն եւ վիշտերուն համար դուն տակաւին շատ պզտիկ ես : — Շատ տարիներ անցած է անկից ի վեր , անկիւս ուրիշի մը հետ ամուսնացած է — Բայց ես չեմ մոռնար երբէք իր այնքան քաղցր համբոյրը :

Քուռովա այս երգէն ներշնչուելով գրեց իր այնքան չքնաղ հովուերգութիւնը Հովուիսի սիրականը : Տառ տարեկան սիրահարը , պզտիկ թուշունը հիմա գեղեցիկ մարդ մըն է , շատ հարուստ , բայց իր առաջին սէրը իր յիշողութենէն եւ իր սրտէն չէ սրբութեամբ ընաւ : Դժբաղդ է . ամբողջ Յունաս-

տանի մէջ կը ճամբորդէ հանդիպելու համար իր հովուիսիին որ ատեն մը իրեն երազել կուտար : Վերջապէս կը գտնէ դայն , բայց աւա՛ղ . ծերացած , եւ իր աղջիկը այնքան գեղեցիկ այնքան հրապուրիչ որքան ա՛յն որ ատեն մը , երբ ինք տասը տարեկան էր միայն իր քովը կը նստէր , ծաղկած դալարին վրայ , իր աղջիկը չի նայիր իսկ իրեն : Սիրահարուած է անիկա , ան ալ հիմա իրմէ աւելի պզտիկ ուրիշ տղու մը վրայ : Ինչ որ մեծ եւ գեղեցիկ է այս ճշմարտապէս յունական թատերադրութեան մէջ , Միգսօ սիրականին նկարագիրն է այն , որուն հեղինակը կուտայ վեհ , ազնիւ ու քաջ հոգի մը , որովհետեւ Միգսօ մէկն է այն բալիքառներէն զորս արդի Յունաստանի ժողովրդական երգերը անմահացուցած են :

* * *

Յանձին Ալեքսանդր Ռանկավիսի որդւոյն Քլովիս Ռանկավիսի , բիւզանդական դարաշրջանը ոգեւորուած հիացող մը ունեցած է , Թեոքրոտոս , Հեռաֆիլոս , Աքեմիի դիստրիկ գեղեցիկ կերպով կազմուած կտորներ են եւ չեն թերանար ընաւ լեզուի մաքրութեան պակասութեամբ , բան մը որ յաճախ կը պատահինք արդի յունական հեղինակներուն քով : Բայց այս կատարելութիւնը կամ աւելի այս վնասաւորութեամբ բան մը ըսելու համար , կը կազմեն Քլովիս Ռանկավիսի թերութիւնը : Իր գրչի տակէն վտարած է ժողովրդական ասութեան ձեւին ասկէ եղած բոլոր բացատրութիւնները , իր բառերը ընտրելով ճիշդ այն ագահին պէս որ իր բովանդակ ինչքը ոսկիի կը փոխէ իր գանձուց փայլը վայելելու համար : Այսպէսով կազմուած է լեզու մը , բուրովին անձնական , բիւզանդական ասութիւններով եւ յարակարծիքներով (paradoxe) լեցուն : Բաց աստի այն չափազանց խնամքը որով կը գրէ իր թատերադրութիւնները զայն աւելի ընթերցանութեան յարմար կ'ընեն եւ ոչ թէ բնմին : Եւ այս է պատճառը որ Քլովիս Ռանկավիսի արդի Յունաստանի կարեւոր գրագէտներուն կարգը դասուելով հանդերձ նկատողութեան չառնուիր իր թաանրագիր : Մէկ խօսքով իր թատերադրութիւնը կ'ընդունա-

ուի տեսակ մը ցրտութեամբ . անհաճոյ չէ , բայց չի ծափահարուիր :

Միեւնոյն բանն է նաեւ Քամուրոսիլօի մասին , հեղինակ Աթէնքի պատմութեան որուն մէկ տաւմը Միֆէլ Բօլքադսա որուն նիւթը առնուած է Աթենական տարեգրութիւններէն եւ կարիտասիւններու (cariatide) վրայ ժողովրդական աւանդովէպէ մը : Այս թատերագութեան մէջ հեղինակը կը վերկենդանացնէ մերին շատ մօտ ժամանակի մը անձնաւորութիւնները , որոնք սակայն այնքան քիչ ճանչցուած են , եւ կը քրքրէ այս դարու սկիզբի Աթենական կեանքը :

* * *

Զմոռնանք Պապի Աննինօն , թատերագիր հեղինակ մը որ որոշ ազգակցութիւն մը ունի չքնաղ Քուռզըլինի հետ եւ որ այսօրուան Յունաստանի թատերական գրականութեան մէջ իրեն համար կարեւոր տեղ մը բռնած է : Իր երգիծանքը (humeur) շնորհալի նրբութիւն մը ունի եւ որ կ'երեւայ իր բոլոր գրուածներուն մէջ որոնք պզտիկ դուարթ պատմութիւններ են սրամտութեան կայծերով լեցուն : Իր երկու կատակերգութիւնները Սպարտաքոս մը կը խնդրուի , Լեոնիստաի յաղթանակը այս սեպին մէջ իրաւամբ լաւագոյններէն կը նկատուին : Ասոնցմէ առաջինը շատ սիրուն է :

հեղինակը անոր մէջ կը ջանայ ժամանակակից Յունական նկարագիրներ դուրս հանել , զայն իբր տիպարներ ներկայացնելու համար : Պապի Աննինօ Աթենացիներու ուրախութիւնն է :

Ուրիշ գրագէտներ եւ բանաստեղծներ կը գրաւեն ամէն անոնց ուշագրութիւնը որոնք Յունական ներկայացումներու ցուցակը կ'ուզեն հարստացած տեսնել նորագոյն գեղեցիկ ու տեւական գործերով : Ամէնուն մէջէն պէտք է յիշել Ժան Բօլէմիս , այն չքնաղ բանաստեղծը , կիներէն շատ սիրուած , արդէն հեղինակ Թրուպատուրի . յետոյ Սթրազիկի եւ ուրիշներ :

Պէտք է նաեւ յարգանք մատուցանել այն անխոնջ ջանքերուն համար որով Պիքէլաս Վլաքօ եւ ուրիշներ աշխատած են խղճամիտ թարգմանութիւններով օտար գրականութիւններու գլուխ գործոցները ներկայացնել յունական բեմին վրայ : Սոյն թարգմանութիւնները առիթը տուած են դերասաններուն որպէս զի անոնք ոգեւորուին Գեղեցիկով եւ Շէյքսպիրեան , Իպսէնեան եւ ուրիշ կտորներու մէջ դէպ ի այդ բարձրութիւնները ձգտին : Ասոնցմէ կարեւորագոյններն են՝ Լէքասազ , Ֆէլիքս Պօնասէրօզ , Տէնիս Թալուլարիս , Սրիս Թալուլարիս , Էվանկէլիս Բանթօքուլօս , Ն. Բառասքէվօքուլօ , Տիկին Բառասքէվօքուլօ , Այք . Վէռոնի եւ շատ ուրիշներ :

ԴԱՍՄԸ

— 330 —

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ



ԹՆ վատհոգի ու ցած մարդոց պէս , որոնք խարազանի հարուած մը ուտելուէն ետքը կ'ամբափակուին տեղ մը եւ հոնկէ կը հայհոյեն , Բիւզանդ Քէչեան ըստած արա-

րածը իր թերթին օգոստոս 14ի թիւին մէջ պզտիկ թղթակցութեան մը ձեւին տակ հետեւեալը գրած է Մաւիսի՝ « եւ իր աշխատակիցներուն համար :

« Կարգացինք . Բայց կ'կարծէ՞ք որ պա-
« տասխանենք այնքան տղայական խօսքերու
« Փողոցներու մէջ ամէն օր կը տեսնենք այդ
« տեսարան : Զիով գացողին ետեւէն կ'հա-
« ջեն շուները : Ասոնք այնքան աւելի
« սաստիկ կ'հաջնին որքան արագ կ'երթայ

« ձիաւորը : Մեք կ'ցաւինք միայն գրական
« այն խղճալի վիճակին վրայ ուր իջեր է հին
« եւ պատկառելի թերթ մը՝ թերուս եւ թե-
« րակիրթ իմաստականերու ձեռքը մնալով :
« Ինչո՞ւ կ'ղարմանան սր չեն քաջալերուիր
« եւ ի մօտոյ պիտի հարկադրուին « Հանդէս »-
« նին դադրեցնել՝ ընթերցողներու չգոյու-
« թենէ (! ! ! ? ?) : Ինչո՞ւ կ'ղարմանան : Ըն-
« թերցատէր հասարակութիւնն հիմակ իրենցմէ
« աւելի ունի գրական ճաշակ : »

* * *

Բայց դո՞ւք էք այս տողերը գրողը , Բիւ-
զա'նդ Քէչեան , դո՞ւք էք ասոնք ըսողը ,
դո՞ւք էք , անանկ չէ՞ :

Եւ սակայն կը մօռնաք թէ ատանկ բան
մը կարենալ ըսելու համար հեղինակութիւն
մը պէտք է ունենաք , որոշ , մեկին , ու
հիմնաւոր հեղինակութիւն մը՝ որ ամբողջ
տարինէր քաղաքական լուր թարգմանելէ շատ
վեր բան մըն է :

Այդ հեղինակութիւնը չունիք դուք , Բիւ-
զա'նդ Քէչեան : Վեր հանելէ առաջ այն աղ-
տոտ հոգին՝ որ ձեր վերոյիշեալ գրուածքին
տակ ծածկուած է , ընդհանուր դիժերու մէջ
պիտի ամփոփեմ ձեր գործունէութիւնը՝ ապա-
ցուցանելու համար որ դուք չունիք այդ հե-
ղինակութիւնը : Եւ այս աշխատութիւնը կը
կարծեմ որ օգտակար ըլլայ ձեզի , որովհետեւ ,
— ինչպէս կ'իրեւայ , — գրիչը ձեռք առած
ատենիդ կը մոռնաք ձեր կեանքին հայելին
նայելու , ընդելուզուելու բոլոր այն բաներուն
մէջ՝ որոնք Բիւզա'նդ Քէչեանը կ'որոշեն : Ու
կրկին պատիւ մըն է ասիկա ձեզի համար ,
պատիւ մը՝ զոր չպիտի ընէի ընաւ եթէ եր-
բեք մեր հասարակութիւնը ինքնին կարող
ըլլար ընդհանրապէս մարդիկն ու իրերը դա-
տելու :

Այն օրէն ի վեր ուր Բիւզա'նդ Քէչեան
անունը անհատական ձեռնարկի մը կապուե-
ցաւ ու Բիւզանդիոն սկսաւ հրատարակուիլ ,
մենք ամէնքս սա տխուր իրողութեան ա-
կանատես եղանք թէ ինչ որ գրական ըմբռ-
նում կար մեր ժողովրդին քով , ինչ որ ճա-
շակ ներարկուած էր անոր ու քիչ շատ ալ
գեղադիրտական ըմբռնում , յանկարծ խեղ-

դուեցաւ , անհետացաւ՝ անելի ըլլալու աս-
տիճան ստիպակ , սահմանափակ մտքի տէր
մարդուկի մը , մինչեւ եղունգներուն ծայրը
խանութպան մարդուկի մը գրուածքներուն
հետեւանքով : Եւ դո՞ւք էք այդ մարդուկը ,
Բիւզա'նդ Քէչեան , դո՞ւք :

Մօտաւորապէս երկու տարի մինակ մնա-
ցիք լրագրական հրապարակին վրայ որ մեր
գրական հրապարակն ալ է , եւ այդ երկու
տարուան ընթացքին մէջ , ձեր թերթը՝ զըր-
ուած ըլլալով լեզուով մը՝ զոր մեր թուրք
հայրենակիցները պաշաղի կը կոչեն , դժբաղ-
դարար կրցաւ արմատ ձգել կարգ մը ձեզ-
մէ ոչ նուազ սահմանափակ միտքերու մէջ՝
որոնցմէ շատ ունինք դժբաղդարար :

Ձեւ ըսեր թէ ասիկա մի միայն Բիւզան-
դիոնի մէջ սկսաք . ձեր բովանդակ կեանքը
խուլ պայքար մը եղած է գեղեցկագիտու-
թեան դէմ , միշտ ջանացած էք խեղդել բո-
լոր այն բաները՝ որոնք գեղեցկին կը ձգտին ,
ինչպէս գրականութիւնն ու գեղարուեստնե-
րը : Քրքրեցէք ձեր յօդուածները ու պիտի
տեսնէք թէ անոնցմէ իւրաքանչիւրին մէջ
յարձակում մը կայ հինէն ի վեր՝ այս երկու
մաքուր դադումներուն դէմ սրունք երկրի մը
փառքը կը շինեն : Բայց ոչ մէկ ատեն անոնք
այնքան շեշտուած էին՝ որչափ Բիւզանդիոնի
հրատարակուիլ սկսած օրէն : Ու պատճառը
յայտնի է . որովհետեւ անկէ առաջ , մարդիկ
կային ձեր գլխուն վերեւ , խմբագրատան մէջ
պետեր ունէիք՝ որոնք կ'արգիլէին ձեր այդ
գեղեցկասպան տեսութիւնները՝ միշտ գրա-
կանութեան ու գեղարուեստի վրայ :

Ու մոլեգնած ձեր ձգտումներուն այդպէս
դսպուելէն , կուտակեցիք շարունակ , կու-
տակեցիք տարիներով այդ հակաբնական ա-
տելութիւնը գրականութեան դէմ , ու երբ
Բիւզանդիոն բաւական տարածուեցաւ , յան-
կարծ դուրս թափեցիք այդ տարիներու ըն-
թացքին մէջ կուտակուած , դիզուած աղան
ու նեխանքը՝ ձիւղ այն ջուրի հոսանքին պէս
որ իր առջեւ զրուած արդեւքին վերնալէն ետ-
քը ա'լ աւելի սառաիկ թափով մը կը ժայթքի :

Բայց զարմանալի չեմ գտներ ասիկա ,
Բիւզա'նդ Քէչեան : Ձեզի պէս մարդ մը՝ որ
մերկնին պէս ներող հասարակութիւն մըն է

գտած ու կրցեր է դիրքի մը տէր ըլլալ, դեռ չատ բաներ կրնայ ընել, Յանցանքը մեր այն ատենուան սերունդինն է ուրեմն որ ձեզի թող տուած է այդ դիրքը գրաւելու :

Եւ սակայն, այդ անցեալ սերունդին սը- խալը պէտք է որ մենք քաւենք, կը լսէ՞ք : Պէտք է այդ դիրքը առնել ձեր ձեռքէն. ձե- ղի չէ՛ ինկեր հասարակութեան մը մտաւոր զարգացման վարիչը ըլլալու գործը :

Կը կրկնեմ նորէն հոս. դո՛ւք խեղդեցիք մեր հասարակութեան զբաղման բովանդակ ըմբռնումն ու սէրը. ոճիւր մըն է աս, արդար ամբաստանութիւն մը՝ զոր ձեր ճակատին կը նետեմ. այո՛, դուք խեղդեցիք մեր հասարա- կութեան գրական ըմբռնումն ու սէրը : Եւ ի՞նչ տուիք փոխարէն, գիտէ՞ք արդեօք : Կրցա՞ք գոնէ անտեսական կեանքին եւ ընդ- հանուր մտաւոր զարգացման պատկանող so- lide դադափարներ ներշնչել մեր հասարակու- թեան, որպէսզի անիկա, ատոնցմէ օգտուելով, յաջողապէս կարենար իր բաժինը բերել երկրին ընդհանուր զարգացման մէջ : Բայց ինչպէ՞ս ընել այս ամէնքը, Աստուած իմ, քանի որ այդ բոլորը ընելու համար, չծխելով կամ չխմելով յիշողութիւնը թարմ պահելը բաւա- կան չէ, ոչ ալ գրիչ շարժելու պզտիկ դիւ- րութիւն մը, այլ կանոնաւոր զարգացման մը պէտք է հասած ըլլայ մարդ, շնորհիւ անտե- սագիտական եւ ընդհանուր իմաստասիրական հմտութեան մը. եւ այդ բանը ապահովաբար կը պակսի ձեր քով : Զեղի կը մնայ այս կէտը բացատրել. Լսէ՛ք ուրեմն մեզի թէ անհա- սապէս ի՞նչ ըրած էք դուք մեր հասարակու- թեան, ի՞նչ տուած էք անոր : Ասիկա կ'ու- ղէինք հասկնալ :

Բայց սպասելով Ձեր պատասխանին, ձեզի կ'ըսեմ թէ բոլոր ատոնց եւ գրականութեան ու գեղարուեստի պէս չինիչ, զարգացուցիչ զբաղումներու փոխարէն ի՞նչ տուիք մեզի. — Քաղաքական լուրերու մասին տարապայ- ման սէր մը որուն ուղղակի հետեւանքով մանաւանդ գաւառի ժողովուրդը իմացական յայտնի յետամնացութիւն մը ցոյց կու տայ այսօր : Ինչ հետաքրքրութիւն որ երբեմն կը յայտնուէր զուտ գրական ու զարգացուցիչ յօդուածներու մասին, ինչ նամակներ որ ատեն

մը գրական արտադրութեանց խնդիրքը կ'ը- նէին, այսօր բոլորովին այլանդակ առարկայ մը ու խնդիրք մը միայն ունին՝ որ մարդ կ'ընդգեցնէ. — « Քաղաքական լուր », կը պոռան ամէնքն ալ :

Եւ քանի որ դուք էք այդ խենդ սէրը ներշնչողը, ըսէք նայիմ թէ մենք, ըլլանք Պոլսեցի կամ դաւառացի, ի՞նչ օգուտ պիտի կրնանք քաղել Ձինկ — Փօնկ — Թուսկ, Նայ — Նինկ — Թաու — Փօնկ եւ դեռ չեմ գիտեր ի՞նչ դժոխային անուաներ կրող քաղաքներու կամ աւաններու մէջ պատահած դէպքերէն : Այդ remplissageի ճիւղը՝ զոր մտցուցիք մեր լրա- գրութեան մէջ եւ որուն դժբաղդաբար հետեւ եցան ձեր միւս պաշտօնակիցներն ալ, — քանի որ չարունակ խնդիրք կ'ըլլար, — ըսէ՛ք, ի՞նչ օգուտ կրնայ հայթայթել մեզի :

Իսկ այն ճաշակը զոր տուիք ձեր ընթեր- ցողներուն, շատ ողորմելի բան մըն է՝ զոր իր ամբողջութեան մէջ ներկայացնելու համար միակ կէտ մը երեւան պիտի հանեմ : « Բրո- նիկ » վերնագրին տակ երբեմն սիրուն բաներ կը գրուէին կամ կը թարգմանուէին մեր լրա- գրութեան մէջ. դուք այդ վերնագրին տակ գրել սկսաք օրինակի համար թէ Չէնկիլէրցի հաճի Մէրկէրիոսին աւանակը եւ կամ Մուն- ճուսունցի Թադոս տայիին ձին քանի՞ քու- ռակ կը ծնի :

Հիմա՛ որ ձեր ճաշակն ալ այսպէս մերկա- պարանոց ի յայտ եկաւ, որոշուեցաւ վերջ- նապէս թէ գեղագիտութեան տեղ ի՞նչ ներառ- կած էք ձեր ընթերցողներուն, կը հարցնեմ թէ այդ կերպով կ'արդարացնէք ձեր գոյու- թեան իրաւունքը, ըսէ՛ք մեզի թէ ի՞նչ օգուտ ունեցած էք, թէ ի՞նչ կը թողուք զոր կարե- նանք թուել :

Ես կը կարծեմ եւ ինծի հետ շատեր ալ կը կարծեն թէ գրականութեան ու լրագրու- թեան կրկին տեսակէտներով գոյութեան իրա-ւունքէ զուրկ մարդ մըն էք դուք, Բիւզանդ Քէչեան : Զեղի համար հրապարակաւ գրած եմ արդէն թէ « քնաւ չունիք սկզբունք ըսուած բանը եւ թէ ձեր բուն գոյնը թաքուն կը մնայ » : Այսօր կը կրկնեմ այդ խօսքս՝ աւելի յստակօ- ղէն բացատրելով թէ ինչո՞ւ համար գրած

եմ զայն : Եթէ երբեք քննաբար հետեւինք
ձեր կեանքին , զիտէ՞ք ինչ պիտի զարնէ աչ-
քերնուս . փորձեցէք անգամ մը դուք ալ , ու
միտաին կը համոզուինք : Պիտի տեսնէք մե-
զի հետ թէ ձեր պլորած իւրաքանչիւր տա-
րին նախորդին կը հակասէ , թէ այսօրուան
պաշտպանածնիդ , պաշտածնիդ վաղը կը դա-
տափեալէք , կ'ուրանաք , եւ դեռ չատ մը բա-
ներ ալ՝ ընդհանրապէս լրագրական ձեռնա-
ծութիւններ , զորս չեմ թուեր հոս :

Եւ սակայն , որովհետեւ ձեր կեանքին
լաբիւրինթոսը նոյն իսկ ձեզի համար շատ
մութ ու խառնակ անցքեր միայն ունի ,
փրկարար դերձան մը տա՛մ ձեռքերնիդ՝ ա-
պացոյցներու կծիկ մը՝ զոր քանի քակէք ,
այնքան պիտի համոզուիք վերի պարբերու-
թեան մէջ ըսածիս : Երբեմն , կը յիշէ՞ք ,
օտակալի պայքար մը կը մղէիք Հայրենիքի
դէմ՝ սա անիծած « ազնուաշուք » տիտղո-
սին համար՝ որուն դործածութիւնը կ'ուզէիք
նուիրագործել . այսօր այդ տիտղոսին դէմ կը
գրէք ձեր թերթին մէջ . ինչո՞ւ արդեօք :
Որովհետեւ այժմ կաթէն կտրած է ալ , ա-
նանկ չէ՞ , որովհետեւ ձեր պնակալէզի , խըն-
կարկուի իւրաքանչիւր պաշտպանողական
յօդուածը դադրած է հասոյթի աղբիւր մը
ըլլալէ :

Հայրենիք ինչ որ կ'ընէր ատեն մը , դուք
ալ նոյնը կ'ընէք այսօր . հարուստներու դէմ
կը գրէք անոր պէս , Հիւանդանոցի հոգա-
բարձութեան օձիգը չէք թողուր , աջ ու
ձախ հարուածել կը ջանաք հանդիպածնիդ ,
վերջապէս բոլոր այն բաները՝ որոնց սխերիմ
թշնամին էիք երբեմն , եւ որոնց դէմ գրելու
համար սիւնակներ կը սպառէիք : Ինչո՞ւ այս-
պէս թքածնիդ կը լզէք :

Բոլոր ասոնք ըսելէ ետքը , նորէն կը
հարցնեմ ձեզի . — Ի՞նչ ըրած էք որ հիմնա-
ւոր , կայուն , որոշ հանգամանք մը ունենայ .
ի՞նչ արդիւնքի յանգած է ձեր այսչափ տար-
ուան գործունէութիւնը : Անգլիական թեր-
թերէ ընդհանրապէս սխալ հասկացողու-
թեամբ թարգմանուած քաղաքական յօդ-
ուածները չեն որ փառք մը պիտի բերեն ձե-
զի , ոչ ալ ձեր այնչափ համբաւաւոր à la
Holinsky կենսագրութիւնները : Հիմա հաս-

կցա՞ք արդեօք այն անգոյն ու պայմանադ-
րական դերը զոր ունեցած էք մեր իմացա-
կան զարգացման մէջ . ոչինչ մը՝ անանկ չէ՞ :

* * *

Հիմա կ'անցնիմ ձեր այն աղտոտ գրուած-
քին՝ զոր այս յօդուածին սկիզբը արտասպեցի ,
եւ զոր պիտի վերլուծեմ իր որոշ մասե-
րուն մէջ :

Բայց ըսէ՛ք նախ . խղճի խայթ մը չունե-
ցա՞ք զայն գրած ատեննիդ , ու մանաւանդ
չգգացի՞ք այն ահագին հակասութիւնը որ
յստակ կ'երեւայ անոր մէջ . « Թերակիրթ »
կ'ըսէք մեզի , ու տող մը վերը « չուն » կը
կոչէք Մախիսի բովանդակ խմբագրութիւնը :
Ա՛ս է ուրեմն ձեր ըմբռնած կրթութիւնը :
Նոյն իսկ բառերնիդ ձեզի չենք վերադարձնիր .
ձեզմէ շատ բարձր ենք արդէն ասոր չղիջա-
նելու համար եւ ամէնքս ալ լաւ գիտենք թէ
նախատինքները որչափ վարէն դան , այնքան
թեթեւ կը կշռեն : Միայն , անցողաբար դիտել
պիտի տամ ձեզի թէ մեզմէ ոչ մէկը իր մայրը
պարտաւորեցուցած է հրեայ բողբոս լուացքը
ընելու , կը լսէ՞ք , Բիւզանդ Քէչեան , մեզմէ
ոչ մէկը իր մայրը պարտաւորեցուցած է
հրեայ բողբոս լուացքը ընելու , ոչ ալ հայրը
հիւանդանոցին մէջ անօթի ձգելէ ետքը ,
դրամէ չելլելու համար յուղարկաւորութեան
չէ գացած : Լաւ լսեցի՞ք բոլոր ասոնք , կըր-
թուա՞՞մ մարդ :

Այս կէտէն դուրս , առաջին նողկալի՝ բանը
որ կայ ձեր գրածին մէջ , մրցման այն անու-
րակելի , անանուէն միջոցներէն մէկն է՝ զոր
վարժուած էք գործածել մեր միւս թերթե-
րուն դէմ , եւ զոր այս անգամ մեզի կը դար-
ձնէք՝ թէեւ ո՛ր եւ է մրցումի կապ մը՝ չի
գտնուիր մեր ու ձեր միջեւ : Ո՞վ ըսեր է
ձեզի թէ թերթերնիս չի քաջալերուիր , ո՞վ
ըսեր է թէ ի մօտոյ պիտի դադրեցնենք
« Հանդէս » նիս : Թերթի մը վարկը կոտրելու ,
անոր հիմունքը խախուտ ցուցնելու եւ ստո-
րագրուի ուղող բաժանորդները կասեցնելու
համար ասկէ աւելի վատ միջոց մը չկայ
կարծեմ : Եւ առաջին անգամը ու մինակ մեզի
դէմ չէ որ կը գործածէք զայն : Արեւելքի
համար միեւնոյն նսխատակով ըսիք թէ՛ sub-

ventionներ ունեցող թերթ մըն է , մինչդեռ դուք հաղար կտոր կ'ըլլաք ո՛ր եւ է subvention մը ձեռք ձգելու համար : Յիշե՛մ հոս բոլոր այն տեղերը՝ ուր դիմումներ ըրած էք այդ առթիւ : Սուրհանդակն ալ անմասն չմնաց . անոր ալ վարկը կոտորել ջանացիք՝ արտա-տրպելով անկէ Հայ-Կաթողիկոսական Պատրիար-քարանին լուրերը՝ որպէս զի ամէն մարդ անա՛նկ կարծէ՝ թէ կաթողիկի թերթ մըն է ատիկա : Եւ սակայն քանի՞ ընթերցող կրցաք պակսեցնել անկէ :

Իսկ թէ «Մասիս գրական խղճալի վի-ճակի մը մէջ ինկած է» եւ թէ «հասարակու-թիւնը մեղմէ ա՛լ աւելի գրական ճաշակ ու-նի» , ասոնք ա՛յն աստիճան խեղճ , ողորմելի ու դերադանցապէս ծիծաղելի յարձակումներ են , որ ամէն կարգացող իսկոյն ձեր վրայ է որ պիտի խնդայ : Հասկնալու համար թէ Մասիս խղճալի վիճակի մը մէջ չի դառնուիր , կրնաք բանալ անոր հաւաքածոն ու քիչ մըն ալ բաղդատութեան դնել Բիւզանդիոնի հաւա-քածոյին հետ . ան ատեն պիտի տեսնէք թէ որչա՛փ խախուտ յեռակէտի մը կրթնած էք : Գալով գրական ճաշակի տեսակէտին , կը զարմանամ որ Բիւզանդ Քէչեան մը ատանկ բոսեր կ'առնէ բերանը : Բայց դուք ի՞նչ առնչութիւն կրնաք ունենալ գրական ճաշակի հետ . որչա՛փ հեռու էք իրարմէ . հրապարա-կաւ «տափակութեան ներկայացուցիչ մը» դաւանեցանք զձեզ . ինչո՞ւ յայտնի ձմար-տութիւն մը կրկնել կու տաք մեզի :

* * *

Հիմա , որովհետեւ վերջացած կը նկատեմ խօսքս , Բիւզանդ Քէչեան , մասնաւոր ի՛նչ-նեմ սա պարագան թէ շատ ծանր կերպով խնդրի առարկայ դարձած էք այս յօդուածին մէջ , եւ այդ տեսակէտով իսկ շատ ծանր ալ հարկեր կը ծանրանան ձեր վրայ : Ձեր բու-վանդակ ոչնչութիւնը ու գոյնը կը կարծեմ որ յատկօրէն պարզեցի հոս , երեւան հանեցի այն ճղճիմ արդիւնքը զոր տուած է ձեր այս-չափ տարուան լրագրողի դործունէութիւնը : Յայտնեցի նաեւ դեռ շատ մը բաներ ալ՝ ուրոնք մաքուր սեղ մը չեն տար ձեզի մարդ-կային ընկերութեան մէջ : Բոլոր ասոնց մա-

սին չէ՞ք կարծէր որ ձեզմէ բացատրութիւն-ներ սպասելու իրաւունքը ունենանք : Եթէ այո՛ , ասպարէզ իջէք ուրեմն . թերթ մը ու-նիք որ ձերն է ու ոչ ոք ձեր թեւէն պիտի բռնէ : Միայն , պիտի խնդրէի որ պատշաճա-կերպով սկսէիք ձեր վիճաբանութեան :

Ու նորէն չորդածիւր , մենք աղայի հովեր մի՛ առնէք , յայտարարելու համար թէ չէ՞ք զիջանիր մեզի պատասխանելու : Շատ բան կը վայլէ ձեզի , կը խոտովանիմ ատիկա , — բայց ոչ այդ չորդածիւր վերարկուն՝ որուն մէջ ադմելու համար շատ սղոթիկ էք դուք : Գիտ-ցէք մանաւանդ որ հակառակ ասպարէզին մէջ նորեր , նորագոյններ ըլլալուս , ձեր կարծա-ծէն չա՛տ աւելի լուրջ հակառակորդներ ենք , մաքուր , անաղարտ հօգիով եւ անուշով ալ : Մեզմէ ո՛չ մէկուն ճակատը մրոտած է , կը հասկնա՞ք , Բիւզանդ Քէչեան : Մենք ամէնքս ալ հպատակներ Կայսերական կառավարու-թեան , պատասպարուած այն բարձր հովանա-ւորութեան տակ որ Վեհ. Սուլթանէն կը բղխի , մեր ձեռքէն եկածին չափ երկրին ընդհանուր զարգացման կը ձգտինք : Գրակա-նութիւնը որչա՛փ ծաղկած ըլլայ , սյնչափ յառաջդիմած կը համարուի երկիրը . եւ ահա , ճիշտ մեր թուրք եւ յոյն եղբայրակիցներուն պէս , այդ գրականութեան զարգացման կը ձգնինք , որչափ որ ներքին մեր աշխատու-թիւններն ու միջոցները :

Վաղը՝ թեքեա «Տոմինո» ի մը կամ ու-րիշ ո՛ր եւ է համանման լոշտակի մը բերնով բաներ մը մոլաւք ձեր թերթին մէջ . վիճա-բանութենէ փախելու ձեւ մը՝ որուն օրինակ-ները այնչափ անդամներ տուիք մինչեւ այ-սօր : Բայց հիմակուրէն ըսեմ թէ ատանկ պարագայ մը նոր բացատրութեանց սեղի պիտի տայ մեր կողմէն . եւ երկրորդ անգամ ձեզի յօդուածի մը նիւթ ըրած ատենինս , գիտցած եղէք որ պիտի գիտնանք ի՞նչ մը աւելի ո՞րոշ խօսիչ , թէ աւելի յստակ ու յառ-կանշանական բաներ մը պիտի գտնենք ձեր մասին :

Կը տեսնէք արդէն որ շատ պակասաւոր է այս յօդուածը . հոս չեն յիշատակուած ոչ ձեր շանքաժները եւ ոչ ալ լրագրական ուրիշ ձեռնածութիւններ՝ զորս երեւան պիտի հա-նենք առաջին առթիւ :

Խմբագր. ծանօթ. — Լսած էի ձեր մասին կարդ մը դիտողութիւններ, որոնք կ'ուզէին տարակոյսի տակ ձգել ձեր իբր մարդ ունեցած ազնուութիւնը՝ մանաւանդ հանդէպ ձեր պաշտօնակիցներուն. հետամուտ եղայ իբրեւ նոր մը հրապարակին վրայ, առանց ազդուելու ինծի քսուածներէն, անձամբ հետեւելու ձեր կատարածներուն, իմ հետազօտութեանս իբրեւ արդիւնք միայն հաստատելու կամ ջրելու համար ձեր մասին եղած այդ դիտողութիւնները։ Ամբողջ տարի մըն է որ ուշի ուշով կը հետեւիմ ձեր հրապարակագրական դործին, և առանց քաշուելու կը յայտարարեմ թէ մարդը շատ ճգճիմ դատած եմ անոր մէջ։ Չարագործի մը հակումները չէք գտներ դուք ալ ձեր այն խեղաթիւրուած տողերուն մէջ, որով կը յայտարարէք թէ «ի մօտոյ պիտի հարկադրուինք Հանդէսին դադրեցնել, ընթերցողներու չգոյութենէ»։ Բայց ձեր քսան և հինգ տարուան օրագրողի պարզ routine ովը գոնէ կը սպասուէր ձենէ որ պզտիկ նրբամտութիւն մը ունենայիք զձեզ այնչափ բացորոշապէս չմտնելու, որով դուք, մէֆիսթօյական հաճոյք, կ'ուզէք երկրին ու հանրութեան օգտակար ամէն նոր ձեռնարկի փնտսել նիւթապէս ու կործանել զայն, այն պարագային՝ ուր կը կարծէք որ ասով ձեր գոյութիւնը ապահոված կ'ըլլաք։ Բայց հանդէպ կիսամտեայ «Մասին» ին, ձեր կարողութենէն վեր բանի մըն է որ կը ձեռնարկէք, և զայն նիւթապէս կործանելու ձեր ջանքին մէջ անկարելի է որ յաջողութեամբ պսակուիք։ Մանաւանդ որ մեր Հանդէսը հարկ եղածին չափ արդէն գնահատուած է, և ոչ-բաժանորդներու ու մեղի անծանօթներու կողմէ իսկ զրկուած գովեստի

նամակներու ամբողջ ծրար մը ունինք այսօր մեր տրամագրութեան տակ։

Յետոյ ընթերցողներու ստուար թիւի մը սիրելի կիսամտեայ «Մասին»ը ապիկարօրէն կործանել ուզած ատեննիդ, ձեր գրչին տակէն «գրական ճաշակ» խօսքին պէս բան մըն ալ կը սչլղդի, որ հազուագիւտ անակրնկալի մը տպաւորութիւնը կ'առթէ մեզի. սակայն չեմ ծանրանար ասոր վրայ, որովհետեւ ձեր կողմէ սխալմունքի մը կը վերագրեմ այդ բանը, յիշեցնելով ձեզ կօչկակարի մը դիտողութիւններուն փոխարէն նկարչի մը կտրուկ պատասխանը.

— Կօչիկէդ վեր մի ելլեր։

Իսկ դալով այն խնդրին որով կը նկրտիք հեղինակութեան չեղտ մը տալ ձեր չարամիտ տողերուն, այդ մասին ալ տհաւասիկ մեր պատասխանը։ Ատեն մը կար երբ ձեզ չպատկանող թերթի մը քաղաքականի խմբագիրն էիք. այն ատեն ձեզ պաշտօնակից անգլիագէտ մը չի կար, և դուք ազատ ասպարէզ ունէիք ձեր հասկցածին չափ անգլիերէնով թարգմանութիւններ ընել որոնք ամէն ատեն ճիշդ չէին կրնար ըլլալ, քանի որ նոյն իսկ այսօր ձեր երկօրեայ Թայմզն (The Mail) և Սթանտարտէն թարգմանածներուն մէջ սխալ հասկցուած բաներ հազուադէպ չեն։ Չեմ ուզեր օրինակներով գրուածքս աւելի երկարել, այդ բանը անգլիերէնի դասաւանդութեան դասարանի մը վերապահելով։ Սակայն այդ հին բարի ժամանակին, ձեր անգլիագիտութիւնը ձեր հպարտութեան գըլխաւոր պատճառներէն մէկն էր։ Այսօր դուք ալ գիտէք որ ձեր գիտցած լեզուններուն աւելի հմուտներ չեն պակսիր ուրիշ խմբագրատուններու մէջ, ինչպէս նաև ձեր չգիտցած լեզուներուն հմուտ

ներ ալ։ Ուրեմն ձեր այդ անցեալ փառքը ոչ եւս է ձեզի համար։ Իսկ կորսուած փառքի մը փոխարէն ի՞նչ է ձեր ստացածը։ Գոնէ կրցած էք ձեր երկարատեւ հրապարակագրութեամբը մտքի բարձր զարգացում մը ձեռք բերել։ այդ տեսակ բան մը չենք տեսներ ձեր կատարածներուն մէջ։ ձեր անտեսական, ընկերային և այլ խնդիրներու վրայ խօսող յօդուածները, բացի թարգմանուածներէն, զմեզ կը հարկադրեն համոզուելու որ ձեր մտքին զարգացումը հեռու է բարձր ըլլալէ։ Կիսամանայ «Մասիս»ի Խմբագրութեան ինչպէս նաև իր ընտրուած աշխատակիցներու խումբին մէջ մասնագէտներ կան բոլոր այն խնդիրներուն, որոնց մասին յաճախ չէք քաշուիր կարծիք յայտնելէ անձեռնհասօրէն։

Ամփոփենք մեր ըսածը։

1. Իբրեւ մարդ շատ անազնիւ դուրս կու գար ձեր թերթին 14 օգոստոս թուով կիսամանայ «Մասիս»ին դէմ գրածովը։

2. Հիմնուելով մինչեւ հիմա գրական կանապէս ձեր արտագրածին վրայ, իրաւունք չենք տար ձեզի՝ յանուն «գրական ճաշակ»ի ու է խօսք ձեր բերանը առնելու։

3. Մտքի բարձր զարգացում մը չունիք։ ուրեմն ձեր իրաւասութենէն վեր է իբր հեղինակութիւն ուրիշներու մօտաւոր զարգացման մասին դատողութիւն ընելը։ «Մասիս»ի Խմբագրութիւնը իր մասնագէտ աշխատակիցներով կրնայ ձեզ, ձեր ասպարէզին մէջ աւելի լայն հայեացքով և գիտակցութեամբ գործելու համար, շատ բաներ սովորեցնել, զորս պէտք է՛իք գիտցած ըլլալ և չէք գիտեր։

ՄԻՓԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

Ա Ն Ե Լ Է Բ Ե Ա Ք Ը

(ԹԻԹԵՌՆԻԿԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ)

ՍՏԵՓԱՆ ՔԱՐԲՈՒԹԼԵԱՆ



ՆՔԸ ծաղիկ մ'եր անհետ,
Եղեմին մէջ հեռաւոր.
Իր գոյնին ու բոյրին հետ,
Կ'ապրէր ինքը մենաւոր . . .

Բայց լոյսի յորդ հոսանք մը ըրաւ գինքը վերաւոր։


Լոյսին ուժովը սաստիկ,
Եւ լայն կեանքին տենջանքով,
Բրբաւ եղաւ բիթեռնիկ . . .
Այ միշտ հիմայ հեւալով

Դեպ ի վարդերն կը բռչտի իր եղեմին բաղձանքով։

ԳՐԱԿԱՆ ԴԻՄԱՍՏՈՒԵՐՆԵՐ

ՍԻՊԻԼ

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ



ԵՍ գիտեր գրական գէմք մը՝ որ Սիպիլինին չափ լազմաթիւ անըտգիւտ յատկութիւններ ունենայ՝ իրենց վրայ հաւատար զուրգութեան քով ու հիացումով խօսելու հարկադրող : Ամէնէն հիանալի կողմն այն է որ՝ այդ յատկութիւններուն ոչ մէկը միւսին կը մնասէ , ոչ մէկը միւսին հրապոյրները կը մեղմէ , կը նստմայնէ : Անոնց իւրաքանչիւրը ինք իրեն մէջ արդէն մեղեդիական պաշտելի սիրունութիւն մը , իրարու քով կուգան կը համաձայնին , կապուելու համար ամբողջական ներդաշնակութիւնը՝ որուն համադրութիւնն է ինքը՝ Սիպիլ : Ու նկարիչը , որ պիտի փորձուէր , — անխոհեմ ու յանձնապատան փորձութիւն , — կենդանացնելու թուղթին վրայ իւրաքանչիւրն այդ առանձին գիծերուն , իրարու քով , այնքան աւելի դուցէ անխորհուրդ . բան մը պիտի ընէր , որքան ինքը , պէտաւոր էրիկ մարդ , կանխորոշութիւններով ու տխուր նախապաշարումներով կաշկանդուած է եւ իր գծելիք գէմքը կնոջական գէմք մըն է :

Ես կը մտածէի սակայն թէ ո՞րը աւելի շանկան ու իսկատիպ է , — կի՞ն մը՝ որ կինը կը պատկերացնէ , թէ այդ մը՝ որ կին մը կը նկարէ : Առաջին պատահումին մէջ ըլլալու են ապահովաբար գրադիտական իսկապըպութիւններ , ու հետաքրքրութիւններ ալ դուցէ , — ու թերեւս մանաւանդ ու միայն հետաքրքրութիւններ : Բայց ես կը խորհիմ թէ կնոջ պատկեր մը այն ատեն միայն

իսկապէս կնոջական է , երբ արուին նայուածքին մէջէն պրիսմաիւնելով կու գայ պատկերանալ թուղթին վրայ . փոխադարձապէս արուի պատկեր մը շատ աւելի առնական ու կենդանի պիտի ըլլար՝ դժագրուած կնոջական վրձինով , անկեղծութեան ու համարձակութեան պայմաններուն տակ :

Ու կը ստորագծեմ ահա այս երկու բառերը , անկեղծութիւն եւ հաւատարմութիւն : Կը խորհիմ թէ աշխարհի մէջ կնկան համար , որ պիտի փորձուէր գծել կամ գրել , ամէնէն հազուադիւտօրէն առաջնակարգ յատկութիւններ ըլլալու են այդ երկու յատկութիւնները , անկեղծութիւնն ու համարձակութիւնը : Ամէնէն վտանգաւոր , ամէնէն դժուար , ամէնէն աններելի , ամէնէն անիրանալի բաներն ըլլալու են ատենք որ այնքան կիները քիչ կին կը մնան՝ երբ կը փորձուին գծել կամ գրել : Կը հաւատամ թէ , երբ անոնք չեն մտածեր գիտակցութիւնները փնտռելու իրենց պայմաններուն , կիները կրնան ապրիլ ու կ'ապրին՝ կին : Ատիկա բան մըն է արդէն : Կինը իսկատիպ է իր ամբողջութեան մէջ , ներքի չէր բնաւ քննադատութեան եւ խժժանքի ենթարկել այն մասնաւորութիւնները՝ որ զինքը մենէ կը տարտոշեն , որ՝ իր արժանիքն են : Ու երբ այդ խմորը անարտուած չէ օտար նիւթերով , լաւ է ան իր բոլոր չարութիւններով ու իր բոլոր բարութիւններովը , այնպէս ինչպէս ելաւ անիկա Աստուծոյ հրաշագործ նայուածքին տակ , Ազամին կողէն , զբախտային առամի մը գերին բոլոր ընդունակութիւններով :

Եւ սակայն կինը անիրաւուած մըն է երիկ մարդէն : Գէթ մեզի այնպէս կը թուի երեւոյթ մը զոր ներկայ ընկերային կազմակերպութեան մէջ կը հաստատենք : Եթէ կինը այսօր չի կրնար անկեղծ ըլլալ , — երբ ոչ

թէ կ'զգայ, ուր ինք իրեն հետ է առանձին, այլ երբ կը խորհի ու կը գրէ, պատճառն այն է որ այդ մարդը այնպէս է ուղած ու այնպէս է վարժեցուցած զանի: Կնկան համար՝ մենք, մեր առնական քաջասրտութիւններուն մէջ, նախատինք մը ըրած ենք իր սեռը: Ու վարժեցուցած ենք իրեն թէ ինքը պարտաւոր է ամօթը զգալու մեր առջեւ՝ կին ծնած ըլլալուն: Ասիկա տխուր բան է եւ այս տխուր վարժութեան հետեւանքն է որ կինը կ'ամչնայ այսօր ինքզինքը խոստովանելու:

Ու երբ այնքան խստապահանջ կը դառնանք կին գրագէտին համար, որ կեղծ էրիկմարդու ձեւեր կ'առնէ մեզի՝ դառն հաճոյակատարութեան մը դժբաղդ վարժութեան մոլորած, անիրաւ ենք նորէն:

* * *

Այս խորհրդածութիւններէն դուրս ելլելէ յետոյ ճշմարիտ գոհունակութիւն կ'զգամ երբ կը մտաբերեմ կին մը՝ որ գրած ըլլար հետեւեալներուն նման բաներ. « Եթէ կիները գրեն ճշդիւ ինչ որ կը մտածեն, ինչ որ կը զգան, անվախ ու համարձակ, նորօրինակ եւ եղական գրականութեան մը ականատես պիտի ըլլայ հասարակութիւնը: Եթէ իրենց յուզումնային հոգիին սարսուռները երեւան դան այն թաւիշով ու ժանեակով ոյրուն գրականութեան ձեւին աակ, զոր ամէն բանի կուտայ կանացի նկարագրել երեւակայութիւնը, ամէնէն անմարսելի ճշմարտութիւնները ծաղիկներու բուրումներովը եւ փետուրներու դգուող փափկութեամբը պիտի նետուէին մեր երեսին, առանց զմեզ վիրաւորելու: » Ու երբ կը խորհիմ թէ այդ կինը գոյութիւն ունի այսօր մեր գրականութեան մէջ՝ ուրախութիւնս անսահման կը դառնայ:

Ամէնէն առաջ Սիպիլ երկու տարօրինակութիւն, կամ թերեւս ու գուցէ մանաւանդ երկու բնօրինակութիւն կը համագրէ իր գրական անձնակերպութեան մէջ. Նախ՝ առաջին կին մնացող գրագէտն է մեր բոլոր կին գրողներուն եւ երկրորդ՝ մեր օրուան գրականութեան ամէնէն կատարեալ բանաստեղծը: Մենք՝ որ այնքան քիչ վարժուած ենք մտքի յատկութիւններու մշակութիւն տեսնել մեր կիներուն

մէջ, կը զարմանանք անտարակոյս այս երեւոյթին վրայ: Բայց կա՞յ աւելի գեղեցկօրէն բնական բան մը քան այն՝ թէ կին մը, — ինքնին բանաստեղծութիւնն իսկ, — եղած ըլլայ իր ժամանակին ամէնէն անստգիւտ բանաստեղծը: Սիպիլին բանաստեղծութիւնը ճշդիւ այդ ժանեակի, ժապաւէնի, թաւիշի, բուրատուփի փափուկ ու շնորհագր զգլխիչ գրականութիւնն է հաւ, կէս նշուլաւորումներու եւ կէս ստուերարկութիւններու երազային անորոշութիւններովը տարտամօրէն քօղարկուած: Չկայ ձեռք մը՝ որ փետուրին բոլոր փափուկ ընդունակութիւններն այնքան քնքշօրէն հրաշագործած ըլլայ: Իր բոլոր ստեղծագործութիւնները իտէալի խուսափուկ հմայքն ունին: Իր կոյսերը, իր կիները, իր պջրուհիները, որոնք ժանեակի մը կարօտին զո՞հ կ'երթան, կամ դէմքի անակնկալ բիծի մը ցաւէն, տգեղութեան ցաւէն կը մեռնին, սովորական ու ռամիկ տիպարներ չեն, այլ ունին այն տեսակ մը իտէալական գեղեցկութիւնը՝ որ մեզի երագել կուտայ: Ու այդ գեղեցկութեան մէջ՝ այդ շղարչէ, հովէ, մետաքսէ, բուրմունքէ շինուած հուրինները,

Եթերային, անծիր, աննիւթ ամպի պէս

Միշտ անմատոյց, անըջային եւ միշտ նոր,

կ'ապրին, այնքան թանձրօրէն կեանքով ներշնչած է զանոնք ստեղծագործող աստուածահուն հրաշագործ մատիկը: Իր աշխարհը՝ մերինը չէ: Համադրութիւն մըն է ան բուրմունքէ ու անըմանքի, երազային նշուլաւորումներու ու վերջալուսային ոսկեղծութիւններու, համադրութիւն մը՝ կազմուած բոլոր այն տարրերով, որոնք իրականութեան մէջ կը գտնուին ու ամէնէն աւելի ընդունակ են կենդանութեան համակրութիւնը տալու Սիպիլի երազներուն: Այդ միջավայրին մէջն է որ իր էականը կ'ապրին, ամէնքն ալ գեղեցիկ ամէնէն աւելի, իրենց բոլոր տարօրինակութիւններով ու անհեթեթութիւններով: Այդ աշխարհը, իր բոլոր հրաշալիքներով, իրն է, իր ստեղծագործութիւնն է բացորոշապէս, որ ամբողջ նոր ու իսկապա աշխարհայեցողութիւն մը կը թելադրէ մեզի, գրեթէ անիրանալի՝ իր ժանեակներուն, թա-

ւիշներուն , ժապաւէններուն բոլոր բերքը ներ-
բին պերճանքներուն մէջ , — որոնք խորհր-
դանշաններ են մասնաւոր , — ու իր ամբողջ
տիրական գեղեցկութեանը մէջ երազել կու-
տայ մեզի մեծ ու փայլակնաշող երազ մը ,
իրականութեան սերմերով յղի : Ստուգիւ ,
Գեղեցկութեան զգացումը , իր իդական քըն-
քուշ ու նազոտ ըմբռնումով , ոչ ոք այնքան
անբիծ գաղափարականութեամբ մը արտա-
յայտած է մեր մէջ , Բայց , տարօրինակ երե-
ւոյթ , այս գրականութիւնն այնքան պջրանք
մը , նրբաճաշակութիւն մը , պերճանք մըն է
որքան բարիք մը՝ ճշմարիտ մարդկութեամբ
ապրող մարդուն համար : Իր ամէնէն աւելի
արուեստոտ ու բանաստեղծական մաքուր
ներշնչումով բուրումնաւէտութեամբ էջերը , ուր
միայն գեղեցկորիւնը գեղեցկութեան համարի
պատրանք մը կայ , կը քողարկեն միշտ բա-
ւոյական նպատակ մը՝ որ « գեղեցկութիւնը
մարդուն համար » մեծ ու կազմուրիչ մտա-
ծումը պիտի մտածել տար մեզի :

Ըսի թէ ոչ ոք իրեն չափ գեղեցկութիւնը
զգացած ու արտայայտած է մեր մէջ՝ իր ա-
մէնէն իսկատիպ ձեւերով : Ասիկա չէր կըր-
նար բաւել սակայն : Ոչ ոք , ազգութեան
գարչանքն ունի իրեն չափ գեղեցկութիւնը
կատարելապէս սիրած ըլլալու համար : Եթէ
գեղեցկութեան պաշտամունքը կեանքի նը-
պատակն ընել ու այդ պաշտամունքը՝ մար-
դերու ռամիկ ու տիտուր արջառին մէջ քա-
րողել , աւետարանել պզտիկ բան մը ըլլար՝
պէտք էր որ քանի մը Սիպիւնի համերկ մեր
գրականութիւնը : Այլ մէկ հատիկ է այսօր
այդ կինը՝ որ մեր ժողովրդին կ'ուզէ հասկը-
ցնել թէ՛ Գեղեցկութեան զգացումը կեան-
քին տիրական զգացումը հարկ է որ ըլլայ ,
եւ եթէ օր մը պիտի իրականանան մարդկա-
յին ընկերութեան երջանկութեան մեծ երազ-
ները , միայն պիտի իրականանան՝ երբ գե-
ղեցկութեան զգացումէն կը մեկնի մարդը՝
զէպի բարեշնչութեան գաղափարային հանգ-
րուանները , այս մտածումէն շարքեր բան մը
չի կրնար պատճառ եղած ըլլալ որ Սիպիւ ա-
նիմատ ֆէմինիստ մը կրցած չըլլայ դառնալ :
Եթէ կինն այսօր գեղեցիկ է իր մարմնով
ու իդական մասնաւոր շնորհներով , որ զինքը

պատուաւորապէս կը տարորոշէն արուէն ,
պատճառն այն է որ բնութիւնն այդպէս ու-
զած ըլլայ : Բոլոր կենդանական կարգին մէջ
արուները գեղեցկագոյններն են : Թերեւս
արու մարդուն տկարութեան մէկ շնորհումն
է որ իր հակառակորդ սեռն այսօր իրմէն ա-
ւելի գեղեցիկ կը նկատուի : Բայց ֆէմինիս-
մի կատակերգական պատրուակով արուին
հետ մրցելու , ամէն կերպով անոր նմանե-
լու այն տխուր փորձը՝ զոր կինը կը փորձէ
այսօր , ապահովաբար լուրջ չարագուշակու-
թիւն մըն է բոլոր անոնց համար որ կը սի-
րեն կինը պահուած տեսնել միշտ իր յատուկ
շնորհներուն մէջ . վասն զի պիտի մը ու մօ-
րուք մը պակաս՝ բաւական չպիտի ըլլային
ապագայ առնացած կնկան՝ տարբերելու հա-
մար իր արուէն :

Եթէ բոլոր կիները Սիպիւնի չափ նախա-
ձախդիր ըլլային գեղեցկութեան գաղափա-
րին պաշտպանութեան , կեանքին ամէն ներ-
քին ու արտաքին երեւոյթներուն մէջ , եթէ
կիները այս բանաստեղծութիւնն չափ սիրէին
գեղեցկութեան պաշտամունքին խորանն ը-
նել իրենց մարմնն ու հոգին , էրիկ մարդուն
նմանելու կատակերգական իմաստով ֆէմի-
նիստ մը գոյութիւն չէր ունենար այսօր :

Սիպիւ բառերու վարպետ մը ըլլալ չի բա-
ւեր սերունդի մը համակրութեան արժանա-
նալու համար : Մեծ արուեստի մը հետ՝ հարկ
է ունենալ նաեւ մեծ մտածում մը :

Սիպիւ երկուքն ալ ունի աղնուականօրէն
Եւ ինչո՞ւ չըմէինք ասոնց բոլորը , փա-
ռաւորելու համար հանճարատիպ հայ բանաս-
տեղծութիւն , վասն զի իմ գեղացիի մտքին
հեշտ կուգայ որ մենք անկեղծ քաջութիւնն
ունենայինք ըսելու մեր մեծ դէմքերուն հա-
մար բոլոր բովանդակ մտածումը՝ զոր ունինք
իրենց դործին վրայ , այլ զոր տխրօրէն անի-
մաստ ու պայմանագրական սովորութիւն մը
մեզ վարժեցուցած է վերապահել դերեղմանի
մարմարներուն վրայ թղկալու :

Յ. Գ. — Ընթերցողներէս կը խնդրեմ Մա-
ւիսի 15րդ թուով հրատարակած « Եղիա Տէ-
միրճիպաշեան » յօդուածիւ մէջ ընել հետեւեալ
սրբապրութիւնները .

Էջ Սնկ. Տող	Սիւս	Ուղիղ
473 Բ 15	հակամիտութեան այն հակամիտութեան	
473 Բ 22	մաշուած	մալուած
474 Բ 14	շրջանակի վարպ	շրջանակի (տե՛կ. վարպ)

ԳՐԶԻ ՄԸ ԱՆԿՈՒՄԸ

ՅՈՎՀ. ԳԱԶԱՆՃԵԱՆ



ՆՁԵՐ կան՝ որոնք տա-
ղանդի գերադոյն զօրու-
թեամբ մը, իրենց հետե-
ւած ասպարէզին մէջ փայ-
լուն համբաւի մը կը տիրանան խանդավառ
հիացման ու պաշտումի առարկայ դառնալով,
բայց որովհետեւ ամէնուն տրուած չէ մինչեւ
վերջը պահել կորովի միեւնոյն ուժգնութիւնը,
տաղանդի միեւնոյն հմայքը, երբեմն կը պա-
տահի մէկուն որ տարիներէ վերջ իր մարմնոյ
ու մտքի ուժերը յոգնին կամ թուլնան, ե-
րեւակայութիւնը պղտորի, ախտաւոր հա-
կումները շեշտուին օր քան զօր, մինչդեռ
ան՝ չնայելով այս ամէնուն ու չուզելով տը-
կարութիւնը խոստովանիլ, տակաւին շարու-
նակէ ասպարէզի վրայ մնալ, միեւնոյն կոյր
հիացումը սպասելով ժողովրդէն ու չգտնե-
լուն համար նեղացած՝ ամէն արտառոցու-
թեան զիջանելով, մինչեւ ա՛յն աստիճան որ
տարիներու ընթացքին մէջ շահած համբաւն
ալ վրայ տայ՝ ու յետոյ արհամարհանքի ալ
առարկայ դառնայ:

Ահա այս միեւնոյն ցաւալի երեւոյթը զիտ-
ուելու վրայ է մեր ա՛յնքան սիրելի ու պաշ-
տելի Եղիան, մեր ամէնէն « օթիլիսթ »
գրադէտին մեր « խորհրդապաշտ » բանաս-
տեղծին վրայ. որուն գրական արտադրու-
թիւնները օրէ օր կը տալիսկնան ու անհամ
ըլլալու աստիճան անխմատ կը դառնան:
Ստոյգ է որ հին գրասէր Ատոմը չէ որ կը
կարդանք, որքան որ ալ ինք հակառակը
հաստատելու համար տղայական ճիգեր ընէ,
երկու անուանները միանդամոյն գնելով իր
յօդուածներուն տակ:

Շատ ախուր բաներ լսած էինք Եղիան

վրայ, մենք դաւառացիներս, բայց ամէն
անգամ որ իր գեղեցիկ գրուածքները կը կար-
դալինք՝ կը մտածէինք թէ թերեւս իր սեփա-
կան արժանիքը, իր եզական բնատուրութիւնը
կը բղխի բուն իսկ իր երեւակայութեան այդ
ախուր ու արհաւիրտ հակումներէն: Ուր Ե-
ղիան իր բոլոր թերութիւններուն մէջ ու բուն
իսկ իր թերութիւններուն համար ա՛լ աւելի
պաշտելի կ'ըլլար մեզի: Բայց ուրիշ աւելի
ախուր զրոյցներու արձագանքն ալ մինչեւ
մեզի կը հասնէր որոնց չէինք հաւատ ընծա-
յեր, մինչեւ որ օր մը ախուր իրականութիւ-
նը հրապարակաւ ալ հռչակելու քաջութիւնն
ունեցաւ յանդուգն երիտասարդ մը — Արամ
Անտոնեան —: Իրաւ քաջութիւն է Եղիային
պէս ա՛յնքան յարգուած ու հիացուած մէկու
մը դէմ ճշմարտութիւնը խօսիլ եւ մէկ ախու-
տուքով բզկտել այն հմայքի շղարշը որուն
տակէն սորված էինք անսնել ու միշտ պիտի
սիրէինք տեսնել զինքը:

Բայց Անտոնեանէն առաջ Եղիանի զըր-
ուածքները կային որոնք արդէն յայտնապէս
կը մտանէին զինքը: Անոնց մէջ կը տեսնէիր
Եղիան վերջին ծայր յոխորդ ու աններող որ
իր կարծիքին դէմ որեւէ ամենաթեթեւ զի-
տողութեան իսկ չի հանդուրժեր, պահանջե-
լով որ իւր պատգամ ընդունուի ինչ որ ինք
կ'ըսէ, կը տեսնէր զինքը անխմատալի հակա-
սութիւններով լեցուն՝ որ կը շողքօրթէ. որ
անստանալի յաւակնոտութեամբ մը ինքզինք
կը գտլէ, եւ որ ամէնէն յեղեղեղակ նկարա-
չիրը կը պարզէ այսօր պաշտպանածը վաղը
նախատելով, այսօր պաշտածը՝ վաղը այրելով:
Ու դարձեալ զարմանքով կը նայէիր որ ան
ամէնէն յարգուածը, պաշտուածը, տարօրի-
նակ հակասութեամբ մը աշխարհ ամենայն
իրեն թշնամի կը համարի ու գրչին բովան-
դակ թափովը բռնու յարձակումներ կը տե-
ղացնէ անխտիր ամէն կողմ:

Գալով իր ոճին՝ հակառակ իր քանի մը ամիս առաջ բրած մեծագոյ յայտարարութեանը որով կը պարծենար թէ իր գրութեանը ներք ճոխութիւն, ներդաշնակութիւն, յստակութիւն — ոճի այս երեք յատկութիւնները — կը միացնեն, մենք շատոնց գիտէինք թէ Եղիան թէպէտ եւ ըլլայ ճոխ ու ներդաշնակ՝ յայց քիչ անգամ յստակ է, ինչ որ կը հերքէինք իրեն, իր մտքին անբաժան յատկութիւններէն մին համարելով մթութիւնն ալ որ տեսակ մը հրապոյր կը գնէր իր ոճին մէջ։ Բայց ժամանակէ մը ի վեր մանաւանդ սրտի մեծ ցաւով կը տեսնենք թէ ան ալլեւս ճոխութիւն ու ներդաշնակութիւն ալ չունի ու ինքզինքը տուեր է լրջութեան բոլորովին զուրկ տղայական անխմած ու անկապակից գրութեանը ներք չես գիտեր թէ գրական ոճ սեւին կը պատկոնին։

Դժբաղդաբար այս բոլոր երեւոյթները որ քան զօր չեշտուելու վրայ են Եղիանի վրայ։ Ստուգիւ ողբալի է այս «Արեւելք» ի հետ գտնելէ ետքը՝ զարմանքով տեսանք թէ իր սիրական «Բիւզանդիոն» ին հետ ալ աւելուեր է զոր անխնայ կը ծաղրէ, ինքն ալ փոխադարձաբար ծաղրուելով անկէ։ Յետոյ կարգը եկաւ «Մասիս» ին որուն խմբագրին դէմ սրդողած՝ թշնամանք ու նախատինք չի թողուր՝ կը տեղացնէ գլխուն։ չինայելով նոյն իսկ անոր գաւառացի աշխատակիցներուն ալ որոնցմէ մէկ քանինները դեռ քանի մը ամիս առաջ կը գրուատէր այս սիւնակներուն մէջ յակնէ յանուանէ, ուրիշ անգամ ալ «մեծարանք մեծարանացը» ընծայելով «մասնաւորապէս գաւառացի գրողներու այն փայլուն ու եռանդուն խումբին որոնք ամենէն աննպաստ պայմաններու մէջ, գրելով քարը ճղելով ու մէջէն ծլելով կանխատան, կ'ուսճանան, կը զօրանան . . . »։ Չես գիտեր թէ ինչ բերք են իրեն «Մասիս» ին գաւառացի համախոհները որոնք չեմ կարծեր որ յարգանքէ տարբեր զգացում մը երբէք ունեցած ըլլան իրեն համար։ Բայց կը մոռնանք որ ան ամենէն անմեղ գրութեան մէջ իսկ իրեն դէմ թշնամական ակնարկութիւն մը կուղէ երեւակայել, անպատճառ կարծելով թէ ամէն գրող միացած է իրեն

դէմ։ Կ'երեւի թէ իմ մէկ յօդուածիս մէջ ալ այն տեսակ ակնարկութիւն մը նշարներ է որ իր ձին Յակոբին ու իր բերնովը հաւը, հովը, բութան, նոսաւը իրար խառնելով «Սուրհանդակ» ի մէջ ինծի դէմ ալ բաներ մը ըսել ուզեր է որոնց խմատին ապահովապէս իրմէ զատ ոչ ոք կարող է թափանցել։ Իմ յանցանքս կ'երեւի ան ըլլալու է որ իրեն հետ համակարծիք չեմ դաժնուեր երբ կը գրէր թէ գաւառական գրականութիւնը չի կրնար գիմագրել միջազգային եւ օտար գրականութեան ազդեցութեան, մինչդեռ ես կը ջանայի հակառակը հաստատել փափկօրէն։

Հիմա Եղիան ամէնուն հետ դժտելէ յետոյ՝ իրեն հետ հաշտ ու իր առջեւ բաց ունի միայն «Սուրհանդակ»ը որուն հետ ալ ապահովաբար վաղը կամ միւս օր պիտի գիշտուի⁽¹⁾։ Այս թերթին մէջ իր հրատարակած յօդուածները կարգալով մարդ չկրնար արգահատանքը զսպել։ Չես գիտեր ինչ խօսք քմահաճոյք է ան որ զինք կը մղէ՝ լքանելով իրեն յատուկ արտմաթաթաւրջութիւնը, դուրս ելլելու իր մշակած գրական սեռէն, կապկելու համար Պարոնեանի մը գրիչը եւ գրելու համար այլանդակ երգիծաբանութիւններ, ողորմելի բառախաղերով անհամուած . . . Եթէ ատանկ յօդուածներ անշուք մէկէ մը գրուին՝ ապահովաբար զամբիւղի բաժին կ'ըլլան, բայց որովհետեւ ան անուն մը ունի, զայն չարաչար կը գործածէ ամենէն անյի բաները հրամցնելով ընթերցողներուն։ Բայց այսպէս չարունակելով կը վախնամ թէ օր մը պիտի արհամարհուի ու ալ չկարգացուի — եթէ նոյն իսկ իր ատանկ յօդուածները հրատարակող թերթեր տակաւին գտնուին — ամենէն ցաւագին հիասթափումը իր ընթերցողներուն ու հիացողներուն։ Այս ընթացքով ինքը դէպի անկում կ'երթայ եւ կը նմանի ամենէն յարողած, սիրուած, պաշտուած մարդու մը որ ամէն կարեւր ճիգ կը թափէ կորսնցնելու համար ինչ որ չհաճ է։ Մեղք . . .

Գիտեմ թէ գաւառացի խեղճ տղու մը այս

(1) Մեր աշխատակցին գուշակութիւնը արդէն իրողութիւն մըն է պարտ։

տողերը ինչքան սաստկապէս պիտի վիրաւորեն Եղիան զիւրադգացութիւնը : Բայց կ'ուզեմ զգացնել իրեն այն վտանգը որ իր համբաւին կ'սպառնայ , ցորչափ չարունակէ այս աղու գրականութիւնը :

Մենք պիտի փափաքէինք որ Եղիան եր-

կայն հանգիստ մը առնէր ու ո'չ մէկ տեղ ալ չգրէր : Մենք կը սիրենք մեր մտքերուն վրայ պտնել հին Գրաքեր Աստուին թողած հմայքը , մենք միշտ զինքը կը սիրենք տեսնել հիացման ու պաշտումի նոյն մթնոլորտին մէջ պարուրուած , համբաւի միեւնոյն բարձրութեան մէջ բարձրաթառ :

Ո Ի Ր Ո Ի Ա Կ Ա Ն Ն Ե Ր (*)

ՀԵՆՐԻԻՔ ԻՊՍԵՆ

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

ՄԻՆԻՆՈՅՍ ՍԵՆԵԱԿԸ

Անճրեւային մեռու մը ճակատին տարածուած կը մնայ Երզնայացիներին վրայ

Բաւոր Մանդեբ . և Տէկին Ալլինկ սեղանադրանէն դուրս կ'ելլեն :

Տիկին Ա. (Տակաւին դրան ԴՂ) Աստուած ճաշերնիս օրհնէ , Պարոն Բասթոր : (Դեպի «Եղանապոսն» ներս խօսելով) Դու ալ մեզի հետ չե՞ս գար , Օսվալդ :

Օսվալդ . (Ներսէն) . Ո'չ , չնորհակալ եմ , կ'ուզեմ քիչ մը դուրս ելլել :

Տիկին Ա. Այո' , աղէկ կ'ընես . անձրեւը դադրած է հիմա : (Կը ֆոցէ սեղանադրան դուրս և նախադասի վրայ Բացառող դուրս ելնելով կը կռնէ) . Ռէկինէ :

Ռէկինէ . (Դուրսէն) . Հրամայեք , Տիկին :

Տիկին Ա. Վարը , աշխատութեան սենեակը գնա եւ փունջերուն դու ալ միասին օգնէ :

Ռէկինէ . Շա'տ լաւ , Տիկին :

Տիկին Ա. (Ապահով ըլլալով Բէ Ռէկինէ կ'երթայ , դուրս կը ֆոցէ) :

Բասթոր Մ. Օսվալտը ներսէն մեր խօսիւմը չի' լսեր :

Տիկին Ա. Անկարելի է լսել երբ դուրս

գոցուած ըլլայ : Բաց աստի անիկա պտոյտի պիտի երթայ :

Բասթոր Մ. Շիտակը տակաւին ինչ ըսեւ լիքս չեմ գիտեր : Չեմ հասկընար թէ ինչպէս այդ օրհնուած կերակուրներէն նոյն իսկ պատառ մը կարող էի կուլ տալ :

Տիկին Ա. (Փոքնեւէ իր յաղճանք Գրք և սենէկէն ԴՂ վեր վար պահելով) . Ես ալ չեմ հասկնար : Բայց ի՞նչ կարելի է ընել :

Բասթոր Մ. Այո' , ինչ կարելի է ընել . ճշմարիտ ես ալ չեմ գիտեր . այս տեսակ քաներուն մէջ բոլորովին անփորձ եմ :

Տիկին Ա. Համոզուած եմ ես որ դոնէ մինչեւ այժմ որ եւ է դժբաղդութիւն մը չէ պատահած :

Բասթոր Մ. Ո'չ , Աստուած հեռո՛ւ ընէ . բայց նորէն անյարմար բաներ են ասոնք :

Տիկին Ա. Այս ամբողջ գործը կրնաք վճատան ըլլալ որ ասանկ Օսվալտի խելքին փշած բան մըն է միայն :

Բասթոր Մ. Այո' . ինչպէս ըսի , ես այս տեսակ գործերէ չառ չեմ հասկնար , բայց ինձի կ'երեւայ որ անպատճառ . . .

(*) Տես «Մասիս» Թիւ 12, 13-14 եւ 15 :

Տիկին Ա. Ամէն պարագայի մէջ աղջիկը պէտք է հեռանայ տունէն , եւ ան ալ անմիջապէս : Դոնէ այս կէտը պարզ է . . . :

Բաւարձ Մ. Այո՛ , բնական է :

Տիկին Ա. Բայց ո՞ւր երթայ : Բնական է որ չենք կրնար պատասխանատուութիւնը վրանիս առնել , զի՞նք . . . :

Բաւարձ Մ. Ո՞ւր երթայ : Բնական է իր հօրը տունը :

Տիկին Ա. Որո՞ւն ըսիք :

Բաւարձ Մ. Իր . . . : Բայց ո՛չ , էնկստորանտ իրաւ չէ . . . : Բայց , Աստուած իմ . Տիկին Ալվինկ , ինչպէս կարելի է այս բանը , թերեւս կը սխալիք :

Տիկին Ա. Դժբաղդաբար ոչ մէկ կերպով չեմ սխալիր : Եօհաննա հարկադրուած էր ամէն ինչ ինծի խոստովանելու , . . . : Եւ Ալվինկ ալ կարող չէր հակառակը պնդելու : Ուրիշ բան մնացած չէր ընելու բայց եթէ կարելի եղածին չափ խնդիրը դոցել :

Բաւարձ Մ. Այո՛ , հարկաւ ատիկա միակ կարելի բանն էր :

Տիկին Ա. Սպասուհին հարկադրուած էր անմիջապէս ձգել իր պաշտօնը , եւ կ'ընդունէր նաեւ բաւական մեծկակ գումար մը , պատահածի մասին բոլորովին լռելու համար : Ալ մնացեալը , քաղաք երթալուն ինքը կը կարգադրէր : Իր հին բարեկամութիւնը կը վերահաստատէր ատաղձագործ էնկղսդրանտի հետ , հաւանականաբար կը հասկցնէր նաեւ իրեն թէ որքան դրամ ունի , եւ յետոյ կը պատմէր թէ ինչպէս օտարական մը , ամառնային հաճոյքի ետէ՛սով իր գտնուած տեղը եկած էր : Յետոյ ինքը եւ էնկղսդրանտ մեծ աճապարանքով կ'ամուսնանային : Այո՛ , Դուք էիք նոյն իսկ , զիբենք պսակողը :

Բաւարձ Մ. Բայց ի՞նչպէս պէտք է բացատրել այս ամէնքը . . . : Տակաւին մինչեւ այսօր այնքան յստակ կերպով կը յիշեմ , թէ ինչպէս էնկղսդրանտ ինծի կուգար , պսակի արարողութեան ժամանակը որոշելու համար : Բոլորովին ճնշուած էր , եւ այնքան դառն կերպով կը գանգատէր այն թիթեւաբարոյութեան մասին , զոր ինքը եւ իր նշանածը գործած էին :

Տիկին Ա. Այո՛ . ահաւասիկ ինքը հար-

կադրուած էր ամէն յանցանք իր վրայ առնել :

Բաւարձ Մ. Բայց իր կողմէն այս տեսակ ստախոսութիւնն մը : Եւ այն ալ ինծի դէմ : Զշմարտ Եաքօպ էնկղսդրանտի վրայ այս տեսակ բան մը չէի գնել : Շա՛տ լաւ . ուրեմն պէտք եղածին պէս պիտի խօսիմ հետը , այդ մասին կրնայ աղահոյժ ըլլալ . . . : Ու յետոյ անբարոյականութիւնն այս տեսակ միութիւնն մը եւ ստակի՛ համար : Ո՞րքան կը հասնէր դրամին գումարը զոր աղջիկը այն ատեն կ'ստանար :

Տիկին Ա. 300 թալէրի չափ էր :

Բաւարձ Մ. Բայց մտածեցէք անգամ մը , . . . խայտառակ 300 թալէրի համար երթալ եւ պսակուել արդէն ինկածի մը հետ :

Տիկին Ա. Այն ատեն ի՞նչ կ'ըսէք ինծի համար որ կ'երթայի եւ ինկած մարդու մը հետ կը պսակուէի :

Բաւարձ Մ. Բայց Աստուած չընէ . . . : Ի՞նչ կ'ըսէք . . . ինկած մարդ մը :

Տիկին Ա. Կը հաւատաք թերեւս թէ Ալվինկ , ինծի հետ պսակուելու համար եկեղեցի մտած ատեն աւելի մաքուր էր քան թէ Եօհաննա , որովհետեւ այս վերջինը էնկղսդրանտի հետ պսակուեցաւ :

Բաւարձ Մ. Բայց ասոնք երկինք երկիր իրարմէ հեռու բաներ են . . . :

Տիկին Ա. Բնա՛ւ երբեք այնքան տարբեր : Անտարակոյս վճարուած գինին մէջ մեծ տարբերութիւն մը կար , . . . խայտառակ 300 թալէր եւ ամբողջ հարստութիւն մը :

Բաւարձ Մ. Բայց ի՞նչպէս կ'ուզէք իրարմէ այնքան տարբեր երկու բաներ երբեք իրարու քով դնել : Դուք հարկաւ Ձեր սրտին եւ Ձեր մօտաւորներուն խորհուրդ հարցուցիք :

Տիկին Ա. (Առանց երէւել նայելու) Կը կարծէի որ գուշակած ըլլայիք , թէ դէպի ո՞ւր մօլորած ըլլար , ինչ որ դուք սիրտս կը կոչէք :

Բաւարձ Մ. (Զարմացած) Եթէ այդ տեսակ բան մը գուշակած ըլլայի , Ձեր ամուսնոյն տան մէջ ամենօրեայ հիւր մը պիտի չըլլայի :

Տիկին Ա. Ուրեմն , ամէն պարագայի մէջ սա կէտը պարզ է , որ ես իմ անձիս հետ չի խորհրդակցեցայ :

Բասթոր Մ. Բայց այն ատեն, հարկաւ Ձեր մօտաւոր ազգականներուն հետ, ինչպէս որ ընդունուած է : Ձեր մօր եւ Ձեր երկու մօրաքոյրերուն հետ :

Տիկին Ա. Այո՛, ատիկա ճշմարիտ է : Երեքն ալ ինքզինքնին ինծի օրինակ կը ցուցնէին : Օ՛, անհաւատալի է թէ ինչպէս յետակ կերպով ինծի կը հասկցնէին թէ պարզարպէս խնդութիւն էր այս տեսակ առաջարկ մը մերժելը : Եթէ մայրս վերէն վար նայէր եւ գիտնար, թէ ինչ եղաւ այդ բոլոր գեղեցիկ սպասումներուն վերջը :

Բասթոր Մ. Հետեւութեան մասին ոչ մէկը կրնայ պատասխանատու բռնուիլ, Գոնէ սաչափը պարզ է որ Ձեր ամուսնութիւնը կը կատարուէր ամէն կերպով համաձայն օրինական եւ կանոնի բոլոր տրամադրութիւններուն :

Տիկին Ա. (Պարտահանէն առջեւ կեցած) . Հա՛, այո՛, կանոն եւ օրէնք : Երբեմն ինծի այնպէս կու գայ որ այս երկու բաները պատճառ կ'ըլլան աշխարհի մէջ գտնուած բովանդակ դժբաղդութեան :

Բասթոր Մ. Տիկին Ալվինկ, բայց հիմա միշտ կը գործէք :

Տիկին Ա. Այո՛, կրնայ ըլլալ . բայց այս բոլոր կապերը եւ նկատումները չեմ կրնար տանիլ այլ եւս : Այլ եւս չեմ կրնար : Պէտք է որ ազատ զգալու բարձրութեան հասցնեմ ինքզինքս :

Բասթոր Մ. Ի՞նչ ըսել կ'ուզէք ասով :

Տիկին Ա. (Մարմնէրը պարտահանի ապակիէն շարժելով) Պէտք չէր որ ես Ալվինկի կեանքը պարտըկէի : Բայց այն ատենուերիչ կերպով բան մը ընելու չէի յանդգներ . . . նոյն իսկ իմ մասիս մտածելով : Այնքան վախկոտ էի այն ատեն :

Բասթոր Մ. Վախկոտ :

Տիկին Ա. Եթէ մէկը բան մը խմանար, այն ատեն պիտի ըսէր. «Խեղճ մարդ, հասկընալի է որ այսպէս մօլի կեանք մը ունենայ, քանի որ այն անսակ կ'լին մը ունի, որ զինքը երեսի վրայ կը ձգէ» :

Բասթոր Մ. Այդ խօսքերն ալ իրենց արդար իմաստը ունեցած պիտի ըլլային :

Տիկին Ա. (Ահաբեկ Բասթորի երեսին յանձնելով) Եթէ ես այն ըլլայի, ինչ որ պէտք

էի եղած ըլլալ, Օսվալտը առջիս առնելով պիտի ըսէի. «Գիտցած եղի՛ր, դաւակո, հայրդ անկեալ մըն է . . . »

Բասթոր Մ. Բայց, Տէր ողորմեա ըսէք . . .

Տիկին Ա. . . . եւ այն ատեն ամէն բան իրեն պիտի պատմէի ինչ որ արդէն Ձեզի ըսի . . . մանրամասնօրէն :

Բասթոր Մ. Տիկին Ալվինկ, Ձեր վրայ գրեթէ դայթակղած եմ :

Տիկին Ա. Գիտեմ ատիկա : Այո՛, զիտեմ արդէն : Ես ինքս ալ կը գայթակղեմ այն մտածումներուն վրայ, (Պարտահանէն կը հեռանայ) . Այնքան վախկոտ եմ :

Բասթոր Մ. Եւ դուք վախկոտ կ'անուանէք, եթէ յառաջիկային մէջ ալ Ձեր կոչումն ու պարտքը կը կատարէք : Մոռցա՞ք թէ դաւակ մը պէտք է հայրն ու մայրը պատուէ :

Տիկին Ա. Խնդիրը այնքան ընդհանուր կ'օղմէն չառնենք, Հարցնենք ընդհակառակը թէ պէտք է որ Օսվալտ Ալվինկ յարգէ եւ սիրէ երեսփոխան Ալվինկը :

Բասթոր Մ. Միթէ Ձեր մայրական սրտին մէջ գոյութիւն չունի՞ այն ձայնը որ Ձեզ կ'արգիլէ Ձեր տղուն իտէալը բզիկ բզիկ ընելը :

Տիկին Ա. Եւ ի՞նչ կ'ըլլայ այն ատեն ճշմարտութեան վիճակը :

Բասթոր Մ. Եւ ինչ խեղալինք :

Տիկին Ա. Բէ՛հ . . . իտէա՛լ, իտէա՛լ . միայն եթէ ես այնքան վախկոտ չըլլայի, որչափ եմ :

Բասթոր Մ. Մ'արհամարհէք իտէալը . Տիկին Ալվինկ . . . որովհետեւ շատ դառն է անոր վրէժը : Եւ մանաւանդ Օսվալտին քով Օսվալտ դժբաղդաբար այնքան շատ իտէալներ չունի . բայց գոնէ սաչափը արդէն նշմարեցի որ իր հայրը իտէալ մըն է իրեն համար :

Տիկին Ա. Այդ մասին իրաւունք ունիք :

Բասթոր Մ. Եւ այդ մտապառակները ահա Ձեր նամակներուն միջոցաւ իր մէջ արթնցան եւ սնունդ առին :

Տիկին Ա. Այո՛ . պարտաւորութիւններ եւ նկատումներ զիս այդ բանին կը հարկադրէին : Այս պատճառաւ հանդէպ իմ զաւկիս սուտ կը խօսէի տարիներ եւ տարիներ : Ա՛հ, ի՞նչ վախկոտ . . . ի՞նչ թոյլ եղած եմ ես :

Բասթոր Մ. Երջանիկ պատրանք մը հաս-

տատուեցաւ Ձեր տղուն մէջ : Տիկին Ալվինկ . . . եւ ասիկա ճշմարիտ , պէտք է անարժէք նկատէք :

Տիկին Ա. Հը՛ . . . Ո՛վ գիտէ թէ այդ բանը լաւ արդիւնք ունեցած է այսօր : Բայց Ռէկկինէի հետ որեւէ յարաբերութիւն մը ոչ մէկ պարագայի մէջ կը հանգուրժեմ : Պէտք է որ Օսվալտը երթայ պարագայէս խեղճ աղջկիկը ապերձանիկ ընէ :

Բաւաթոր Մ. Ո՛չ , Տէր Աստուած գթած . ասիկա սոսկալի բան պիտի ըլլար :

Տիկին Ա. Միայն չատ կ'ուզէի գիտնալ թէ Օսվալտ լուրջ միտք մը ունի՞ . եւ թէ աղջկիկը իր երջանկութեան պիտի առաջնորդէ՞ :

Բաւաթոր Մ. Ի՞նչ , եւ անկից՞ վերջ :

Տիկին Ա. Բայց գործը այդ տեսակ վախճանի մը չպիտի հասնէր , որովհետեւ Ռէկկինէ դժբաղդաբար այդպէս արամադրուած է :

Բաւաթոր Մ. Ուրեմն վերջը՞ : Ի՞նչ կ'ըսէք :

Տիկին Ա. Եթէ ես այսքան ողորմելի կերպով թոյլ չըլլայի , այն ատեն Օսվալտի կ'ըսէի « Ամուսնացիր իրեն հետ , կամ թէ մէջերնիդ համաձայնեցէք ինչպէս որ կ'ուզէք : Բայց իրար խաբել չըլլար » :

Բաւաթոր Մ. Բայց Տէր Աստուած գթած . . . Այն ատեն օրինական ամուսնութիւն մը : Այսքան սոսկալի՞ բան մը . . . Այսքան անուր բան մը :

Տիկին Ա. Այո՛ , Անլը՛-ը ըսիք , ձեռքերնիդ խիղճերնուդ վրայ դրէք , Բաւթոր Մանտէրս , չէ՞ք կարծեր որ դուրսը , ամէն ուրեք , ամբողջ երկրին մէջ չաւ մը ամուսնացած զոյգեր կան որոնք նոյնքան մօտաւոր աղքատեաներ են իրարու :

Բաւաթոր Մ. Ձեզ ըղորովին չեմ հասկնար :

Տիկին Ա. Օ՛ , Դուք զիս չաւ լաւ կը հասկնաք :

Բաւաթոր Մ. Ուրեմն . . . Դուք կը մըտածէք այն հաւանական պարագային , թէ . . . Այո՛ , դժբաղդաբար ընտանեկան կեանքը միշտ այնքան մաքուր է , ինչպէս որ պէտք էր ըլլար : Բայց այն բաները , որոնց կը ձգտիք , այն տեսակ բաներ են զորս մարդ չի կրնար գիտնալ գոնէ ոչ , յստակ կերպով : Այս պարագային ընդհակառակը . . .

թէ Դուք , մայրը կ'ուզէք իրաւունք տալ , թէ Ձեր . . . :

Տիկին Ա. Բայց ես չեմ ուզողը : Աչխարհի ոչ մէկ բանին փոխարէն կ'ուզեմ ես այդ բանը , աս է անա ինչ որ կ'ըսեմ :

Բաւաթոր Մ. Բայց միայն այն պատճառաւ , որովհետեւ թոյլ էք կամքով ինչպէս Դուք կ'ըսէք , եթէ Դուք թոյլ չըլլայի՞ք . . . : Տէ՛ր Աստուած . . . այս տեսակ դայթակղեցուցիչ միութիւն մը :

Տիկին Ա. Այո՛ . կ'ըսեն որ մենք ամէնքս ալ այս տեսակ միութիւններէ սերած ենք , եւ ո՞վ է այն , որ այսպէս անօրինած է այս աշխարհի մէջ , Բաւթոր Մանտէրս :

Բաւաթոր Մ. Այդ տեսակ խնդիրներու մասին խօսք չէի բանար ձեզի հետ : Տիկին Ալվինկ . ատոր համար պէտք եղած ըմբռնումը չունիք , Բայց թէ Դուք կը համարձակիք ըսել թէ Ձեր կողմէն թոյլ կամք ունենալ է . . . :

Տիկին Ա. Հիմա պիտի լսէք , թէ ինչ ըսել կ'ուզեմ : Ես վախկտաւ ու քաշուող եմ , որովհետեւ մէջս ուրուականային բան մը կայ , ուրկէ չեմ կրնար բոլորովին ազատիլ :

Բաւաթոր Մ. Ի՞նչպէս կ'անուանէիք այդ բանը :

Տիկին Ա. Ուրուականային : Երբ Ռէկկինէն եւ Օսվալտը ներսէն կը լսէի ինծի այնպէս կու գար թէ կը տեսնէի ուրուականը իմ առջեւ : Բայց գրեթէ կը հաւատամ Բաւթոր Մանտէրս թէ մենք ամէնքս ալ ուրուականներ ենք : Միայն այն չէ մեր մէջ եղողը զոր մեր հօրմէն ու մօրմէն ժառանգած ենք , կարգ մը հին , մեռած համոզումներ եւ խել մը հին կարծիքներու նման բաներ կան : Անիկա ոչ թէ մեր մէջ կ'ապրի , այլ մեր մէջ միւրձած է , ուրկէ չենք կրնար ազատիլ : Եթէ միայն լրագիր մը ձեռքս առնեմ , պարզապէս կարդալու համար , արդէն ինծի այնպէս կու գայ թէ կը տեսնեմ ուրուականները որոնք տողերուն ընդմէջէն կը սուրան : Ամբողջ Նորվեկիոյ մէջ պէտք է որ ուրուականներ ապրին : Ինծի կը թուի որ այնքան խիտ են ինչպէս աւաղը ծովեզերքին , եւ յետոյ մենք ամէնքս ալ այնքան ողորմելի կերպով լոյսէն կը փախինք :

Բաւարոր Մ. Օ՛, ահաւասիկ արդէն պըտուղը Ձեր ընթերցանութիւններուն : Իրա՛ւ, գեղեցիկ պտուղներ : Օ՛հ, այդ զգուելի, յուզող, ազատամիտ գրուածքները :

Տիկին Ա. Կը սխալիք, սիրելի Բաւարոր, Նոյն իսկ Դուք այն անձն էք որ զիս մտածելու առաջնորդեց, եւ ատոր համար շնորհակալ եմ Ձեզ :

Բաւարոր Մ. Ես :

Տիկին Ա. Այո՛, երբ դուք զիս կը ստիպէիք այն բանին մէջ մտնելու զոր կոչում ու պարտաւորութիւն կ'անուանէիք, երբ Դուք այդ բանը իբրեւ ուղիղ եւ ճշմարիտ կը գովէիք, որուն դէմ իմ ամբողջ հոգիս կը դայթակղէր : Այն ատեն էր որ կ'ուզէի Ձեր առած սկզբունքները իմ իսկ անձիս վրայ քննել : Միայն մէկ հատ, պզտիկ կար մը կ'ուզէի քակել, բայց երբ ատիկա կը քակէի ամբողջը կը քակուէր, . . . եւ այն ատեն կը տեսնէի թէ ամբողջն ալ մեքենայի կարուածք էր :

Բաւարոր Մ. (Տաճ յայնմ, յաղաւթ) Պէ՛տք է եղբւր ասիկա իմ կեանքիս դժուարագոյն մաքառման վաստակը ըլլալ :

Տիկին Ա. Այդ բանը աւելի Ձեր ամէնէն տխուր պարտութիւնը անուանեցէք :

Բաւարոր Մ. Իմ կեանքիս մեծագոյն յաղթանակն էր, Հելէնէ. իմ անձիս դէմ տարած յաղթանակս :

Տիկին Ա. Ատիկա ոճրագործութիւն մըն էր մեր երկուքին դէմ :

Բաւարոր Մ. Երբ ես Ձեզմէ կը խնդրէի եւ կ'ըսէի « Ո՛վ կին, քու պսակեալիդ տունը դնա՛ », տեսնելով որ դուք խենդի պէս ինծի կուգայիք եւ կը պոռայիք. « Ահա՛ հոս եմ, ա՛ռ զիս » ոճրագործութիւն մըն էր այդ :

Տիկին Ռ. Ինծի համար, այո՛ :

Բաւարոր Մ. Իրար չենք հասկնար կոր :

Տիկին Ա. Գոնէ հիմա այլեւս ոչ :

Բաւարոր Մ. Երբէք . . . , երբէք, ոչ իսկ մէկ անգամ, իմ ամէնէն թաքուն մը տաժուաներուս մէջ ուրիշ բան մտացած չեմ Ձեր մասին բայց եթէ իր կինը իմ բարեկամիս :

Տիկին Ա. Գոնէ Դուք կը հաւատա՞ք այդ բանին :

Բաւարոր Մ. Հելէնէ՛ . . . :

Տիկին Ա. Յիշողութեամբ, այնքան զիւրաւ մարդ կրնայ ինքզինքը կորսնցնել :

Բաւարոր Մ. Ես ոչ : Ես այն եմ զոր միշտ եղած եմ :

Տիկին Ա. (Խօսքը «բէշ քանի՛ ճշմարտութիւն» յայնմ) Այո՛, այո՛, այո՛, . . . այլեւս չըխօսինք այդ հին ատեններուն վրայ : Հիմա, մինչեւ ականջիդ յանձնաժողովներու եւ պաշտօններու մէջ մխրճած էք, եւ ես ամէն կողմ կ'երթամ եւ կը մաքառիմ երեւելի եւ աներեւոյթ ուրուականներու հետ :

Բաւարոր Մ. Երեւելիները հեռացնելու համար կ'ուզեմ օգնել Ձեզի, Այս ամէն բաներէն վերջ զորս այսօր սոսկումով լսեցի Ձերէն, չեմ կարող իմ խղճիս առջեւ պատասխանատուութիւն մը ստանձնել, երկտասարդ, անգիտակ ազջիկ մը Ձեր տանը մէջ ձգելու համար :

Տիկին Ա. Ամէնէն աղէկը չէ՞ք համարիր, երբ կարող ըլլայիք զինքը ապահովել : Ըսել կ'ուզեմ . . . լաւ ամուսնութեամբ մը :

Բաւարոր Մ. Անտարակոյս : Ատիկա ամէն կերպով աղջկան համար ցանկալի կը թուի ինձ : Մանաւանդ Ռէկինէ հիմա այն տարիքին մէջ է, ուր . . . այո՛, ես լաւ մը չեմ հասկնար, բայց . . .

Տիկին Ա. Ռէկինէ արդէն կանուխէն աճած էր :

Բաւարոր Մ. Այո՛, այնպէս չէ՞, Ես կը կարծէի որ մարմնական տեսակէտէն արդէն աչքի իյնալու չափ ուժեղ կերպով զարգացած էր, երբ ես զինքը իբր եկեղեցւոյ անդամ, հաստատուելուն կը պատրաստէի : Բայց հիմակու հիմա ամէն պարագայի մէջ անգամ մը պէտք է տուն երթայ, իր հօրը հսկողութեան տակ . . . : Ոչ, բայց էնկադրանա չէ . . . : Անիկա կրցեր է ինձմէ այս կերպով ճշմարտութիւնը ծածկել : (Նախաձեռնաբար «բէշ քանի՛ ճշմարտութիւն» յայնմ) :

Տիկին Ա. Ո՛վ կրնայ ըլլալ ասիկա : Մտէ՛ք :

Էնկադրանս . (Կէրպիւրեայ գէտադով դրան մէջ կ'ըսէր) Խոնարհաբար ներողութիւն կը խնդրեմ, բայց . . .

Բասրոր Մ. Օ՛, հը . . .

Տիկին Ա. Դո՛ւք էք, էնկստրանտ :

Էնկստրանտ. Սպասուհիներէն ոչ մէկը մէջտեղն էր, եւ այդ պատճառաւ համարձակեցայ, սանկ քիչ մը դրան զարնել :

Տիկին Ա. Աղէկ, չառ աղէկ. ներս չմտնէ՞ք, Խօսելի՛ք մը ունիք ինծի հետ :

Էնկստրանտ. (Ներս Գոնէլով) Ոչ, խոնարհաբար շնորհակալութիւն կը յայտնեմ : Քանի մը խօսք ունէի միայն Պարոն Բասթորին ըսելիք :

Բասրոր Մ. (Սենեակէն Բլ վեր վար պրլ-տելով) Հը՛. ինծի՛ հետ խօսք ունիք, ա՛ռ է Ձեր ուզածը :

Էնկստրանտ. Այո՛, չառ կը փափաքէի . . .

Բասրոր Մ. (Անոր առջեւ կենտրոն) Ուրեմն, կրնամ հարցնել թէ ի՞նչ է Ձեր ուզածը :

Էնկստրանտ. Այո՛, սա է իսկապէս, պարոն Բասթոր, որ մենք վարը մաքրելու վրայ ենք : Խորին մեծարանքս, յարգամեծար տիկին, . . . ահաւասիկ ըտլոր դործերը լմնցած են ալ, եւ ինծի այնպէս կու գայ որ չառ գեղեցիկ եւ յարմար բան մը պիտի ըլլար եթէ՛ մենք որ ամբողջ ժամանակը պատշաճէն կերպով միասին աշխատեցանք . . . եթէ մենք այս իրիկուն պզտիկ հողեհանգիստով մը փակէինք :

Բասրոր Մ. Հողեհանգի՛ստ մը : Վարը ապաստանարանին մէջ :

Էնկստրանտ. Այո՛, բայց եթէ այս բանը պարոն Բասթորին այնքան յարմար չերեւար, այն ատեն . . .

Բասրոր Մ. Օ՛ անշուշտ այդ բանը ինծի յարմար կ'երեւայ, բայց . . . հը՛ . . .

Էնկստրանտ. Ես ինքս յաճախ իրիկունները հոն հողւոյն համար աղօթած եմ . . .

Տիկին Ա. Իրա՛ւ :

Էնկստրանտ. Այո՛, երբեմն երբեմն, ինչ որ մարդիկ պզտիկ ամիացում մը կ'անուանեն : Բայց ես անարժէք հասարակ մարդուն մէկն եմ եւ պէտք եղած շնորհքը չունիմ . . . Աստուած ողորմի ինծի . . . եւ ահա միտքս ինկաւ որ քանի որ պարոն Բասթոր Մանտէրսը այս տեղ է, ուրեմն այն ատեն . . .

Բասրոր Մ. Այո՛, ինծի նայեցէք էնկստրանտ, նախ պէտք է որ ձեզի հարցում մը ուղղեմ : Այդ տեսակ հաւաքման մը համար անհրաժեշտ տրամադրութեան մը մէջ կը

գտնուի՞ք : Ձեր խղճմտանքը առանց խայթի, թեթեւ կը զգա՞ք :

Էնկստրանտ Այո՛, Պարոն Բասթոր, թող Աստուած օգնէ մեզի, իրաւ որ չարժեք խղճմտանքի վրայ խօսիլ :

Բասրոր Մ. Այո՛, նոյն իսկ այդ մասին պէտք է խօսինք : Ի՞նչ պիտի ըսէք ասոր :

Էնկստրանտ. Այո՛, խղճմտանքը . . . ատոր վիճակը երբեմն կրնայ գէշ ըլլալ :

Բասրոր Մ. Դոնէ կը զգա՞ք ադ բանը : Բայց առանց խուսափողական միջոցներու պիտի ըսէք ինծի, . . . թէ ինչպէս է Ռէկինէի խնդիրը :

Տիկին Ա. (Ուշով) Բասթոր Մանտէրս :

Բասրոր Մ. (Հանդարտեցող յայտով) Դուք ինծի ձգեցէք . . .

Էնկստրանտ. Ռէկինէի՛ն. Յիսուս Քրիստոս, ի՞նչպէս վախճուցիք զիս : (Տիկին Աւելիկն երեւելէն) Բայց Ռէկինէին բան մը չէ պատահած :

Բասրոր Մ. Այնպէս կ'ուզենք յուսալ : Բայց ըսել կ'ուզեմ որ Ձեր եւ Ռէկինէի միջեւ եղած խնդիրը ի՞նչպէս է : Դուք ի՞ր հայրն էք, այնպէս չէ՞ :

Էնկստրանտ. (Անվարան կերպով) Այո՛. . . հը՛ . . . Պարոն Բասթոր, բայց դուք գիտէ՞ք իմ եւ ողորմած հօգի Եօհաննայի միջեւ կեցած պատմութիւնը :

Բասրոր Մ. Ճշմարտութիւնը այլեւս չի խեղաթիւրեմք : Ձեր մեռած կինը Տիկին Ալվինիկ տունը ձգելէ առաջ իրեն՝ ամէն բան եղածին պէս պատմած է :

Էնկստրանտ. Բայց միեւնոյն բանն է . . . Իրա՛ւ ըսած է ամէն բան :

Բասրոր Մ. Ալբուսուած էք էնկստրանտ, էնկստրանտ. Եւ Եօհաննան որ այնքան անմեղ կերպով կ'երդնուր . . .

Բասրոր Մ. Կը հրաժարէ՛ր :

Էնկստրանտ. Ոչ միայն երդում կ'ընէր, եւ այնքան ալ անկեղծ կերպով :

Բասրոր Մ. Եւ լոտը այս տարիներու միջոցին ճշմարտութիւնը պահեցիք ինէ : Պահեցիք ինէ, որ ամէն բանի մէջ Ձեզի վստահած էր :

Էնկստրանտ. Այո՛, դժբաղդարար ըրի այդ բանը :

Բասթոր Մ. Ես արժանի՞ք էի այդ բանին, ինկադրանտ : Միթէ ես միշտ պատրաստ չեմ դանուած թէ գործով եւ թէ խօսքով Զեզ օգնելու, այնքան որ իմ միջոցներս ինծի կը ներէին : Պատասխանեցէք : Ըսածիս պէս չէ՞ր :

Ինկադրանտ . Շատ անգամ իրաւ վիճակս գէշ եղած պիտի ըլլար, եթէ Բասթոր Ման տէրսը չունենայի :

Բասթոր Մ. Եւ հիմա այդ կերպով երախտագիտութիւննիդ կը յայտնէք : Զիս ստիպողական հարկի մը տակ կը դնէք եկեղեցիի տուամարին մէջ անճիշդ բաներ արձանագրելու, եւ ամբողջ տարիներ այդ մասին ինծի բան մը չէք ըսեր, բան մը զոր պարտական կը մնայիք հանդէս ինծի եւ ճշմարտութեան : Զեր գործելու եղանակը բողբոջին անարդարանալի եղած է, ինկադրանտ, եւ այսօրուքն սկսեալ մենք երկուքս իրարու հետ գործ մը չունինք այլեւս :

Ինկադրանտ . (Հաւաքելով) Այո՛, հետեւանք ատ պիտի ըլլայ :

Բասթոր Մ. Նաեւ ի՞նչպէս կ'ուզէիք ինքզինքնիդ արդարացնել :

Ինկադրանտ . Պէտք էր թերեւս երթար եւ իր վրայ ծանրացած ամօթը աւելի մեծցնէր, քանի որ ատոր մասին ամէն տեղ կը խօսէր : Պարոն Բասթոր, երեւակայեցէք, որ եթէ Դուք միւսեւոյն պարագաներու մէջ գրտնուէիք, ինչպէս ողորմած հոգի Եօհաննան :

Բասթոր Մ. Ե՛ս :

Ինկադրանտ . Այո՛, բայց ըսել չեմ ուզեր ուղղակի այնպէս : Ըսածս միայն սա է, որ եթէ Դուք, պարոն Բասթոր, բան մը ունենայիք, որուն համար մարդոց աչքին ամօթապարտ զգայիք ինքզինքնիդ, ինչպէս որ

սովորութիւն է ըսել : Մենք, մարդկային արարածներս, պէտք չէր որ չափազանց խստութեամբ դատէինք խեղճ կին մը, պարոն Բասթոր :

Բասթոր Մ. Բայց ես այդ տեսակ բան չեմ ըներ : Ուղղակի Զեզ դէմ են գանգատներս :

Ինկադրանտ . Կարո՞ղ եմ թերեւս պզտիկ, անկարեւոր հարցում մը ընել Պարոն Բասթոր :

Բասթոր Մ. Շա՛տ աղէկ . հարցուցէք տեսնենք :

Ինկադրանտ . Լաւ եւ ճիշդ գործ մը չէ՞ եթէ մարդ մը անկեալ մը վեր կ'առնէ :

Բասթոր Մ. Բնական է որ այո՛ :

Ինկադրանտ . Եւ մէկը իր անկեղծութեամբ տուած մէկ խօսքը պէտք չէ որ պահէ :

Բասթոր Մ. Հա՛րկաւ պէտք է բայց...

Ինկադրանտ . Այն տոնն երբ Եօհաննա դժբաղդութեան մէջ ինկած էր այդ Անգլիացիին երեսէն — կամ թէ թերեւս անիկա Ամերիկացի մը կամ Ռուսաստանցի մըն էր, — այն տոնն քաղաք կուգար : Խեղճը : Մէկ կամ երկու անգամ արդէն զիս բնաւ քթին չէ տարած, որովհետեւ ինքը կը նայէր այն բոլոր բաներուն, որոնք գեղեցիկ էին, եւ ես ոտքիս վրայ այս պակասութիւնը ունէի : Այո՛, Պարոն Բասթոր, հարկաւ կը յիշէք որ ես համարձակած էի պարապրահէ մը ներս մտնել, ուր ծովու վրայ ճամբորդող մարդիկ, ինչպէս կ'ըսեն, տաքցած գլխով ու գլխով վիճակի մէջ ասդին անդին կ'երթային : Եւ երբ կ'ուզէի իրեն հասկցնել որ նոր կեանք մը սկսինք...

Տիկին Ա. (Դիմացը պատահանին առջեւ) չը՛...

Վ Ր Ի Պ Ա Կ

Մասիս 15րդ թիւին ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ տնօրէնը կրող յօդուածին մէջ հետեւեալ տպագրական սխալները սպրդած են .

Էջ 482 Ա. սիւնակ 18րդ տողէն պէտք է կարդալ . «որ սրահի մը մէջ մտնելով պիտի տեսնէր հոն հոծ բազմութիւն մը նստած ծանր օդին մէջ եւ զարմանալով պիտի հարցնէր ինքզինքին», եւայլն :

Էջ 482 Բ. սիւնակ 4րդ տողէն պէտք է է կարդալ . «թերեւս թէ անոնք մեր կեանքի շատ ազեղ կողմերը մեզ ներէին, սակայն այս խոչըրը եւ զգուշիւն երբէ՛ք» :

Էջ 482 Բ. սիւնակ 41րդ տողէն պէտք է կարդալ . «որ մեր տղայ հասակէն մեզ փոխանցուած մի սխալ ըմբռնում է, եւ նման ուրիշ նախապաշարունակութեամբ ցոյց կուտան թէ որքան հզօր են անոնք եւ ինչքան ամուր կերպով կը բռնանան մեր դատողութեան վրայ», եւայլն :

Էջ 483 Բ. սիւնակ առաջին տողէն պէտք է կարդալ . «դուրս նետուելու արժէքը միայն ունեցող քուրջ մը կը դարձնեն» :



ԿԱՆԱՆՑ ՇԱՐԺՈՒՄԸ ՌՈՒՍԻՈՅ ՄԷՋ

— 330 —

ՔԷԹԷ ՇԻՐՄԱՆԷՐ



ՌՎԱՆԴԱԿ Ռուսիոյ 100 միլիոն բնակիչներէն այրերը միշտ առաւելութիւն ունին կիներու վրայ՝ ամէն քաղքի մէջ։ Բացառութիւն կը կազմէ մի միայն Բոլոնիան՝ ուր կիները բազմաթիւ են։

Իր աշխարհագրական դիրքով, Ռուսիա չէ կրցած զերծ մնալ արեւելեան ազդեցութիւններէ։ Իրաւ է որ միակնութիւնն է տիրող Ռուսիոյ մէջ, բայց միջին ու բարձր դասակարգերու պատկանող կիները ենթարկուած էին չափ մը խտրութիւններու, եւ արդիւնաւոր էր իրենց ո՛ր եւ է օտարի մը հետ տեսնուելու։

Դաստիարակութիւն չստացած եւ նոյն իսկ կրթութենէ զուրկ, ռուս կիներ կը մնար իր հօրը եւ ամուսնին բացարձակ արամադրութեանը տակ։ Ասոր հետ մէկտեղ, միշտ ինչքերու բաժանման դրութեան տակ կ'ապրէր անիկա։ Իր անձնական հարստութիւնը իրեն կը պատկանէր եւ ամուսինը՝ առանց մասնաւոր հրամանի մը չէր կրնար դպչիլ անոր։

Ինչքերու բաժանման այս դրութիւնը Ռուսիոյ մէջ մինչեւ այսօր կը գործադրուի օրինապէս։

Ինչպէս հին ատենները, այսօր ալ ռուս կիներ կը մասնակցի վարչային քուէարկութեան։ Բայց այդ իրաւունքը կը ստանայ մի միայն ընտանիքին պետը եղած ատեն։ Կիներ երբ այդ դիրքը ունենար, կրնար նաեւ իր բաժինը ստանալ տարուէ տարի՝ քաժնուած մշակելի հողերէն։ Նոյն իսկ ամուսինը՝ եթէ անկարող կամ անարժան ըլլայ վարել հասարակութեան մէջ իրեն պատկանող գործերը՝ զիւղապետը կնոջ մը կը յանձնէ այն հողը՝ ընտանիքը իրաւունք ունի ստանալու։

Քաղաքներու մէջ, կալուածատէր եւ հարկատու կիները իրաւունք ունին քուէարկելու՝ քաղաքային խորհուրդներու համար։ Քուէարկութիւնը կը կատարուի պատգամաւորութեամբ։ Դարձեալ կալուածատէր եւ հարկատու կիները, պատգամաւորութեամբ կրնան մասնակցիլ նահանգային ժողովներու։

Ռուս կնոջ ազատագրութեան նախաձեռնութիւնը ունեցաւ Մեծն Պետրոս (1689-1725), որ հրովարտելով մը ջնջեց այն խրատութիւններն ու արգելքները՝ որոնք ռուս կիներուն վրայ ծանրացած էին, այսպէսով մեծ բարիք մը ընելով անոնց, ու միեւնոյն ատեն միջոցը տալով ազատօրէն զարգանալու։ Բան մը՝ որուն անկարող էին իրենց նախապէս ենթարկուած արգելափակ կեանքին մէջ։

Բայց Մեծն Պետրոս մի միայն աշխարհիկ կեանքին դռները բացաւ Ռուս կնոջ առջեւ, առանց անոնց պատրաստուած ըլլալուն, այնպէս որ, բոլոր այդ հիմնական կրթութիւնէ զուրկ եւ դաստիարակութիւն չստացած կիները այդ նոր կեանքին մէջ եւ կոչու ու առանց մարդոց ալ միջեւ, չկրցան միշտ շատ յանձնարարելի կերպով օգտուիլ իրենց ազատութենէն։ Ասանկով Ռուս ընկերութեան մէջ յառաջ եկաւ բարքերու զգալի թեթեւութիւն մը։

Կատարինէ Բ. Կայսրուհին (1762—1796) հասկցաւ որ այդ գէշութեան դարմանը կը կայանայ երիտասարդ աղջիկներու մտաւոր ու բարոյական կրթութեան մէջ։ Այս պատճառաւ, արեւմտեան Եւրոպայի նշանաւոր մարդոց զիմեց, մասնաւորաբար Վոլթէռի՝ որ այն ատեն Զուիցերիա կը բնակէր եւ խնդրեց որ իրեն զրկեն դարգացած ու լաւ կրթուած դաստիարակուհիներ՝ իր կայսրութեան մէջ ստանձնելու համար ազնուականի եւ քաղաքացիներու աղջկանց նախնական ու երկրորդական կրթութեան հոգը։

Պէրնի հանրապետութեան խորհուրդը սակայն՝ որուն Վոլթէր զիմեց այս առթիւ, արգելք եղաւ կարգ մը զուեցերեացի աղջիկներու՝ որոնք դաստիարակչուհիի պաշտօնը վարելու նպատակով կ'ուզէին Ռուսիա անցնիլ։ Խորհուրդը կ'առարկէր թէ կին մը՝ որ բարոյական մեծ համարում մը չէր վայելէր եւ որուն սիրահարները կը թուէր բովանդակ Եւրոպա, չի կրնար քաղաքակրթիչ գործ մը ի գլուխ հանել։

Բայց կայսրուհին ուրիշ կողմէ դտաւ իրեն պէտք եղածը եւ նոյն իսկ հաստատեց Օրիոդոնեքու Վարժարան մը՝ ուր Ռուս երիտասարդ աղջիկներու կ'ուսուցուէր նախնական ծանօթութիւններ, շատ Ֆրանսերէն, քիչ մը գիտութիւն, երաժշտութիւն, գծագրութիւն, պար ու մանաւանդ վարուելու կերպեր։

Որչափ ալ պակասաւոր երեւայ հիմա, այս կրթութիւնը՝ իր ժամանակին մեծ յառաջադիմութիւն մը եղաւ։

Նաբոլէոնեան կռիւները, Պօղոս եւ Ալէքսանդր Առաջին կայսրերու օրով Ռուսիոյ ունեցած քաղաքական կացութիւնը արգելք

եղան Ռուսիոյ մէջ՝ կանանց շարժումին զարգացման։ Սակայն, ազատագրական ձգտումները՝ որոնք արտաքինապէս չէին կրնար յայտնուիլ, վառ կը մնային սիրահրու մէջ։ Մշակուած դասակարգերու պատկանող Ռուս կինը չափելով այն համեմատութիւնը որ կը գտնուէր իր նպատակին եւ իր կարողութեան միջեւ, իսկոյն հասկցաւ ոչնչութիւնը այն դաստիարակութեան զոր իրեն կու տային Օրիոդոնեքու վարժարանին մէջ։ Այնպէս որ՝ եւնգլոթիքսոլթան՝ (վարժարանի աշակերտուհին), ծաղրական անձնաւորութիւն մը դարձաւ՝ որուն խորին ազիտութիւնն ու վերացական գիտութիւնը կը ծաղրուէր Ռուս մտաւորականութեան կողմէ։

1857ին էր որ բարենորոգում մը եղաւ Ռուս աղջիկներու երկրորդական կրթութեան մէջ։ Ալեքսանդր Բ. կայսրը՝ զիւրամատոյց ըլլալով արեւմտեան Եւրոպայի ազատ դադավարներուն, կը մտածէր մոժիկներու ազատագրութեան վրայ։ Կայսրուհին եւ իր հօրաքոյրը՝ Էլէն Բալլուիլա՝ երկուքն ալ համակիր կ'ընէրու ազատագրութեան դադաւարին, օգտուեցան կայսեր ազատական արամագրութենէն իրմէ խնդրելու համար որ Սէն-Քէդերսպուրկի մէջ երիտասարդ աղջիկներու համար բարձրագոյն վարժարան մը հաստատէ։

Կայսրը ընդունեց, եւ վարժարանը կառուցուեցաւ 1857ին։ Այս վարժարանը ճշմարիտ նորութիւն մը եղաւ, ո'չ թէ միայն գիշերօթիկներու բաժանում մը ունէր՝ աղջկանց երկրորդական ու նախնական վարժարաններուն պէս, հասցա նաեւ ցորեկօթիկներու բաժանում մըն ալ։ յետոյ, միայն ազնուականի եւ քաղաքացիներու աղջիկները չէ՛ որ հոն կը յաճախէին, նոր վարժարանը իր դուռները բոլորովին բացած էր ամէն դասակարգի պատկանող աղջիկներու։

Գալով նոր վարժարանին ծրագրին, յար եւ նման էր մանչերու բարձրագոյն վարժարաններու ծրագրին, եւ շատ լուրջ հանգամանք մը ունէին աւանդուած ուսուցիչները։

Այսօր, Ռուսիոյ մէջ կան աղջկանց 350 բարձրագոյն վարժարաններ, ամենքը մէկ ունենալով 10 հազար աշակերտուհի միայն։

Բարձրագոյն վարժարանէն ելլելուն պէս

առաջին վկայուած աղջիկները շիտակ Համալսարանին ճամբան ձեռք առին, եւ ընդունուեցան Սէն-Բեդերսպուրկի ուսուցչականներուն կողմէ, որոնք, 1861ին, հակառակ կառավարութեան դիմագրելուն, բարձրագոյն կրթութեան ազատ դասընթացքներ հաստատած էին մայրաքաղաքին քաղաքատան մէջ :

Ուրիշ կիներ՝ ուղեկով բժշկութիւն ուսանելու եւ մանաւանդ Ռուսիոյ ընդարձակ գաւառներուն մէջ բժշկութեան տըքթեօններու զգալի պակասը դարմանելու նպատակով, դիմեցին պատերազմական նախարարութեան՝ որուն իրաւասութեան տակ կը գտնուէր Բժշկական Ակադէմիան : Այս կիները յաջողեցան արտօնութիւն ստանալ, նոյն իսկ Ակադէմիին դասաւանդութեանց ներկայ գտնուելու :

Այս ուսումնողուհիներէն շատերը՝ ինքնին շատ աղքատ եւ ո՛ր եւ է օգնութենէ զրկուած, քանի որ ընտանեկան յարկէն մեկնած էին, առանց իրենց ծնողքին հաւանութեան, դիւցազնական ճիգեր ըրին՝ հակառակ անօթութեան ու թշուառութեան՝ իրենց ուսմունքը կարենալ շարունակելու համար :

Սակայն կիները՝ երկար ատեն չպիտի կրնային վայելել համալսարանական կրթութիւնը : Կառավարութիւնը՝ գուշակած ըլլալով այն հետեւանքը որ կրնար առաջ գալ այդ մտաւորական բարեշրջումէն, աղքեւք եղաւ կանանց շարժումին զարգացման եւ իր ձեռքը ունեցած բոլոր միջոցներով մարանչեցաւ անոր դէմ :

Այդ հակադրեցութիւնը սկսաւ 1862ին՝ ուր կառավարութիւնը վերցուց Բեդերսպուրկի կանանց բարձրագոյն ազատ դասաւանդութիւնը :

Այս որոշման հետեւանքով, ուսում աշակերտուհիները թողուցին Ռուսիան եւ սկսան գաղթել դէպի Կէօթիսկէնի, Հայտէլպէրկի, եւլն. հանդարտիկ համալսարանները, ուր թէեւ դարմանք առնեց դասաւանդութեանց հետեւելու իրենց փափաքը, սակայն ընդհանրապէս լաւ ընդունելութիւն մը գտան : Աղքատ ապրեցան հոն, ինչպէս որ կ'ապրէին Ռուսիոյ մէջ, ամիսը 45 Ֆրանքով, եւ յարատեւութեան սքանչելի ոգիի մը շնորհիւ միայն կրցան յաջողիլ :

Բայց ասպիւն, Սէն-Բեդերսպուրկի կիները յուսահատած չէին : Ընկերութիւն մը կազմուեցաւ՝ որուն նախագահը՝ տիկին Քոնրատի 1867ին աղերսագիր մը մատոյց Ռուսիոյ բժշկիներուն եւ բնապատումներուն համաժողովին :

Այս աղերսագիրը՝ որ կանանց բարձրագոյն

դասաւանդութեանց վերարտօնութիւնը կը խնդրէր, մեծ համակրութեամբ ու միաձայնութեամբ ընդունուեցաւ համաժողովին կողմէ : Աղերսագիրը՝ նշանաւոր ստորագրութիւններով ծածկուած՝ համաժողովին կողմէ ներկայացուեցաւ Հանրային կրթութեան նախարարին :

Երեք տարի անցան առանց այդ մասին որոշում մը տրուելու : Վերջապէս, 1870ին, տիկին Քոնրատիի նախագահած ընկերութեան ծանուցուեցաւ թէ նախարարը կ'արտօնէր բնական գիտութեան եւ ուսման գրականութեան մասին դասախօսութիւններ՝ երկու սեռին համար ալ : Սակայն, հրամանագիրը երկու տարուան սահման մը զրած էր այս արտօնութեան, ինչ որ ուսանողներուն եւ ուսանողուհիներուն արդեւք կ'ըլլար լիակատար կերպով սորվիլ վերոյիշեալ ուսումները : Ասկէ՛ զատ նախարարը խիստ քննութեան մը կ'ենթարկէր այդ դասախօսութիւնները՝ որոնք պիտի տրուէին Բեդերսպուրկի Համալսարանին ուսուցչապետներուն կողմէ : Այս վերջիններուն կ'արդիւն նաեւ քննութիւն ընել, վկայական տալ աշակերտներուն եւ կը յանձնարարէր կիներու վերոյիշեալ ընկերութեան, ինք միայն ընել այս դաստիարակութեան ծախքերը :

Իրաւ որ այս կէս արտօնութիւններէն բաւական յուսախափ, եւ սակայն, ուսում կիները ընդունեցին իրենց տրուած արտօնութիւնները եւ այն դասախօսութեանց սրահը՝ զոր Հանրային կրթութեան նախարարը դրաւ իրենց տրամադրութեան տակ, իսկոյն լեցուեցաւ երկսեռ ունկնդիրներէ :

Այս դասախօսութեանց յաջողութիւնը երթալով կը չեչտուէր : 1874ին, անոնք մի' միայն կիներու յատկացուեցան ու փոխադրուեցան աղջկանց բարձրագոյն վարժարանի մը մէջ :

1885ին, ընկերութիւնը՝ որ տակաւին ինք կ'ընէր այս դաստիարակութեան ծախքերը, մասնաւոր առն մը գնեց ուր սկսան ըլլալ բարձրագոյն կրթութեան դասախօսութիւններ : Սակայն, քաղաքական պատճառներով՝ այս դասախօսութիւնները վերցուեցան 1886ին՝ Ռուս ուսանողուհիներու նոր գաղթականութիւն մը սկսաւ : Այս անգամ անոնք ուղղուեցան դէպի Չուիցիերիա, ուր Ձիւրիխի համալսարանը արդէն իսկ ուսումնողուհիներ կ'ընդունէր 1867էն սկսեալ : Ձիւրիխի եւ ժընէվի մէջ է ուր բոլոր այն ուսումնողուհիները՝ որոնք Բեդերսպուրկի բարձրագոյն դասախօսութիւնները անբաւական կը գտնէին, անցուցին իրենց քննութիւնները եւ վկայական ստացան :

Ռուս կառավարութիւնը զգալով այն հետեւեալները՝ որ կրնային առաջ գալ ռուս ուսանողներուն գաղթելէն, 1889ին վերաբացաւ Սէն-Բէդերսպուրկի աղջկանց բարձրագոյն դասախօսութիւնները, պայմանաւ որ աշակերտուհիներու թիւը 600ը չանցնէր; կաթոլիկ տարրը զեղջուէր $\frac{1}{3}$ ի, եւ թոշակները չատ աւելի բարձր ըլլային համալսարաններու ուսանողներուն վճարածէն:

Հակառակ այս սեղմումներուն, ընդունելութեան խնդրանքները 600ը անցան:

Այս դասախօսութիւնները մինչեւ այսօր կը շարունակուին Սէն-Բէդերսպուրկի մէջ:

Քանի մը խօսք ալ կին—բժիշկներուն վրայ, 1862էն սկսեալ՝ չկրնալով ընդունուիլ Բժշկական Ակադիմիին մէջ, իրենց ուսմունքը շարունակելու համար գացին Զուեցերիա ուր օրիորդ Սուսլովա՝ 1867ին ընդունեցաւ իր սօքթէօսի վկայականը՝ Զիւրիխի համալսարանէն: Ինքը առաջին կինը եղաւ Զուիցերիոյ մէջ այս աստիճանը ստացող:

Ուրիշներ հետեւեցան իր օրինակին, երբ 1872ին Ռուս կառավարութիւնը Բեդերսպուրկի Բժշկական վարժարանին մէջ կիներու յատուկ դասախօսութիւններ հաստատեց:

Դասախօսութիւններու այդ բաժինը անուանուեցաւ Դայեակներու յատուկ գիտական վարժարան, իսկ տփթօն տիւրոսը շարունեցաւ այն աշակերտուհիներուն՝ որոնք յաջողութեամբ անցուցին իրենց ելքի քննութիւնները: 1877—78ի պատերազմին ատեն միայն ճակատամարտի դաշակներուն վրայ իր բժիշկ մեծ ծառայութիւն մատուցանելէ ետքը իրենց արածուցութիւն արուեցաւ այդ տիւրոսը կրելու:

Ամբողջ տասը տարի անոնք կրցան վաշել իրենց յաղթանակը, եւ այն ուսանողուհիները՝ որոնք Սէն—Բէդերսպուրկի Ակադեմիին Բժշկական դասերուն կը հետեւէին, վարժարանէն մեկնած ատենին կրցան ստանալ սօքթէօսի վկայական:

Յետոյ, 1887ին, նոր հրովարտակ մը կըրկին արգիլեց աղջկանց դասախօսութիւնները, եւ 1898ին միայն սկսան յոյս ունենալ թէ Բժշկական Ակադեմիին դուռները կրկին պիտի բացուէին ուսանողներու առջեւ (*):

Սաղանի, Սարգսովի եւ Քիէվի համալսարանները երբեմն ընդունած են կին աշակերտուհիներ եւ երբեմն ալ անոնց համար յատուկ դասախօսութիւններ հաստատած:

Չենք կրնար հոս համառօտել այդ դասախօսութեանց յաջորդական արգելումներն ու վերաբացումները: Մոսկուա եւ Տորաթ մերժած են աշակերտուհիներ ընդունիլ:

Այսօր, Ռուսիոյ մէջ մօտաւորապէս կը գտնուին 700 կին—բժիշկներ սրտնք, — ինչպէս ըսինք արդէն, մեծ մասամբ դաւառային Բժիշկներու սպառիչ կեանքը կ'անցընեն: Անոնցմէ 150ը ունին պաշտօնական դիրքեր, իրր թաղապետական Բժիշկ, իրր առողջապահական քննիչ, եւայլն:

Սէն-Բէդերսպուրկի թաղապետութիւնը, չատ հեղ պէտք ունեցած է կին Բժիշկներու, թիֆոյի դէմ մարանչելու համար քաղքին թաղերուն մէջ եւ կամ այցելու Բժիշկի պաշտօնը ստանձնելու համար հիւանդանոցներու, վարժարաններու եւ բանտներու մէջ:

Սէն-Բէդերսպուրկի կանանց ընկերութիւնը որ Ռուսիոյ կանանց շարժումին կեդրոնն է, այսօր կազմուած է մօտաւորապէս 1000 ընտանիքներէ:

Հիմակուան նախագահուհին է Տիկին Աննա ար Շապանօֆ, Օլտէպուրկ իշխանին հաստատած աղոյ հիւանդանոցին Բժիշկը: Օլտէպուրկ իշխանը՝ Աղեքսանդր Բ. ի օրով՝ կանանց շարժումին ամէնէն դործունեայ նախաշարժիչներէն էր:

Կանանց շարժումը՝ Ռուսիոյ մէջ նշանակելի է մանաւանդ սա՝ տեսակետով, որ մեծ անձնութիւն մը եւ քաջութիւն մը առաջ բերած է կանանց քով եւ այրերէն ալ միշտ քաջաբերութիւն դրած: Մինչդեռ Անգլիոյ մէջ, համալսարանական իշխանութիւնները, Բժիշկները եւ գիտնականներու ընկերութիւնները զլխաւորաբար հակակիր դնուած են կիներուն հանդէպ, ուստի Բժիշկներու եւ բնագիտներու առաջին համաժողովը անոնց համար խնդրեց կանանց երկրորդական ու երրորդայն կրթութեան իրաւունքը, ինչ որ զանոնք ի վիճակի պիտի ընէր մրցելու այրերուն հետ: Նաեւ, ուստի Բժիշկները ոչ մէկ ատեն հակառակած են ուստի ուսանողուհիներու Սէն-Բէդերսպուրկի Բժշկական վարժարանը յաճախելուն:

(*) Կիները հիմա կ'ընդունուին հոն:

ԲԱՅ ՆԱՄԱԿ

Երիտասարդ բարեկամս,

Դուք ինձ կ'իմացնէք, թէ վերջացուցած էք այս տարի ձեր դպրոցական ուսումները եւ թէ մեծ փափաք ունիք հետեւելու բժշկական դասախօսութեանց, մի եւրոպական համալսարանի մէջ։ Դուք ինձ կը հարցնէք, թէ ինչ կարծիք ունիմ ձեր այս փափաքի մասին, թէ արդեօք կարող եմ ձեզ մի օգտակար խորհուրդ տալ համալսարանի ընտրութեան վերաբերմամբ, եւ թէ վերջապէս ինչպէս է բժիշկներու արդի վիճակը Կ. Պոլսոյ մէջ եւ ինչ յոյսեր կարող էք տածել ապագայի մասին, երբ արդէն վկայուած բժիշկ լինիք։ Թոյլ տուէք ինձ նախ եւ առաջ ձեզ ըսել, թէ որպէս զի մի գործ, լինի այդ մեծ կամ փոքր, յաջողի, պէտք ունի նախ մի ինքնաբոլիս եւ սրտեռանդ փափաքի։ Երկրորդ, կամեցողութիւն կոչուած բառական բարդ դէնքին, որու էական տարրերն են յարատեւութեան ոգին եւ դժուարութեանց յաղթելու ջանքը։ Երրորդ, նպատակին հասնելէ յետոյ, բարոյական այն ուժին որ զմեզ կարող կ'ընէ մնալու մի որոշ բարձրութեան վերայ եւ թերեւս աւելի եւս բարձրանալու։ Յաջողելու այս անհրաժեշտ պայմանները այնքան աւելի բարձր աստիճանով կը պահանջուին, որքան աւելի մեծ է գործը եւ որքան աւելի հեռուն կ'երթայ մեր փառասիրութիւնը։ Իսկ անշուշտ ինքնահաւանալի է եւ հարկ չկայ չեչտելու, թէ այս ամէնուն հետ հարկ է որ միանայ բնական ընդունակութիւնը կամ, եթէ մի քիչ աւելի պահանջկոտ լինինք, տաղանդը որու նկատին վերայ մարդիկ յաջողութենէ յաջողութիւն կը սուրան, մինչդեռ առանց անոր միայն դանդաղ քայլերով պիտի յառաջանային։

Բժշկութիւնը դեռ մինչեւ վերջին դարերը գիտնական հիմքէ եւ լոյսէ զուրկ, միայն արտաքին եւ հարեւանցի գիտողութեան վերայ դրուած մի արուեստ էր եւ մի ախտի եւ նորա յառաջ բերած արտաքին նշաններուն միջեւ կեցող կնապերը գրեթէ բոլորովին ան-

ծանօթ էին։ Այդ ժամանակի մէջ բժշկելու արուեստով պարագլուորները կը սիրէին իրրեւ կէս-հրաշագործներ եւ գերբնական գաղտնի միջոցներու օգնութեամբ բնութեան ամենամութ գաղտնեաց իրրեւ ներկու թափանցողներ ներկայանալ ժողովրդեան, անոր մտքին վերայ ազդելու համար։ Չունենալով դրական եւ մանրակրկիտ ծանօթութիւններ մարդկային մարմնին կազմութեան եւ ախտաբանութեան վերայ որ միայն այն ժամանակ ստեղծուեցաւ, երբ մարդկային դիակը կանոնաւոր հետազոտութեան առարկայ դարձաւ, իրենց տգիտութիւնը եւ անձեռնհասութիւնը պէտք ունէին խաւարին եւ հրաշային, հիւանդներուն վստահութիւն եւ հաւատք ներշնչելու համար իրենց կարողութեան եւ տրուած դեղերու եւ միջոցներու ուժին վերայ։

Սակայն դիտնական ճշմարտութեան սէրը վերջ դրաւ այս վիճակին եւ բժշկութիւնը զարգացած շատ երկիրներու մէջ այսօր բնապատմական հիման վերայ դրուած մի գիտութիւն է, որ կ'ընդունի դրական հետազոտութեան տուած ամէն արդիւնքները, կը մերժէ հրաշային ու միթինը եւ թէեւ առ այժմ սակաւին չկարողանայ կենսաբանական շատ երեւոյթներու գոհացուցիչ բացատրութիւններ տալ, սակայն կը նախադասէ դրական մեթոտներու յարած մնալ եւ նոցա կատարելապարժումէն փափաքուած լուծումը սպասել, քան թէ բնազանցական հետազոտութիւններու մէջ ի վտր թափառիլ։

Բժշկութիւնը անցնելով այսպէս մի ծածուկ արուեստի վիճակէն գիտնական լուրջ վիճակի մէջ, բոլոր անոնց համար որոնք կը պարագլին իր ուսումնասիրութեամբը, պէտք է դառնայ մտաւոր եւ հոգեկան բերկրութեան մի անսլաւ աղբիւր, վստի վր մարդկային մտքի համար ինչ բան աւելի հետաքրքրական եւ քաղցր կարող է լինիլ, քան եթէ ապահով մեթոտներու վրայ յենած, ծանօթանալ մարդկային օրգանիզմի շատ

բարդ երեւոյթները կառավարող օրէնքներուն հետ, գտնել եւ ըմբռնել այն կապերը որոնք ամենասերտ կերպով կը միացնեն զմեզ մայր-բնութեան հետ եւ ուղղակի մարդկութեան ստատարել: Եւ յիշատի ի՛նչ գեղեցիկ գործունէութիւն է այն, երբ բժիշկը կը խնամէ հիւանդը, անոր յոյս կը ներշնչէ եւ աւողացընելով կը վերադարձնէ զայն իր ընտանիքին եւ ընկերութեան եւ իր այս գործին մէջ այլ եւս ոչ թէ կը խարխալէ հիւանդուն պէս, այլ ճշմարիտ ծանօթութիւններու ասպարէսով, հաստատ եւ ասպահով քայլերով կը յառաջանայ իր վերայ առած փրկութեան գործը ի գլուխ հանելու: Խղճամիտ բժիշկին ջանքերը եւ գործը պէտք է օրհնուին, վասն զի չկայ մի այլ կոչում որու տուած բարիքը այնքան բացարձակապէս եւ անմիջական կերպով զգալի լինէր, ինչպէս անորը. նա ուղղակի կեանք կը բաշխէ ուր մահը մտաւորաւ եւ անխուսափելի էր եւ թէեւ շատ մարդիկ զանազան ձեւերով մարդկութեան բարեբար հանդիսացած լինին, սակայն անոնցմէ եւ ոչ մին չէ կարողացած եւ չէ կարող այնքան վճռական եւ վայրկեանական փէթով օգտակար լինիլ, ինչպէս յաճախ կ'ըլլայ ծանրապէս հիւանդացած մի անձի կամ երկունքի մէջ տառապող մի կնոջ մօտ կանչուած բժիշկը:

Եւ դուք, բարեկամս, բժշկական պաշտօնի այս մարդասիրական եւ վեհ կոչումէն հրապուրուելով է անշուշտ, որ կը ցանկաք զձեզ էսկիւլապի արուեստին նուիրել: Ես արդէն կը ճանչեմ գեղեցիկն եւ մեծին համար ոգեւորուելու կարող եւ պատրաստ ձեր հոգին: Դուք չէք այն չոր բնութիւններէն որոց համար գոյութիւն չունին խոհալները, վասն զի իրենց անձուկ միտքը եւ մանաւանդ տափակ հոգին զուրկ են զանոնք ըմբռնելու եւ սիրելու կարողութենէն: Ամէն ժամանակի մէջ, ամէն մեծ մարդիկ, լինէին անոնք գիտուններ, պետական անձեր կամ գիւնուորականներ, ունեցան իրենց մէջ մի կայծ այն եռանդէն որով վառուած էր Պոսիէթօս եւ որ զինքը մղեց սլանալու երկինք եւ հոն կրակը գողնալով բերել մարդկութեան նուիրելու: Ամէն ազգերու պատմութեան մէջ կը հանդիպինք այդ հզօր, առաջնորդող զէմքերուն

որոց մտածողութիւնը եւ զգացողութիւնը շատ աւելի խոր եղած է քան թէ իրենց ժողովրդինը եւ որոնք, կարծես նախախնամաւոր տնօրինութեամբ, երեւցած են իրենց ժողովրդի առջեւ նոր հորիզոններ բանալու եւ զայն դէպ ի նոր, աւելի բարդ ճակատագիրներ մղելու: Եւ բոլոր այս մարդիկ խոհալներն էին, իրենց հզօր դատողութեան կը միացնէին երեւակայութիւնը որ մայր է ամէն լայն, յանդուգն գաղափարներու եւ որ սակայն պէտք ունի հաշուող, կշռող եւ տնօրինող բանասկանութեան, որպէս զի անոնք կարողանան իրաջանութեան դառնալ, եւ այդ անձերուն վրայ հիմնալը, անոնցմով գրաւիլը արդէն սովորական մակարդակէն վեր բարձրանալ կը նշանակէ. այդ մի դրաւական է, թէ լուրջ ջանք կայ անոնց նմանող լինելու եւ թէեւ գիտակից, թէ մեր տրամադրելի ոյժերը անբաւական են անոնց հաւասարելու, սակայն պէտք է գոհանանք հաստատելով թէ նոյնութիւն կայ մեր եւ անոնց ուղղութեանը մէջ եւ սէտք է ուրախանանք երբ մի քանի քայլ աւելի յառաջ դացած լինինք քան մեր նախորդները: Եւ ճիշդ այս տեսութեամբ եւ մտածմամբ է, բարեկամս, որ ձեր փափաքը արդար եւ օգտակար կը համարիմ եւ խորհուրդ կու տամ, որ ձեր նախափորձ կոչումին զձեզ չուտով նուիրէք:

Կեդուները եւ ցեղային տարբերութիւնները մարդկութիւնը զանազան ազգութիւններու բաժնած են: Անոնք իրենց աւելի կամ պակաս որոշ բարքերը եւ սովորոյթները ունին եւ բոլոր խոհալական կապերուն մէջէն որոնք զանոնք կը միացնեն եւ համամարդկային ամբողջութիւնը կը կազմեն, կրօնքը եւ փիլիսոփայութիւնը եւ վերջին ժամանակներու մէջ գիտութիւնը իրրեւ ամենազօրաւորները պէտք է նկատել: Գիտութիւնը հայրենիք չունի եւ ուր խորհող եւ հետազօտող մտքեր կան, հոն կը ծաղկի նա եւ կը բարգաւաճի, եւ ոչսօր եւրոպական տարբեր ժողովուրդներ հաւասար իրաւունք ունին հպարտ լինելու, թէ գիտութիւնը իրենց է պարտական իր արդի վիճակը, վասն զի անոնց իւրաքանչիւրն ալ իր կարեւոր մասն ու բաժինը ունեցած է եւ ունի գիտութիւնը

յառաջացնող մեծ գործին մէջ : Եւրոպայի տարրեր համալսարանները իրարմէ կը դանաւանուին միայն լեզուի տարրերութեամբ, որով դասախօսութիւնները տեղի կ'ունենան , մինչդեռ նոցա առարկային , բուն նիւթին բացատրութիւնը կը բխի միեւնոյն գիտնական աղբիւրէն : Ճշմարտութեան հետախոյզ մըտքեր , ինչ ազդութեան ալ վերաբերին անոնք , իրենց աշխատութեանց մէջ շարունակ կը ձգտին գէպի միեւնոյն նպատակը , որ է իրարու փոխադարձաբար օգնել նոր ծանօթութիւններու գիւտին մէջ , ընու պակասը որ թողուած է մի նախորդ կամ ժամանակակից աշխատողէ եւ ճիշդ այս միակերպ ջանքերուն երդաշնակ միացումէն յառաջ եկած է գիտութեան ամենուրեք հաւասարութիւնը , աւոր աշխարհաքաղաքացիութիւնը : Այս շատ պարզ եւ ակներեւ ճշմարտութեան վերայ անշուշտ պիտի չարժէր այսքան ծանրանալ , եթէ ձեր նամակի մէջ իմ առաջ դրած չըլլայիք մի համալսարանի ընտրութեան հարցը : Դիպումա՞ք եւ հանգամանքները այնպէս բերին որ ես մի գերմանական համալսարանի մէջ սովորէի եւ այս բանի համար այսօր ոչ թէ միայն դժգոհ չեմ , այլ ինձ բողոքաւորութիւն կը համարիմ , որ առիթ ունեցայ մի նոր լեզու սովորելու , մի հիւսիսային ժողովրդի բարքերը մօտէն տեսնելու , բարքեր որոնք ոչ թէ միայն ֆիւսսակար չէին կարող լինիլ մեզ , Հայերուս համար , այլ թերեւս շատ ալ յարմար էին , երբ աչքի առջեւ բերենք հայութեան ամենահոծ մասին , այսինքն դաւառացիներու բարեխառնութիւնը եւ հոգին , եւ մի կողմ թողունք Կ. Պոլսի հայ գաղթականութիւնը , որ երկու որոշ ազդեցութիւններ կրած է , միջավայրինը եւ բարիգեանը եւ տակաւ հեռացած իր իսկական տիպարէն :

Բայց դուք , բարեկամս , կարող էք ընտրել մի ֆրանսական համալսարան . դուք անկէ նոյնչափ պիտի օգտուէք որքան գերմանականէն , մանաւանդ որ պիտի ունենաք այս պարագայի մէջ լեզուն հասկնալու առաւելութիւնը որ պիտի պակսէր ձեզ , եթէ երթայիք Գերմանիա , ուր նախ պիտի հարկադրուէիք լեզուն ուսումնասիրել : Էականը դասախօսութիւններէն օգտուելն է եւ վկայուելէ յետոյ , եթէ հնար եղաւ , մի մեծ կամ փոքր հիւանդանոցի մէջ աշխատելը , վասն զի միայն այս կերպով կարող էք բժշկութեան զանազան ճիւղերուն վերայ որոշ գործնական ծանօթութիւններ իւրացնել եւ յետոյ հիւանդանոցէն դուրս սպահով եւ հաստատ քայլել : Շատ սխալ է ենթադրել , թէ բժիշկը վկայուելէ յետոյ անմիջապէս գործելու սկսելով , կարող է իր գործնական կրթութեան պակասը հետզհետէ ընդլայնել հիւանդներ տեսնելով եւ դարմանելով : Միայն հիւանդանոցի ծառայութեան մէջ եւ հեղինակաւոր վարպետներու անմիջական հսկողութեան տակ կարող է բժիշկը իր ապագայ գործունէութեան փորձառութիւնը շահիլ , վասն զի միայն այդ միջոցին է որ նա սուրիշ ունի մանրամասնօրէն եւ գիտութեան խիստ մեթոտներուն համաձայն իւրաքանչիւր հիւանդի հետ զբաղուել , հետեւելով հիւանդութեան ընթացքին սկիզբէն մինչեւ վախճանը : Այսպէս զիտուած եւ ուսումնասիրուած հիւանդութիւններու պատկերը որոշ եւ պայծառ կը դրոշմուի բժշկին մտքին մէջ եւ կարող կ'ընէ զինքը ապագային արագ եւ գրեթէ միշտ անվրէպ ճանչնալու մի նոր յայտնուող հիւանդութեան ընթացքը , մինչդեռ նուազ փորձառուն պիտի հարկադրուէր ընդ երկար խորնալիւն : Հիւանդանոցէ դուրս ձեռք բերուած փորձառութիւնը , մանաւանդ Արեւելքի մէջ , ուր մարդիկ ի բնէ անվատահ եւ յեղեղուկ են եւ կը սիրեն բժիշկը սոսկ փոխել , միայն թերի մնալու դատապարտուած է , վասն զի բժիշկին միջոց չմնար իւր հիւանդը կանոնաւորապէս տեսնելու եւ դիտելու . թող որ , եթէ նոյնիսկ միջոց ունենար , մտքի հանգստութիւնը եւ ժամանակը պիտի պակսէր իրեն , իր գիտողութիւններէն հապէս օգտուել կարենալու համար : Ահա թէ ինչո՞ւ համար հիւանդանոցի մէջ ծառայութեան խնդիրը այսքան կարեւոր է եւ թէ ինչո՞ւ զայն ձեզ ջերմապէս կը յանձնարարեմ :

Որքան բարձր է մի ժողովուրդի բարոյականի մակարդակը , նոյնքան ալ բարոյապէս բարձր կանգնած պիտի լինին նորա դահազան դասակարգերը , նոյնքան նախանձախնդիր պիտի լինին իրենց կոչումի արտոյ , եթէ հնար եղաւ , մի մեծ կամ փոքր հիւանդանոցի մէջ աշխատելը , վասն զի միայն այս կերպով կարող էք բժշկութեան զանազան ճիւղերուն վերայ որոշ գործնական ծանօթութիւններ իւրացնել եւ յետոյ հիւանդանոցէն դուրս սպահով եւ հաստատ քայլել : Շատ սխալ է ենթադրել , թէ բժիշկը վկայուելէ յետոյ անմիջապէս գործելու սկսելով , կարող է իր գործնական կրթութեան պակասը հետզհետէ ընդլայնել հիւանդներ տեսնելով եւ դարմանելով : Միայն հիւանդանոցի ծառայութեան մէջ եւ հեղինակաւոր վարպետներու անմիջական հսկողութեան տակ կարող է բժիշկը իր ապագայ գործունէութեան փորձառութիւնը շահիլ , վասն զի միայն այդ միջոցին է որ նա սուրիշ ունի մանրամասնօրէն եւ գիտութեան խիստ մեթոտներուն համաձայն իւրաքանչիւր հիւանդի հետ զբաղուել , հետեւելով հիւանդութեան ընթացքին սկիզբէն մինչեւ վախճանը : Այսպէս զիտուած եւ ուսումնասիրուած հիւանդութիւններու պատկերը որոշ եւ պայծառ կը դրոշմուի բժշկին մտքին մէջ եւ կարող կ'ընէ զինքը ապագային արագ եւ գրեթէ միշտ անվրէպ ճանչնալու մի նոր յայտնուող հիւանդութեան ընթացքը , մինչդեռ նուազ փորձառուն պիտի հարկադրուէր ընդ երկար խորնալիւն : Հիւանդանոցէ դուրս ձեռք բերուած փորձառութիւնը , մանաւանդ Արեւելքի մէջ , ուր մարդիկ ի բնէ անվատահ եւ յեղեղուկ են եւ կը սիրեն բժիշկը սոսկ փոխել , միայն թերի մնալու դատապարտուած է , վասն զի բժիշկին միջոց չմնար իւր հիւանդը կանոնաւորապէս տեսնելու եւ դիտելու . թող որ , եթէ նոյնիսկ միջոց ունենար , մտքի հանգստութիւնը եւ ժամանակը պիտի պակսէր իրեն , իր գիտողութիւններէն հապէս օգտուել կարենալու համար : Ահա թէ ինչո՞ւ համար հիւանդանոցի մէջ ծառայութեան խնդիրը այսքան կարեւոր է եւ թէ ինչո՞ւ զայն ձեզ ջերմապէս կը յանձնարարեմ :

Որքան բարձր է մի ժողովուրդի բարոյականի մակարդակը , նոյնքան ալ բարոյապէս բարձր կանգնած պիտի լինին նորա դահազան դասակարգերը , նոյնքան նախանձախնդիր պիտի լինին իրենց կոչումի արտոյ , եթէ հնար եղաւ , մի մեծ կամ փոքր հիւանդանոցի մէջ աշխատելը , վասն զի միայն այս կերպով կարող էք բժշկութեան զանազան ճիւղերուն վերայ որոշ գործնական ծանօթութիւններ իւրացնել եւ յետոյ հիւանդանոցէն դուրս սպահով եւ հաստատ քայլել : Շատ սխալ է ենթադրել , թէ բժիշկը վկայուելէ յետոյ անմիջապէս գործելու սկսելով , կարող է իր գործնական կրթութեան պակասը հետզհետէ ընդլայնել հիւանդներ տեսնելով եւ դարմանելով : Միայն հիւանդանոցի ծառայութեան մէջ եւ հեղինակաւոր վարպետներու անմիջական հսկողութեան տակ կարող է բժիշկը իր ապագայ գործունէութեան փորձառութիւնը շահիլ , վասն զի միայն այդ միջոցին է որ նա սուրիշ ունի մանրամասնօրէն եւ գիտութեան խիստ մեթոտներուն համաձայն իւրաքանչիւր հիւանդի հետ զբաղուել , հետեւելով հիւանդութեան ընթացքին սկիզբէն մինչեւ վախճանը : Այսպէս զիտուած եւ ուսումնասիրուած հիւանդութիւններու պատկերը որոշ եւ պայծառ կը դրոշմուի բժշկին մտքին մէջ եւ կարող կ'ընէ զինքը ապագային արագ եւ գրեթէ միշտ անվրէպ ճանչնալու մի նոր յայտնուող հիւանդութեան ընթացքը , մինչդեռ նուազ փորձառուն պիտի հարկադրուէր ընդ երկար խորնալիւն : Հիւանդանոցէ դուրս ձեռք բերուած փորձառութիւնը , մանաւանդ Արեւելքի մէջ , ուր մարդիկ ի բնէ անվատահ եւ յեղեղուկ են եւ կը սիրեն բժիշկը սոսկ փոխել , միայն թերի մնալու դատապարտուած է , վասն զի բժիշկին միջոց չմնար իւր հիւանդը կանոնաւորապէս տեսնելու եւ դիտելու . թող որ , եթէ նոյնիսկ միջոց ունենար , մտքի հանգստութիւնը եւ ժամանակը պիտի պակսէր իրեն , իր գիտողութիւններէն հապէս օգտուել կարենալու համար : Ահա թէ ինչո՞ւ համար հիւանդանոցի մէջ ծառայութեան խնդիրը այսքան կարեւոր է եւ թէ ինչո՞ւ զայն ձեզ ջերմապէս կը յանձնարարեմ :

ժանապատուութեանը եւ իրենց փոխադարձ
յարաբերութիւններու մէջ նոյնքան աւելի
նորութիւն եւ ազնուութիւն պիտի դնեն :
Սակայն մեզ նման մի ժողովուրդի մէջ որու
համար կեանքի բոլոր բարոյականը եւ արուեստը
կեղծիքը եւ սուսն է , որու ամբողջ խառնուրդը
այսօրուին վաղը ապրելու մէջ կը կայանայ ,
հոգ չէ թէ նոյն իսկ իր այս համեստ պա-
հանջը շատ անգամ իր արժանապատուութեանը
ոսնակութիւն ընելով գոհացնէ , պէտք է
խոստովանիլ , թէ լուրջ բժիշկին գործունէ-
ութիւնը շատ դժուար բան է : Կրեթէ ամէն
քայլափոխիդ , ամէն այցելութեանդ միջոցին
կը հանդիպիս վերաւորող երեւոյթներու եւ
երբեմն կը վշտանաս նոյն իսկ այնպիսի ան-
ձերու կողմէ , որոնց դատողութեան եւ էս-
թէթիքական զգացման վերայ իրաւամբ կամ
անիրաւի հաւատք ունէիր , որոնք սակայն
վերջապէս կը համոզուիս թէ անխուսափելի
կերպով կրած են միջավայրին ազդեցութիւնը :

Երբ աչքի առջեւ կը բերեմ այս վայր-
կեանիս Կ. Պոլսի բժշկական դասը , զայն նախ
անով արտակարգ կը գտնեմ , որ համաձայն
քաղաքին այլասեռ եւ այլալեզու ազգաբնա-
կութեան , տարբեր տարրերէ կազմուած է .
թիւրք , հայ , յոյն , հրեայ եւ կէս կամ հա-
րազատ եւրոպացիներ աւելի կամ պակաս մեծ
թուով կան հոն եւ այս ցեղային տարբերու-
թիւնները թերեւս թէ աննորոգաշնակութեան
եւ անհամաձայնութեան մի հզօր պատճառ
չլինէին , եթէ զպրոցներուն , որոնց մէջ ու-
սած են այս բժիշկները , զանազանութիւնը
չգար զանոնք շատ անգամ անջատել զաղա-
փարհերու , գործելու եւ բժշկական բարոյա-
կանի ըմբռնման մասին : Տեղական գլոցը ,
աթինականը , ֆրանսականը , անգլիականը ,
ամերիկեանը եւ գերմանականը ներկայացուած
են այստեղ աշակերտներու աւելի կամ պակաս
միհոծ թուով եւ թէեւ դիտութիւնը այսպիսի
հաջաւաքացի է եւ իր ամենաբարձր ձգտում-
ներուն մէջ էապէս անշահախնդիր եւ խառ-
նական , սակայն կարող է նաեւ շատ դիւրաւ
իր բարձրութենէն վար իջնել եւ իր թռիչ-
ներէն զրկուած մի շատ աննախանձելի եւ
տափակ կեանք վարել աշխարհի վերայ : Այս
բանը կախում ունի բժիշկին նկարագրէն , իր

արուեստի արժանապատուութեան զգացումէն
եւ անշուշտ որոշ չափով նաեւ ժողովրդին , ո-
րուն մէջ նա կ'ապրի , բարոյական վիճակէն եւ
բժշկական արուեստը գնահատելու կարողութե-
նէն : Մեր արեւելքի ժողովուրդներու կեանքը
ներկայիս մէջ կը փայլի խզէալիզմի բացարձակ
բացակայութեամբ եւ իրենց ըմբռնումը կեան-
քի վրայ շատ չոր ու ցամաք է : Էգօիզմը որ
որոշ սահմաններու մէջ առողջ եւ բնական է ,
չափէ դուրս աճած եւ գորացած է եւ ալլոքուիզմի
զգացումը խամբած իր թանձր շուքին մէջ , ի-
զէալիզմի այս պակասութիւնը ընդարմացուցած
է մեր կեանքը եւ կաշկանդած զմեզ այնպէս ,
որ անկարող ենք լայն կերպով գործել : Էգօ-
իզմը միայն ամենամօտը , միայն իր անձին
անմիջական վերաբերութիւն ունեցողը կը
տեսնէ եւ ասով իսկ կը դատապարտէ զինքը
մի շատ անձուկ գործունէութեան , մինչդեռ
իզէալիզմը կեանքի ամէն ասպարէզներու մէջ
յառաջդիմութեան , փառքի եւ հարստութեան
հզօր եւ ապահով ռահանորդն է :

Առ հասարակ բժիշկներու գործունէու-
թեան պիտաւոր գիծն է կարելի եղածին չափ
չուտ եւ շատ շահիլ եւ այս նպատակին հաս-
նելու համար շատեր կը դիմեն բազմազաղ
երեւելու միջոցին եւ կ'ենթադրեմ թէ այս
կերպով ունեւք կ'ապրին , ունեւք բաւական
կը յաջողին , երբ աչքի առջեւ կը բերեմ մեր
ժողովուրդին ներքին կատարեալ դատարկու-
թիւնը եւ իբրեւ սուր հետեւութիւն , ար-
տաքինէն եւ երեւոյթէն խաբուելու տկարու-
թիւնը . իսկ միւս կողմէն բժիշկներու այս
մեթօտի մէջ յարատեւելը զոր անշուշտ մի
կողմ պիտի թողէին , եթէ նպատաւոր չլի-
նէր : Ես կը ճանչեմ Եւրոպայի մէջ բժշկական
հեղինակութիւններ որոց տարեկան հասոյթը
արտասովոր մեծ է , որոնք սակայն կեանքի
մէջ պարզ են : Ես այս կը յիշեմ , վասն զի
մեր Հայերը որոնք ցոյցի եւ շրջումի պէտք
ունին ոգեւորուելու համար , ինչպէս մանուկը
կարմիր գոյնին , սովոր են մի մարդու մտա-
ւոր բարձրութիւնը չափել , իր ծախսած
գումարներու շատութեան եւ վարած կեանքի
ճոխութեան վերայ : Ես կը ճանչեմ այստեղ
շատ հայ բժիշկներ , որոց մտաւոր աղքա-
տութիւնը այնքան մեծ է եւ գիտնական պա-

չարը այնքան քիչ, որ յաջողելու համար իրենց միջոց ընտրած են հիւանդին քով չափաւոր սոսիւն ուրիշ բժիշկներու վերայ եւ այս այնքան մեթօտիք կերպով կ'ընեն որքան համոզուած են, թէ ռամիկը դիւրահաւան եւ պարզամիտ է: Այս արդէն նկարագրի կատարեալ տգեղութիւն է եւ նոյն իսկ բարոյական անկուս եւ հայ բժիշկը չէ կարող զինքը արդարացնել երբ մատնացոյց կ'ընէ օտար բժիշկներու նոյն տգեղ կողմերը, ընդհակառակը ատով միայն կը խոստովանի եւ կը հաստատէ իր արարքին դատապարտելիութիւնը:


Բայց ինչո՞ւ աւելի ծանրանամ, բարեկամս, այս տգեղութիւններու վերայ, դուք որ կը պաշտէք գեղեցիկը, խոյս կու տաք ամէն մթութիւններէ եւ կը սիրէք որ ձեր հոգին միշտ ողորդի ճշմարտին լոյսովը, մա-

նաւանդ որ ապագային մէջ արդէն անձամբ պիտի տեսնէք զանոնք եւ ձեր հոգին անոնց տեսքովը յաճախ պիտի վրդովուի: Սակայն գիշերին քով ցերեկը դրուած է, դժուծին քով բարձրը, չարին քով բարին, եւ այս անշուշտ այն պատճառով այսպէս տնօրինուած է, որ մեր մաքառումները աւելի հզօր լինին, մեր հոգիները աւելի եւս ամրանան եւ մեր անհատականութիւնը իր կատարեալ դրոշմովը եւ գծերովը երեւան դայ: Մենք հաւատանք խտէալիզմի յաղթանակին վերայ, ընդունինք թէ բժշկական կոչումը իր դուռ խտէալական կողմը ունի. եւ թէ ճշմարիտ բժիշկը չէ եղած ռամիկն տգիտութիւնը շահագործելու, այլ անոր առաջնորդ լինելու դէպի մի լաւադոյն եւ գիտակից կեանք:

Ձեր բարեկամը եւ անձնուէրը
Օգոստոս 1899 Dr. Մ. ՎԱՀԷ

ԶՈՋ ՏԱՏԻՆ ՊԱՏՄԱԾՆԵՐԸ

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ



Մ Ո Ւ Տ Ք

Ի ԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԶՈՋ ՏԱՏԻ ՎՐԱՅ



ԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ որոնց շարքը կը բանամ, ամենքն ալ պատուած են քաղաքական անձի մը կողմէ գոր Ջոջ Տատ կ'անուանեին, եւ որ մեռած է՝ կայ ուր քաղաք շարքի մը: Ուշագրաւ տխուր մըն էր Ջոջ Տատ, որուն չափ արտակարգ մարդ կարելի չէ երեւակայել: Ոսկրուս, երկայնահասակ մարմինը՝ որ ուրբունի մօտ քաղաքներ կ'լլած էր՝ արդէն, երեսասարդի մը բովանդակ առուզու-

բեամբը կը շարժէր ու դեմքը՝ որուն վրայ աչքերը փոս իջած բլլակուն հակառակ փոսուռայի պէս կը վառվռէին գիրենք կիսովին ֆողարկող քուխ արեւանուկներուն տակէն, վերկենդանացած մոմիայի մը դեմքն էր կարծես, խորունկ, մսածկոտ արտայայտութեամբ,

ու փոքրփոքրած լուրջ մարդու ծանր կեռուած ժպիտով մը՝ որ շրթունքներէն սկսելով մինչեւ հակասք կը նկղաւորուէր՝ առանց բնաւ շփշիւլ :

Ջոջ Տաս կ'ըսէինք իրեն , որովհետեւ չէինք գիտեր իր բուն անունը . այդ որակումով միայն հանչցուած էր այն ասեմէն ի վեր՝ ուր Պոլիս վերադարձած էր գրեթէ աշխարհի շուրջը կատարած իր մէկ համբարողութենէն : Տաս քսուած էր ծեր մարդու գործերուն եւ այն բարի հօր խօսուածքին համար՝ որով կը մօտենար ամենուն , ու երբ Ջոջ ամականը կցած էին անոր , ապահովաբար ազնուականի այն վայելուչ դրօշմին համար էր՝ զոր իր կեցուածքին , խօսուածքին ու բովանդակ վարմունքին վրայ յայտնապէս կը տեսնէինք : Վեհաճն , բարի , կարեկիր մարդ մըն էր , վերջին ծայր զարգացած , տեղեակ ամեն բանի , ուսումնասիրած ամեն միջավայր , բախանցած ընկերային ամեն երեւոյթներու , ամեն շարժումներու . մարդ մը վերջապէս որ կրնար կենդանի հանրագիտարան մը համարուիլ . ծանօթ էր բոլոր ազգերու պատմութեան ու գրականութեան , եւ գիտէր այն պայմանները՝ որոնք փառապաշտութիւնը այլ եւ այլ ձեւերու ենթարկելէ ետք իր այսօրուան վիճակին հասցուցած են զայն : Այցելած էր այն բոլոր երկիրները՝ որոնցմէ դաս մը կարելի էր փառել , նոր բան մը սորվիլ , նոր հրապոյր մը՝ նոր հրաշալիք մը բմբռնել , ինքզինքը վարժեցուցած էր իր շրջած երկիրներուն սովորութեանց ու բարեքերուն , ամեն տեղ հետեւած էր տիրող նաւասկիին , գործածական տարազին , եւ հոս , իր ծննդավայրը վերադառնալէ ետք , կրկին հին ասեմի մարդը դարձած էր , վրայէն քորուելով բոլոր օտարոյսի կարկանդակները , քեւեւ առանց անոնց օգտակարէն ու յարմարէն հրաժարելու :

Նորահաստ , բայց միեւնոյն ասեմ ամուր բարեկամութեամբ մը կապուած մեր ընտանիքին հետ , գիշերները , — ընդհանրապէս ձմեռ եղանակին մէջ , — շատ հեղ կու գար մեզի , եւ ընտանեկան հաւաքումի պահուն՝ ուր ասուլիսը նիւթէ նիւթ կը ցատկէր , խօսքին բելը իր ձեռքը կ'ըլլար միշտ , ինք կը վարէր զայն , եւ ամեն անգամ որ առիթը ներկայանալու ըլլար , իսկոյն իր տարածուն հմտութիւնն ու գիտակցութիւնը մեջտեղ դնելով , ընդհանուրին համար օգտակար բան մը կ'ըսէր , գրեթէ միշտ իր առարկութեանց իբր փաստ պատմութիւն մըն ալ պատմելով , ինչ որ շատ դիւրաւ բմբռնել կու տար բոլոր իր հետեւութիւնները :

Ջոջ Տասին այդ պատմածներն են անա , զորս այսօր գրական ձեւի տակ կը փորձեմ վերկենդանացնել յաջորդաբար , որչափ որ լիեղութիւնս օգնէ ինձի : Կը ցաւիմ միայն որ պատմութիւններու այս շարքին մէջ չպիտի կրնամ կապ մը դնել , — անկարելի է արդէն . իմ գլխաւոր շանքս պիտի ըլլայ հաւատարմօրէն ներկայացնել Ջոջ Տասին գաղափարները , առանց զանոնք խաբարելու իմ կողմէս եղած ո՛ր եւ է խորհրդածութեամբ :

Ա.

« Վ.Ա.ԽԻՆ ԵՆՈՒՆԴԻ »

Նոյնմանի վերջերս էինք , թուականը չեմ յիշեր թէ եւ , բայց սաչափ մը գէթ միտքս մնացած է որ Պոլսոյ ամէնէն խիստ եւ ամէնէն երկարատեւ ձմեռներէն մէկը ունեցանք նոյն տարին . Առտուն՝ այն խիտ ու մշտաթափ ձիւններէն մէկը տեղացած էր որոնք անջրպետը կը խեղդեն՝ անարեւ օրուան մը մէջ մաքուր , սպիտակ եւ համատարած չղարչ մը կապելով երկրին ու երկինքին միջեւ , եւ

որոնք խաւ կը կապեն գետնին վրայ՝ մինչեւ թիզ մը բարձրութեամբ : Անցուդարձը մասամբ խանդարուած էր գրեթէ եւ տուները՝ տանիքներուն վրայ անաղաքաւ ու չորս պատերն ի վար ալ եղծուած ձերմակով մըն էին ծածկուած , ձիւնթափին տակ ամէն մէկը պատրանքը տալով գեղանի , առոյգ եւ արդուով հագուած հարսերու՝ որոնց վրայ արծաթ փոշի ցանէին :

Մեր տան պղտիկ սենեակն էինք , ընտանիքս ամբողջ , Ջոջ Տաս եւ իր մէկ քոյրը , ամէնքս ալ բոլորուած՝ գրեթէ կծկուած պղնձէ փայլուն վառարանի մը շուրջը , որուն գոգը

պճկաացող կրակը՝ նոր բերուած ատեն վառ , կեանքոտ ու կարմիր երիտասարդութիւն մը ցոյց տալէ ետքը , ազճատած՝ հալած , ձեւէ ինկած էր յաջորդաբար , ու տախալ՝ իր հատուկէն իսկ գոյացած մոխիրը գրկած էր զինքը . ծերութիւն մը անշուշտ , ուրկէ դժուար չէր վերջնական հանսումը դուշակել :

Ձիւնի վրայ կը խօսէին ամէնքն ալ , իւրաքանչիւրը իր սեփական յիշատակները պատմելով , վերջուշումը ընելով նախկին խիստ ձմեռներու , ու շատեր ալ շեշտելով այն խոշոր բարիքը՝ որ կրնար առաջ գալ այդպէս առատ տեղացած ձիւնէ մը :

Յանկարծ , չեմ գիտեր ի՞նչ բերելու համար , պէտք եղաւ որ պզտիկ եղբայրս վերի յարկը երթայ : Չափազանց վախկոտ աղայ մըն էր , երեւակայութիւնը առկուռ բերի՛ր ու ճիւղի պատմութիւններով՝ զորս հօրաքոյրս մեզի կը պատմէր , պարզապէս զմեզ դուարճացնելու համար : Տղան տարտամեցաւ , եւ այն ատեն միայն որոշում տուաւ երթալու , երբ չորս կողմէն զինքը ծաղրել սկսան .

— Փերինքը չպիտի ուտէին ես քեզի , կ'ըսէին միաբերան , ի՞նչ կայ վախնալու :

Եղբայրս հազիւ դուրս ելած , Ձոջ Տատ՝ որ մինչեւ ան ատեն լուռ մնացած էր , հարցուց հօրս .

— Ինչո՞ւ աղան ասանկ վախկոտ մնացեր է :

— Հազար անգամ ըսած եմ արդէն , պատախանեց հայրս , որ չպատմեն սա անիծած բերի՛ր , ալապուճուկի , խարախօնճօղի մասալները . աղաքները եթէ այս վիճակին հասած են , պատճառը քոյրս է որ շարունակ խնդր ու խելառ բաներ կը պատմէ անոնց . հազար անգամ կը սաստեմ , բայց որո՞ւ կ'ըսես . ահանջ չի կախեր :

— Իրաւ է , ընդմիջեց Ձոջ Տատի քոյրը , — զարգացած տարեց աղջիկ մը՝ որ չէր ուզած ամուսնանալ . — վախու պատմութիւնները տղոց վրայ ամէնէն սոսկալի ազդեցութիւնը կ'ընեն . ըստ վախու մասին խօսք բանալու չէ անոնց :

— Ինչո՞ւ , ո՞վ է ըսեր , առարկեց Ձոջ Տատ . կ'ըմբռնեմ որ վախու պատմութիւնները շատ վատ ազդեցութիւն մը կ'ընեն տղոց վրայ , սակայն ատիկա պատճառ մը չէ որ

անոնց ընաւ չըսուի թէ վախ առթելիք բաներ կան իր շուրջը , թէ ինքը՝ իր մարդ , պարտաւոր է զգուշանալ կարգ մը սարսափունակ բաներէ՝ որոնց հետ օր մը չէ օր մը դէմ առ դէմ պիտի գայ անպատճառ :

Վարժուած ընաւ ականարկութիւն չընելու՝ ամէն անգամ որ խօսքին թելը Ձոջ Տատի ձեռքը ըլլար , ոչ ոք ձայն հանեց , ու թողուցին որ խօսի իր այն հնչուն եւ առողջ ձայնով՝ որով գիտէր թովել իր ունկնդիրները :

— Մարդ , շարունակեց , պզտիկ հասակէն իսկ կրնայ ընտելանալ ամէն տեսակ գէշ ունակութեանց , ամէն տեսակ մոլութիւններու եւ ենթարկուիլ կարգ մը բնախօսական ու հոգեբանական պայմաններու՝ որոնք դէշ կերպով կը շարունեն իր խմորումը : Աղատելու համար զինքը բոլոր ասոնցմէ , պէտք չէ՛ զանոնք իրմէ ծածկել . ընդհակառակը , պէտք է ասոնց ամէնքն ալ պարզել իրեն , առանձինն բացատրել իւրաքանչիւրը , ցուցնել առաջ գալիք հետեւանքը , բայց միեւնոյն ատեն անոր հայթայթել նաեւ այն միջոցները , սորովեցնել այն եղանակը՝ որով պիտի կարենայ զգուշանալ , հեռու մնալ անոնցմէ եւ ինքզինքը պաշտպանել անոնց դէմ :

« Ծիշդ այս տեսակէտին համար է որ քիչ մը առաջ ըսի թէ պէտք է տղոց խօսիլ վախու վրայ . աւելի ընդլայնելով խօսքս , հիմա կ'ըսեմ թէ պէտք է տղան պզտիկուց զօրացընել վախին դէմ , անոր ներկայացնելով բոլոր այն վախու աղաքները՝ զորս միջաւայրը կրնայ իրեն առթել օրին մէկը : Եւ ասիկա չա՛տ աւելի օգտակար կրնայ ըլլալ տղուն՝ որովհետեւ նախ անպատրաստ չի գտնուիր , եւ յետոյ , արդէն իսկ գիտակից կ'ըլլայ բոլոր այն միջոցներուն՝ որոնցմով պիտի կրնայ վախու առթի տուող պայմաններուն դէմ մարտնչիլ :

« Եւ շատ պատեհութեամբ միտքս կ'իյնայ պատմութիւն մը՝ զոր Գրիսթիանիայի մօտերը ինծի պատմեց վաղեմի ոռւս բարեկամ մը՝ Սէրգէյ Վլատիանիչ :

« Կովկասէն միասին մեկնած էինք դէպ ի Սքանտինավիա ճամբորդութեան մը համար , եւ Նորվէգիոյ մայրաքաղաքէն մէկ երկու մղոն հեռուներն էինք գացած ձիով , տեսնե-

լու համար Լիլ-Ֆրօներրի առջեւ պարզուած եւ ծովին մէջ խեղդուող հիւանալի համայնապատկերը , ու մանաւանդ Պօրկէնը , այն հմայիչ անտառուտ աւանը՝ ուր ծառերը հեռուէն ամպերուն մէջ միտում կ'երևան :

« Լեռնուտ , խարակուտ ճամբայ մը ունէինք առջեւինս՝ մինչեւ Լիլ-Ֆրօներր՝ ուր լեռնաշղթան ծովուն կը յանդի : Արեւը՝ հիւսիսային երկիրներու այն շիկահեր արեւը որ ամառուան մէջ շատ անուշ կ'ըմբոշնուի , երփներանգ , ծիրանեծիր վերարկու մըն էր հագցուցած հողի եւ ժայռերու անհատնում երեւէջներուն՝ որոնք երկարածիւք լեռնաշղթան կը մատնէին , — երկայնքին շարուած բազմաթիւ ուղտեր կարծես՝ իրենց այլանդակ սպաստներով :

« Մինակ այդ ճամբան կար լեռներու կողմի վար , ուրկէ երկուքս միս մինակ կը յառաջանայինք . ու մեծ բան մը չէր մնացած աւանին հանելու , երբ ձի մը տեսանք որ վարէն դէպ ի մեր կողմը կը փութար : Քիչ ետքը դէմ առ դէմ էինք շողշողուն համազդեստով նիհար , աղաղուն սպայի մը հետ , որ սանձարձակ դէպ ի մայրաքաղաք կը սուրացնէր ձին , եւ որ՝ հաղիւ մեղի մօտեցած , զարմացման աղաղակ մը արձակեց ու եկաւ փարեցաւ Վլատիանիչի վիզին :

« — Հօ՛ Սէրգէյ . . .

« — Հօ՛ Ալէքսի . . .

« Դանդաղօրէն առաջ տարի ձիս , որպէս զի երրորդի մը ներկայութեան տաղտուկը չզգային իրենց տեսակցութեան միջոցին : Քառորդ մը ետքը , Վլատիանիչ ինծի միտնալով կը հարցնէր .

« — Ինչո՞ւ հեռացար . կ'ուզէի քեզի ներկայացնել մարդ մը՝ որ իմ զէնքի ընկերս եղած է ատենօք եւ որ բանակին ամէնէն քաջ ու ամէնէն աւելի ապագայ խոստացող սպան է :

« — Չուզեցի ձեզ անհանդիստ ընել . մեղք : Սակայն այդ նիհար , խրխլած ու արտաքնապէս վերջին աստիճան տկար երեւցող մարդը ինչպէս կ'ըլլայ որ բանակին ամէնէն քաջ սպան կը համարիս , դուն որ լաւ կը ճանչնաս որոտո մարդիկը :

« Վլատիանիչ քմծիծաղով մը երեսս ի վեր

նայեցաւ , ժպտեցաւ քիչ մը ատեն , եւ ըսաւ . վերջապէս՝ հատիկ հատիկ շեշտելով ամէն մէկ բառը .

« — Ալէքսիս՝ Լիլ-Ֆրօներրցի է եւ Լիլ-Ֆրօներր քաջեր միայն կը ծնի :

« Ջարմացմամբ կը դիտէի բարեկամս , առանց պատասխան մը կարենալ տալու . որովհետեւ , որչափ որ կրնայի յիշել , պատմութեան մէջ հետք ձգող անուն մը չէր Լիլ-Ֆրօներր :

« — Կը զարմանա՞ս , անանկ չէ՞ , ըսաւ իսկոյն Վլատիանիչ . բայց հիմակ իսկ պիտի տեսնես թէ որչափ իրաւունք ունիմ :

« Ու բարեկամս սկսաւ պատմել հետեւեալը՝ զոր ձեզի կ'աւանդեմ առանց ո՛ր եւ է բան մը աւելցնելու իմ կողմէս :

* * *

— Լիլ-Ֆրօներրը ես շատ լաւ կը ճանչնամ , որովհետեւ նախ հոն ծնած եմ եւ յետոյ հոն մնացած եմ գրեթէ բովանդակ մանկութեանս միջոցին : Հայրս , հակառակ աղքտով ու հպատակութեամբ ռուս ըլլալուն , պարտաւորուած էր այդ աւանը քաշուիլ : Արդ , Լիլ-Ֆրօներր «վախու աւան»ն է եւ բոլոր իր զաւակներն ալ «վախու ծնունդ»ն եր են :

Ջարմանքս ա՛լ աւելի շեշտուած էր . աչքերս խոշոր բացած , բարեկամիս երեսը կը նայէի առանց բան մը կարենալ հասկնալու , ու կը պատրաստուէի բացատրութիւններ խնդրել ըսածներուն վրայ , երբ շարունակել սկսաւ .

— Բնական բան մըն է որ սարօրինակ գտար որակումներս , սակայն հիմակ իսկ պիտի բացատրեմ թէ ինչո՞ւ այդպէս կը կոչուի : Սա հրաշալի համայնադատկերը որ մեր շուրջն է տարածած իր բովանդակ գեղեցիկութիւնն ու հրապոյրը , բոլոր այս լեռները , բոլոր այս խարակուտ հողի ցցուածքները ամենախիտ ձիւնով մը կը ծածկուին ձմեռը , մինչեւ մէկ կամ երկու մարդու բարձրութեամբ , եւ գիւղէ գիւղ , աւանէ աւան հազարդակցութիւնը բոլորովին կ'ընդհատուի : Ոչ այս արեւը կը գտնես այն ատեն հոս , ոչ ալ սա անարատ կապոյտը որ ամբողջ երկինքն է

գրկած : Ճամբաներուն վրայ ձիւնի թանձր խաւ մը՝ եւ այս խորառ ու բարդ լեռներու կողերն ի վար ալ սառոյցի ահագին , հսկայ կտորներ : աս կ'ըլլայ ամբողջ անտեսելիք :

« Եւ այդ ճերմակ արհաւիրքին մէջ , բնակիչներուն համար կը սկսի ամէնէն անտանելի , ամէնէն տաղաւոր կեանքերէն մէկը՝ որուն սակայն վարժուած ըլլալուն , կատարեալ համբերութեամբ կը տոկան : Աւանին մէջ , գիւղէ գիւղ անկարելի է ձիւնը մաքրել , դալով գիւղացիներուն , անոնք պարտաւորուած են ահագին կրակներ վառելով հալեցնել ձիւնը՝ որ շատ քիչ անգամ բանով կրնայ վերցուիլ : Յետոյ , — ամէնէն սոսկալին , — արջերը կան , առելի , ահարկու եւ գերազանցապէս վայրագ ճերմակ արջեր որոնք շատ հեղ խումբերով կ'իյնան գիւղի մը վրայ , եւ օգտուելով այն անցքերէն զորս գիւղացիները կը բանան , տունները կը մանեն ու չէնք չնորհք կը յօշոտեն հանդիպածնին , եթէ երբեք անիկա անկարող ըլլայ ինքզինքը պաշտպանելու : Աս է պատճառ որ Լիլ-Ֆրօնները « վախու աւանը » կը յորջորջուի :

« Սակայն , այդ արջերու արշաւանքը գրեթէ միշտ մնաս չի տար գիւղացիներուն . ընդհակառակը , գաղաններն են որ իրենցմէ մէկ քանին սպաննուած կը թողուն գիւղին մէջ ու կը պարտաւորուին փախչելու . որովհետեւ գիւղին բոլոր բնակիչները « վախու ծնունդ » են , եւ տես թէ ինչու :

« Լիլ-Ֆրօնները կը դաւակ մը ունենայ , օրօրներ չէ որ կ'երգէ անոր . պզտիկուց սկսեալ , անոր կը պատմէ արջերու արշաւանքը , կը թուէ ատկէ առաջ գալիք բոլոր ծանր հետեւանքները , առանց բնաւ զգացնելու թէ ո՛ր եւ է կերպով արջերը կրնան իրապէս մնասել գիւղին : Յետոյ , երբ տղան կը սկսի լսածը հասկնալ , անոր կը ներշնչէ նախ անվախ համարձակութիւն մը , իրզախ յանդերձնութիւն մը , ինչպէս նաեւ անընկճելի քաջութիւն մը՝ ըսելով թէ արջերը բնաւ բան չեն կրնար ընել , եթէ մարդ իսկոյն հրացանը առնելով անոր վրայ յարձակի , ջանալով ինքզինքը հեռու պահել անկէ : Միեւնոյն կերպով կը զգացնէ նաեւ դանակին պէտքը , որ շատ մեծ կարեւորութիւն ունի գիրկ գիրկի

գալու պարագային մէջ :

« Այսպէսով , տղան քաջ , անվախ , յանդուգն ու համարձակ կը մեծնայ , եւ արդէն իսկ ինքզինքը արջու մը հետ կռուելու տրամադիր դալով , — քանի որ կ'անդիտանայ անոր ուժն ու կարողութիւնը , — վեց կամ եօթը տարեկանէն սկսեալ հրացան կամ դանակ կը պահանջէ եւ շուտ մը կը սորվի անոնց գործածութիւնը , ինչ որ տակաւ առ տակաւ ցեղային որոշ ընդունակութիւն մը դարձած է աւանին բնակչութեան համար : Այլ անկէ ետքը արջերը կրնան դալ ինչ թիւով որ ուզեն . անկարելի է որ կարենան մնաս հասցնել :

« Այլեքսիս՝ այս ներշնչումներով սնած էր . այս ազդեակներն էին իր երակներուն ներարկած այն արտակարգ քաջութիւնն ու անվերահերութիւնը՝ որոնք քիչ ժամանակամիջոցի մէջ զինքը բարձրաստիճան սպայ մը ըրին :

« Նախապէս չէի ճանչնար զայն : Օր մը , — Շլէզվիկ-Հոլշթայնի պատերազմը նոր ծագած էր , — փորձուցայ կամաւոր գրուիլ եւ ընկեր մը կը վնասէի Տանիմարքա անցնելու համար երբ ծանօթացայ Ալեքսիսի որ հակառակ բռնակին մէջ ունեցած պաշտօնին՝ յաջողած էր արձակուել մը ձեռք ձգել :

« Միասին մեկնեցանք ու մասնակցեցանք առաջին ճակատամարտներուն , բայց շատ չանցած Ալեքսիս պարտաւորուեցաւ Քրիսթիանիա վերադառնալ եւ ես ալ իրեն ընկերացայ : Այդ ճամբորդութեան միջոցին էր որ ինծի պատմեց իր պատմութիւնը՝ զոր բովանդակ Լիլ-Ֆրօնները կը հաստատէ ղեռ ալսօր ալ . տեսակ մը գիւցաղներգութիւն է ատիկա աւանին համար՝ որուն ամէն մէկ անհատը ինքզինքը հպարտ կը զգայ Ալեքսիսի հետ միեւնոյն համայնքին պատկանելուն :

« Ու պիտի տեսնես թէ իրեն համար ինչ ազուրուր եւ ինչ ալ նախանձելի յանձնարարական մըն է այդ պատմութիւնը՝ զոր պիտի ընեմ ա՛յնպէս՝ որպէս պիտի պատմէի եթէ անձամբ տեսած ըլլայի քաջութեան , պաշարիւնութեան եւ անվեր յանդգնութեան այդ գործը՝ որ առասպելային դրոշմ կը կրէ :

Այն տարին , սոսկալի ձիւն մը իջած էր Լիւ-Պրօներրի վրայ , անկարելի , համայնածածկ ձիւն մը՝ որ ամէն բան տակն էր թաղած՝ ամբողջ չաբաթ մը շարունակ տեղալով :

Արահետները շուտ մաքրուած էին սաւկայն , ու սովորական կեանքը սկսած էր բնակիչներուն համար , երբ առտուան մէկը Ալէքսիսի ծնած գիւղին մէջ՝ որ աւանին անունը կը կրէ , լուր տարածուեցաւ թէ արջերու արշաւանք մը կը սպառնար գիւղին :

Վարժուած միշտ այդ տեսակ լուրերու , ոչ ոք հոգ չուա : միայն ամէն մարդ քիչ մը աւելի զգոյշ դարձաւ , յանկարծակի յարձակման մը չենթարկուելու համար պարզապէս : Սակայն արջերը կ'ուշանային . մէկ , երկու , վերջապէս ամբողջ չորս օր հաս մը չերեւաց անոնցմէ . կ'երեւայ թէ ուրիշ գիւղերու վրայ ինկած էին . ասանկ մտածեց ամէն մարդ , եւ արջերն ու իրենց արշաւանքը մոռցուեցան :

Աւտուան մէկը , — հինգերորդը այն օրէն՝ ուր արջերու արշաւանքին լուրն էր տարածուած , — Ալէքսիս դուրս ելած էր տունէն՝ երթալ ձիւնէ արջ մը շինելու : Գիւղին մէջ սովորութիւն էր , ամէն ամառ փայտէ , խոտէ , եւ լաթէ արջեր շինել , դնել որոշ տեղ մը՝ եւ աղաքը յարձակեցնել անոնց վրայ , հրացանով կա՛ր գանակով : Այս կերպով անոնք կռուելու կը վարժուէին , ու մանաւանդ կը սորվէին դանակի գործածութիւնը :

Ալէքսիս՝ այն ատեն հազիւ տասերկու տարեկան , արտակարգ ընդունակութիւն մը ստացած էր այդ փորձերուն շնորհիւ , եւ գիւղին ամէնէն քաջ տղան ըլլալով հանդերձ , քիչ ատենուան մէջ դանակ գործածելու անանկ հիմնալի վարպետութիւն մը ձեռք ձգած էր՝ որ ամէն մարդ կը սքանչանար իր վրայ :

Ան առտուն , ինչպէս ըսի , դուրս ելած էր տունէն ձիւնէ արջ մը շինելու նպատակով . կը ձանձրանար տանը մէջ՝ ուր անդամալոյծ եւ մունջ հանի մը միայն կար , զոր բնաւ չէր սիրեր՝ թերեւս շարունակ դայն անխօս տեսնելուն : Ժամերով աշխատած էր քիչ հեռու այն տունէն՝ որ գիւղէն մեկուսացած , անջատուած կը մնար եւ որ անշուշտ փլցուած ու գիւղին մօտեցուած պիտի ըլլար , եթէ երբեք պապեհական ժառանգութիւն մը

քանդելը սրբապղծութիւն չհամարուէր աւանին բնակչութեան կողմէ :

Աշխատութիւնը իր վերջաւորութեան թեւ կու տար արդէն եւ արջը ուրուադծուած էր գրեթէ՝ երբ անարկու մռնչիւն մը՝ որ կարծես գետինը կը պատուէր , թնդաց հիւղակէն քիչ հեռու , եւ ճիշդ մօտը այն տեղին՝ ուր Ալէքսիս կ'աշխատէր բահը ձեռքը :

Տղան յանկարծակիի եկաւ . հազիւ ժամանակ ունէր սանկ քիչ մը շտկուելու . գազանը՝ այն ամենի , թիկնեղ ու զփուար ընկճուող արջերէն մէկը՝ որոնք մինչեւ մէկ ու կէս մէթը բարձրութեան կը հասնին , թեւաբաց դէպ ի իրեն կը յառաջանար՝ երկու ոտքի վրայ քայլելով : Հայրը Պօրկէն մեկնած էր նոյն առտուն , պիտալը օդուտ մը չպիտի ունենար :

Ախ , եթէ երբեք հրացանը քովը զբառուէր՝ ինչ գիւրին պիտի ըլլար՝ անպիտանին հաշիւը կարգադրել . փայլուն ու երկար փողը անոր ճակտին , երկվայրկեան մը նշանառութիւն , յետոյ չոր պայթիւնը հրացանին՝ եւ ամէն բան լմնցած պիտի ըլլար արդէն , արջը պառկած պիտի ըլլար կռնակին վրայ ու գետինն ալ սղորակի մը պէս անոր արիւնը ծծել սկսած :

Բայց ի՞նչ ընել հիմա՝ որ հրացանը քովը չէր . է՛հ , վերջապէս ինչ որ Լիւ-Պրօներրցի աղաքը կ'ընեն տասնկ պարադաներու մէջ :

Եւ ճիշդ ասիկա ըրաւ Ալէքսիս :

Ահարկու գազանը հազիւ երկու քայլ հեռու էր իրմէ , ու կը պատրաստուէր առաջ նետուելու , երբ այլանդակ , անձեւ մարմին մը՝ օրուն մէջ հերաթափ գլուխ մը , երկու ոտնամաններ եւ վերարկուի մըն ալ ծածանուաւ ծայրը կ'որոշուէր , այն աստիճան սաստկութեամբ դնաց կպաւ արջուն կուրծքին՝ որ կարծես առասպելային տիտանի մը հսկայ թեւը գայն այգպէս առաջ նետած ըլլար :

Կեռ դանակի մը փայլը պղծաց ձիւնին արծաթ սպիտակութեան դողը եւ երկու մարմին միեւնոյն ատեն գետին պտրուեցան , արջն ու Ալէքսիս՝ որ վտանգին գիտակցութեամբը զօրացած , մէջքէն հանած էր այն դանակը՝ ուրիշ բնաւ չէր բաժնուեր եւ ինք իր վրայ ամփոփուելով նետուած էր առջին առջիւ :

Երկու աղաղակ միեւնոյն ատեն արձակուե-

ցան, մէկը արջինը՝ անոնի, վայրագ ու խռատ աղաղակ մը՝ որ ամբողջ աւանը թընդացուց, եւ միւսը կատաղի բարկութեան մը ծնունդ՝ որ Ալէքսիսի աղաւ բերնէն դուրս թռած էր :

Կը տապալակէին երկուքն ալ ձիւնին վրայ՝ որ պտղած էր արդէն կարմրուկ արիւնէ մը, — յայտնի չէ թէ որունը : Երկուքէն ոչ մէկը կը զգար ասիկա . հրդեհ կը վառէր իրենց երակներուն մէջ, եւ այդ տաքութեան առաջ բերած կամքի բովանդակ ոյժը՝ որ մէկուն քով անօթութեան արտայայտութիւնն էր պարզապէս ու միւսին քով ալ հաւանական մահու մը հանգէպ ծնած ապրիլու մեծ փափաք մը, անադին համեմատութիւն մըն էր տուած կռուին՝ որ երթալով սարսափելի թափ մը կը ստանար :

Վայրկեան մը՝ արջը քիչ մնաց որ յաղթանակէր . թաթերէն մէկը յաջողած էր աղուն երեսին տանիլ ու ճանկերովը պատռել ճակատն ու այտերուն միսը : Արիւնը կուրցուցած էր խեղճ տղան, ու թերեւս մօտ էր բռնորոտին ընկճուելու, երբ յանկարծ՝ արջին մէկ շարժումէն օգտուելով, կրցաւ անոր կոնակը ցափել, ու մազերուն սլլուելով հեծնել վրան :

Գազանը կը դռար յուսահատութենէն, կատաղի ճիգեր ընելով որպէս զի տղան վար առնէ կոնակէն : Սակայն Ալէքսիս լաւ կռուած էր անոր եւ ինքն ալ անկէ ոչ նուազ կատաղի՝ մոլեգնօրէն անոր վիզը կը խածնէր, ակռաներուն տակ կը թոթուէր խածած կտորը՝ հակառակ այն մազերուն՝ որոնք բերնին կպչելով շնչառութիւնը կը կասեցնէին :

Քանի մը երկվայրկեան ալ անցաւ այդպէսով : Ալէքսիս քիչ մը դառաւ ինքզինքը, որովհետեւ յուզումը անցած էր մեծ մասամբ : Ան ատեն յիշեց թէ դանակը ձեռքն էր տակալին, սեղմուած ափին մէջ զոր չէր կրնար բանալ՝ արիւնը հոն չորցած ըլլալուն պատճառաւ : Ու մինչդեռ արջը՝ իր յուսահատի գոռում գոչումը կը սաստկացնէր՝ պարապ տեղը տապալակելով, աղուն ձեռքը կրկին բարձրացաւ, եւ դանակին կեռ բերանը՝ որ այս անգամ արիւնով ծածկուած ըլլալուն համար ամենաթեթեւ փայլ մը անգամ չխաղցուց

օդին մէջ, ուժգնութեամբ դնաց միտուիլ արջուն կողը՝ ուրկէ արիւնը առատօրէն դուրս ցայտել սկսաւ :

Մէկ, երկու, չորս, տասը, վերջապէս քառասուն հարուած մը իջաւ այսպէս, մինչեւ որ գազանին հալածողութեամբ կթոտեցան եւ յետոյ մարմինը քովտի ինկաւ գետնի ձիւնին վրայ՝ որ փակաւ բոլորովին կարմիր գոյն մըն էր ստացած :

Արջը մեռած էր :

Երեւակայէ՝ անդամ մը, տասերկու տարեկան տղայ մը յաջողած էր զգետնել ամէնէն անարկու գազաններէն մէկը՝ որ մարմնով միայն իրեն պէս չոր հատ մը կ'ըլլար :

Ու գիտնալու ես թէ ինչ անագին աղմուկ հանեց այս դիւցազնական գործը բովանդակ աւանին մէջ՝ ուրկէ տարածուեցաւ մինչեւ Քրիսթիանիա եւ Նորվեկիոյ հեռաւոր քաղաքները :

Ամէն մարդ Ալէքսիսի վրայ կը խօսէր ու լրագիրները հազար կտոր կ'ըլլային նոր տեղեկութիւն մը տալու համար այս գերնական քաջութեամբ օժտուած աղուն վրայ :

Միայն թէ ամբողջ շաբաթ մը հիւանդ մնաց խեղճը, տառապելով սոսկալի տենդի մը պարուրանքին մէջ՝ որուն սաստկացած ատենները չարունակ դանակը կը փնտռէր :


Մինչեւ իր առողջանալը, թագաւորը ամէն բան լսած էր արդէն, եւ երբ Ալէքսիս անկողնէն ելաւ, խեղճն Քրիստիանիա տարին զայն՝ ուր լաւ կրթութիւն մը ստանալէ ետքը բանակը մտաւ եւ քիչ ատենուան մէջ ձեռք ձգեց իր արդի դիրքը :

Գիշերը իր կէսին սահմանը գլած էր արդէն, երբ Զոջ Տառ աւարտեց Վլատիանիչի պատմութիւնը :

Վառարանին մէջ՝ կրակը բոլորովին սմբած էր՝ ամբողջովին ծածկուած ձերմկորակ մոխրի խաւէ մը՝ որ տակաւ խեղդած էր զայն :

Քիչ ետքը ամէն մէկս իր վերմակին սլլուած, այն կազդուրիչ քուններէն մէկուն մէջ թաղուած էինք որ ձմեռը կը քնացուի եւ զոր ցուրտը կ'անուշցնէ :

Յ Ա Դ Ս



ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ



ԲԲԵՄՆ անհուն ցաւ մը լըռին
Կը խոշտանգէ սիրտըս ըլլոր,
Յաւն՝ աննըշան բանաստեղծին՝
Փառքի ճամբով՝ քաղամուրը:

Ձի բանկազին յատկութիւններ
Ինձմէ կու տան խոյս՝ օրէ օր,
Կ'անցնի կեանքըս ամուլ, անսէր.
Փուն է, դարման չը կայ անոր:

Կը ցրրտանայ լանջքըս տակաւ
Իր յուզմունքի հրրայքներէն,
Կը ցամքի սիրտս անըրջադաւ,
Ռամիկ հոգեր գայն կը վարեն:


Ու հոգիս ալ կը մերկանայ
Իր բեւերէն յոգնավաստակ,
Սէր կամ երազ ալ չունի նա,
— Երազն է սին, սերն՝ իմաստակ:

Ձգայամուլ իմ կիրքերէն
Ես կը դառնամ լուրջ, հասուն մարդ,
Դատողութեան բեւեռներէն
Վերադարձող ճամբորդ հրալարտ:

Այլ ցաւն անհուն, ցաւն է խորին,
Որ կը փորէ սիրտս օրէ օր,
Յաւն՝ սպառնող բանաստեղծին,
Աւանդ դարման չը կայ անոր:

3 Մարտ 99

Վ Ա Յ Բ Կ Ե Ա Ն Մ Ը



ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ



'Ձ սէր, ո՛չ կիրք, ո՛չ յոյզ մը տաք,
Ո՛չ հրճուանք մը, ո՛չ իսկ ցաւ.
Ո՛չ արցունք մը, ո՛չ մի փափաք.
Սիրտս է անհուն քարսնցաւ:

Դեմքըս չունի յուզման մի գիծ,
Փալն աչքերուս է պաղեր,
Հոգիս, ամուլ ու անկսկիծ,
Ա՛լ չունի բափ ու բեւեր:

Ու կը փռուիմ բազկիս վըրայ՝
Խոր մեղկութեամբ տար ու բեր.
Երկինքը ջինջ՝ կը սարսըռայ
Գրիխիս վերեւ անտարբեր:


Եւ ծուլութեամբ,՝ կեսով ծալլած
Մութ նայուածքըս երազուն,
Կը քափառիմ անըրջամած
Պահ մը խորն այն բարձրերուն:

Ու պիտ ըսեք, — ինչո՞ւ անշարժ
Այս կապոյտին տակը ջինջ,
Արդեօք սէր մը, վիշտ մը, երանգ,
— Ձէ, ո՞վ գիտէ ո՞ն, ոչինչ:

23 Ապրիլ 99

Ս Օ Ն Է

Վ Ա Հ Ա Ն Թ Է Ք Է Ն Ա Ն



ԲԱԶԻՍ մէջ դեռ, չը դըպած քու ձեռքիդ
Դեռ, նայուածքիդ չը կալանած շաղաշոյտ
Թիքեռն ոսկի, երազիս մէջ անքրքիք
Ես կը խորհիմ վաղորդայինն շուտավոյթ

Որ կը հասնի, ասպերասան երիվար,
Փոշիի մէջ քաղած քամրիկն իր հրպարտ . . .
Վերելքէն ետք ինքը տըրտում լեռն ի վայր,
Խրաքանցիւրն իր ձամբէն, լուռ և հանդարտ:

Ձի ես՝ շատոնց սըրբագործող քանանայ,
Ո՞վ սըրբունի, երբոր այսօր ծընրաղիւր
Քեզ պատարագ մատուցանել, ի խընդիր

Շընորճներուդ կուգամ, գիտեմ որ չը մնայ,
Վառի պիտի բուրվառիս մէջ խունկն անոյշ . . .
Դեռ անոր համար աղօթքիս մէջ կուլամ յոյժ:

Մարտի 11



ՄԱՅՐԸ ԻՐ ՖԻԶԻԲԱԿԱՆ ԿՐԹԻՉ ՀԱՆՌԵՊ ԻՐ ԶԱԽԻՆ

ՀԵՐՄԱՆ ՔԼԵՆՔԷ



ՕՐ մը պարտաւորութիւն-
ները ծննդաբերութիւնէն
առաջ կարելի է հինգ զըլ-
խաւոր մասերու բաժնել .

1. Յղի կնոջ սննդառութեան եղանակը .
2. Մարմնի չարժուամբերը .
3. Հագուելու եղանակը եւ մարմնի հարկ
եղած ջերմութիւնը .
4. Վերին աստիճանի խնամուած մաքրու-
թիւն մը .
5. Հոգեկան յարատեւ արամադրութիւն մը
եւ ղուարթութիւն .

Ներկայ յօդուածով պիտի ներկայացնենք ,
յղի կնոջ մը , հանդէս իր արդանդին մէջ
կրած զաւկին ունեցած հինգ զըլխաւոր
պարտաւորութիւններէն առաջինը , թէ ինչ-
պէս պէտք է անիկա իր սննդառութիւնը կա-
տարէ որպէս զի իր եւ իր երախային համար
դժբաղդ հետեւանքներու չհասնի . Միւս
չորս պարտաւորութիւններու մասին ալ պիտի
խօսինք յաջորդաբար :

ՅՂԻ ԿՆՈՋ ՍՆՆԴԱՌՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Յղի կին մը հետեւեալ սննդեղէններէն
միայն պէտք է ուտէ . ամէն պարագայի մէջ
չափաւորութիւնը զըլխաւոր պայման դնելով .

Միւս , երբեք աւելի խորովածը սակայն .
հաւեղէն եւ ձկնեղէն ի լաւ առեալ ասոնց իւ-
ղոտ եւ դժուարամարմնները : Բանջարեղէննե-
րէն պէտք է ուտել գետնախնձոր , իւր դիւրա-
մարս ձեւերուն մէջ պատրաստուած , սպի-
նոտ , ծաղկակաղամբ (կառնապէր) , թարմ
լոբիա , թարմ սիսեռ , բանջար . յետոյ լաւ է
նաեւ ապուր ուտելը միտի . ջուրէ եւ կաթէ
պատրաստուած : Հաւկիթ եւ թոյլ կերպով
եփուած հաւկիթ պատրաստուած կերակուր-
ներ եւս լաւ սնունդ են յղի կանանց համար :
Զորոյց կամ իւրոք մէջ եփած պտուղներ ,
թարմ պտուղներէ եփուած քոմրոսթօ , ինչ-
պէս նաեւ առանց եփելու կարելի է ուտել ,
կեռաս , բալ , ելակ , ծիրան , խնձոր , տանձ ,
խաղող , նարինջ , միշտ չափաւոր կերպով եւ
առանց մորթի եւ կուտի : Հացի համար լա-
ւազոյնն է , ոչ-խմոր , լաւ կերպով եփածը :
Խմորեղէն միայն դիւրամարմնները յանձնարա-
րելի են :

Գալով ըմպելիներուն . ջուր , թեթեւ ձեւ-

մակ գարնջուր , կաթ , թեթեւ եփուած խա-
հուէ եւ թէյ , քաքաօ , մսի ջուր եւ ջրա-
խառն գինի միայն պէտք է առնէ յղի կին մը :

Յղի կնոջ մը առողջութեան կրնան վնա-
սել , բոլոր իւրոտ կերակուրները , ըլլան ա-
նոնք մտեղէն , բանջարեղէն կամ խմորեղէն .
հետեւաբար պէտք չէ ուտել իւրով տապկուած
ծանր ամէն ինչ , յետոյ շատ իւրոտ կարկան-
դակներ . պէտք է շգուշանալ կարգ մը ու-
տելիքներէ , որոնք առատ միւղում մը կը
պատճառեն , երբեմն իրենց հետեւանք ունե-
նալով կանխահա ծննդաքերութիւն . պէտք
չէ գործածել խիստ համ ունեցող ուտելիքներ ,
ինչպէս փողկ , խիստ համով՝ պանիրներ ,
խիստ ջերմութիւն տուող համեմներ՝ ինչպէս
պղպեղ , վանիլեա , մեխակ , մանանիխ ,
եւայլն . յետոյ վնասակար են նաեւ սոխ ,
սխտոր , պահածոներ (կոնսերւէ) , թարմ եւ
խմոր սեւ հաց . Այս յիշուածները մարսու-
ղութիւնը կը դժուարացնեն յառաջ բերելով
դժուարաշնչութիւն , արեան անհաւատար շըր-
ջանառութիւն եւ կամ թէ ջրկերը կը գրգռեն :

Ընկերներուն մէջէն վնասակար են բոլոր
ծանր համ ունեցող եւ մեծ համեմատութեամբ
ալքոլ բովանդակող դարեջուրերը եւ գինի-
ները , կաղնիքները , ուժով գինիները մասնա-
ւորապէս չափանիւթ , բոլոր ալքոլ բովանդա-
կող ըմպելիները ինչպէս օղի , սոմ , քօնեաք ,
բոնջ , եւայլն . զօրաւոր խահուէ եւ թէյ կըր-
նան նաեւ յղի կնոջ մը առողջութեան վնասել :

Մննդեղէններու առողջապահական տեսակ-
ներուն այս ցուցակը նոյն իսկ աւելի խիստ
ընարութեամբ կը կազմուի գիւնցման առեւն ,
որու մասին պիտի խօսինք իր կարգին :

Վերջին ժամանակներս ընդհանրապէս ըս-
կըսած է յանձնարարուել , որ առողջ եւ ու-
ժով աղաքներ արտադրելու համար յղի կինե-
րու կերակուրներուն մէջ օրական երեք դա-
նակի ծայրի չափ ֆոսֆորային թթուութեամբ
խառն կիր գրուի : Կը գտնուին նաեւ անձե-
րոնք այս միջոցը կը գործածեն մօր կաթ
տուած առեւն եւ նոյն իսկ աղուն սնունդին
մէջ ալ կը խառնեն , եթէ այս վերջինը մայր
կամ ծծմայր չունենալով արուեստական կեր-
պով սնանի : Իրաւ է թէ այն ստորերը , որոնց-
մով արեւնը կը կազմէ գործարանաւորութիւնը

(organisme) եւ զայն կը պահէ , զանոնք պէտք
է դուրսէն արեան մէջ ներարկել . ֆոսֆորի
թթուութեամբ խառն կիրի բազմաթիւութիւնն է
որ արեան միջոցաւ կը կազմէ կմախքը , աղ-
աները , եւայլն : Յղի կին մը որ բացի իր
գործարանաւորութիւնէն , նաեւ իր մէջ գըտ-
նուած աղուն կմախքը պէտք է կազմէ , կըր-
նայ չափազանց տկարանալ եթէ կերածներուն
մէջ բաւականաչափ կերպով չգրուի ֆոս-
ֆորային թթուութեամբ խառն կիր , մասնաւոր
երբ կինը ինքնին այնքան առողջ ու ուժեղ
կազմութիւն մը չունի : Այս տեսակ պարա-
զաներու մէջ դիտուած է որ կնոջ ատամները
կը սկսին փտիլ եւ կազմուելու վրայ եղած
կեանքը իրեն անհրաժեշտ ֆոսֆորային թթու-
ութի եւ կիրի խառնուրդը արդէն պատրաստ
կազմուած քէն կը քաշէ . ասոր հետեւանքով
է որ կը ծնին ողնաթեք (rhachitis) մանուկ-
ներ , որոնք ֆոսֆորային թթուութի եւ կիրի
խառնուրդի պակասութեան հետեւանքով
պէտք եղածին չափ արդէն կարծրացած կը-
մախք մը չունին , եւ դիւրաւ ձեւի փոփո-
խութիւններու կ'ենթարկուին , զանազան
կերպերով ծոելով : Միւսնոյն երեւոյթն է
եթէ հաւերը հաւկիթ կ'ածեն առանց վրայի
կեղեւին . ասիկա կը նշանակէ թէ անոնք ի-
րենց կերին հետ բաւականաչափ անխաթթ-
ուային կիր չեն ընդունած :

Թէեւ այնքան վստահ կերպով յանձնա-
րարուած է գլխաւորաբար ֆոսֆորային եւ ա-
մերիկացի լիթիւներու կողմէ ֆոսֆորաթթուա-
յին կիրի գործածութիւնը յղի եւ դիւնցիկ
կնոջ ինչպէս նաեւ վերջինէն զուրկ երախա-
յին սնունդին մէջ , սակայն նորէն կարելի
եղածին չափ այս միջոցը իբր ընդհանուր եւ
ամէնէն բանականը ընդունելու չէ : Փոսֆորա-
թթուային կիրի գործածութիւնը այն ատեն
կրնայ օգտակար կերպով տեղի ունենալ , երբ
մասնաւոր պարագաներու մէջ բժշկին կողմէ
կը հաստատուին այն ախտանշանները , որոնք
ցոյց կուտան այդ տարերքներուն զգալի պա-
կասը մօր կամ աղուն գործարանաւորութեան
մէջ , Բայց բոլորովին սխալ է երբ պարզա-
պէս ռեֆրաժ մը կարդալով թէ « առողջ եւ
հաւթու աղաքներ արտադրելու եւ յղի կնոջ
ակոսները անվնաս պահելու համար , եւլն »

այդ նիւթերուն գործածութիւնը ընդհանուր օրէնք մը դարցուի . նոյն իսկ այն պարագային ուր անոնց գործածութիւնը հարկադրող նշաններ չեն երեւար ենթակային վրայ : Առողջ եւ կանոնաւոր կերպով սնունդ առնող կին մը պէտք չունի յիշեալ կրային աղի գործածութեան . մանաւանդ սա կէսն ալ պէտք է նկատողութեան առնել որ կրային աղի գործածութեան պէտք չունեցող կին մը որ համեմատաբար սղտիկ կոնք մըն ալ ունի, երբ նորէն իր սնունդին հետ կրային աղ ընդունի, ասոր հետեւանք երախան արգանդին մէջ այնքան կրնայ աճիլ, որ ծննդաբերութեան միջոցին թէ՛ մօրը եւ թէ՛ երախային համար մահուան վտանգը կրնայ սպառնալ : Խնդիրը կը փոխուի բոլորովին երբ գիւցման ատենն է որ կը յանձնարարուի կրային աղի գործածութիւնը . մօր կաթը աւելի սննդաբար դարձնելու եւ ասով տոկալու համար

ոսկորներու կազմաւորութեան եւ ատամներու զարգացման միջոցին ծագելիք ֆիզիքական նեղութիւններուն : Մայր կամ ծծմայր չունեցող երախաներու սնունդին մէջ եւս կրային աղ խառնելը կրնայ ամէն կերպով յանձնարարելի նկատուիլ :

Ճիշդ կերպով ընտրուած սննդառութեան տեսակ մը, կրնայ սակայն այն ատեն իր նպատակին հասնիլ, երբ իրեն օգնութեան դայ համապատասխան ՄԱՐՄՆԻ ՇԱՐԺՈՒՄԸ, ուժով շնչառութեամբ մը թարմ օդին մէջ, մարմնի զանազան մասերուն ունեցած դերերուն կանոնաւոր դործագրութեամբ եւ ամենօրեայ կեանքի յարմար եղանակով :

Յառաջիկայ յօդուածով պիտի ներկայացընենք այն բոլոր անհրաժեշտ օրէնքները որոնք ցոյց կու տան թէ ինչպէս յղի կին մը ինքզինքը օգտակար կերպով շարժման մէջ պէտք է գնէ :

SONNET

HENRI BECQUE

Je n'ai rien qui me la rappelle ;
Pas de portrait, pas de cheveux ;
Je n'ai pas une lettre d'elle ;
Nous nous détestions tous les deux.

J'étais brutal et langoureux,
Elle était ardente et cruelle !
Amour d'un homme malheureux
Pour une maîtresse infidèle.

Un jour, nous nous sommes quittés
Après tant de félicités,
Tant de baiser et tant de larmes,

Comme deux ennemis rompus
Que leur haine ne soutient plus
Et qui laissent tomber leurs armes.



Թարգմ. Վ. Թ.

Բան մը չունիմ զինքը ինձի յիշեցնող .
Ոչ լուսանկար, ոչ ալ փունջ մը մազերէն .
Գրուրքներէն չունիմ նոյն իսկ երկու տող .
Ահ, մեկըզմեկ կ'ատէինք բըրտօրէն :


Ես բընութեամբ կոշտ էի և նըւաղկոտ,
Ան բոցի պէս վառվռուն էր և դաժան .
Ո՛վ տարաբաղդ մարդու մը սէրը հեւքոտ
Սիրունայ մը սըրտին վըրայ անարժան :

Եւ ամա օր մն ալ ձրգեցինք մենք իրար
Երջանկութեան օրերէ ետք անհամար,
Համբոյրներէն յետոյ ու բիւր բացերէն,

Ձերդ դէմ առ դէմ կեցած երկու մարտիկներ
Որոնց ոխը ալ գիբենք չը կազդուրէր
Եւ կը թողուն սուրբերն ինձալ ձեռքերէն :



ԲԱՐՔԵՐ ՈՒ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ



Ս Կ Ե Պ Տ Ի Կ



ՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՄԵՈԼՈԳԻՆ
օրը թաղեցինք Գրիգորիս
Եպիսկոպոս Ալէաթճեանը :

Մեր հասարակութիւնը իր բոլոր դասակարգերով տաղանդը ունի իր մեռելները սիրուն կերպով թաղելու , բան մը զոր ես բոլորովին իր լաւ յատկութիւններուն կարգը չպիտի դասէի քանի որ անիկա չգիտեր նաեւ նոյնքան սիրուն կերպով վարուիլ ողջներուն հետ , նոյն իսկ եթէ անոնք իր համախոհներէն չըլլան : Արդեօք դադարին արտաբուրած խորհուրդն է , անձանցին արհաւիրքովը ուռած որ զմեզ բարեկամներ կամ թշնամիներ հաւասարապէս դադարի մը չուրջը կը հաւաքէ , թէ բարեպաշտական պարզ զգացում մը : Ժողովուրդի մը միամիտ մասին մէջ կրնայ բարեպաշտական զգացում մը այդ բանին մղել մարդիկ . իսկ այն ամէն բանի համար որուն մէջ սիրտէն , զգացումէն աւելի միտքը , մտածումը դեր մը կը խաղայ , պարզ է որ բարեպաշտական նկատում մը կարող չէ մարդս որոշումներու հասցընել տալ :

Հո՞ծ էր բաղնիքի մը ժողովուրդին՝ որ եկած էր խնուիլ հովիւի մը զազագին շուրջ , ինչպէս նաեւ բաղնիքի էին իր եղբայրականները , որոնք սուր ծայրերով վեղարներու քառակուսի վերջաւորութիւնները ուսերնուն ի վարարձակած , եկած էին յաւիտենական ուղեւորին քանի մը քայլ հետեւիլ : Սրաառուջ էր հանդէսը , ճիշտ այն եկեղեցական հանդէս-

ներուն պէս , զոր շքեղ ընելու համար ամէն ինչ կատարուած է . եկեղեցական ծանրագին զգեստաւորումներէն սկսելով մինչեւ երկարածիք ելեւէջումները պարզ աղօթեցնելուն որոնք իրենց պաշտօնականութեան մէջ գուցէ կը խեղդեն շատերու սրտին խորը , ինչ որ ամէնէն աւելի պատկառոտ զգացում մըն է , հանդիսադրական բոլոր ձեւակերպութիւններէ խրաչող :

Իր մահով , պարզ է որ մեր կուսակրօն եկեղեցականներուն մէջ իր գրաւած տեղը բռնելու համար շատ քիչեր թերեւս գտնուին , ոչ այն յատկութիւններուն համար , որոնք իրեն վերագրուեցան եւ զորս չունէր , այլ ա՛յն յատկութիւններուն համար որոնք ոչ խօսուածքներու եւ ոչ ալ գրուածքներու մէջ չեղածեցան պէտք եղած կերպով : Ալէաթճեան սրբազան մտքի մարդ մը չէր , այլ գործի մարդ մը . ու ասիկա պարզ է որ արհամարանք մը չի կրնար ըլլալ իրեն համար . ընդհակառակը : Ծիշդ՝ այդ պատճառաւ չէի սիրեր զինքը իբրեւ խօսող բայց կը յարգէի զինքը իբրեւ գործող : Իր բովանդակ գործունէութեան միջոցին կը տեսնենք որ այդ մարդը ծրագիրներ չէ կերտած , այլ իր առաջնորդի եւ քարոզչի պաշտօններուն մէջ գործած է , եւ զինքը ոչ մէկ անգամ պատասխանատուութեան մը բարձրութիւնը հրապուրած է , որքան միշտ իրեն գործ տալու կարող ասպարէզները Գործի մարդ պիտի անուանէի զինքը եթէ ատով չի չփոթուէր ան միւս գործի մարդերուն հետ , որոնք ամէն բան կ'ընեն իրենց օգտին համար , իսկ Ալէաթճեան Սրբազանը գործի մը գլուխ վաղելու թելադրող պարա-

գան ուրիշներուն , հանրութեան օգուտն էր , Գրիգորիս եպիսկոպոսի գործի մարդ ըլլալու յատկութիւնը թերեւս այն աստիճան չգնահատուէր , եթէ իրեն պէս շատեր գտնուէին մեր կղերին մէջ , բայց նոյն իսկ այս օրերս , տարօրինակ զուգահեռութեամբ մը Հապէշաստանի հայերուն Եգիպտոսի խալի կղերականներուն դիմած ըլլալու լուրը կը հաստատէ սա իրողութիւնը թէ որքա՞ն կը պակսին գործի մարդիկը մեր կղերին մէջ : Մեր կղերը ընդհանրապէս կրօնական-ոսմանթիք խառնուածքով մը կը ներկայանայ , չափազանց վերացական իր գաղափարներով եւ տգէտ աշխարհի իրերուն եւ մարդոց մասին իր ըմբռնումով :

Կրօնական մոլեռանդի մը ցաւը չէ զոր կը յայտնեմ , եթէ Հապէշաստանի մեր կրօնակիցներուն մեզմէ բաժնուելով խալտիներու կրօնքին կ'ուզեն յարիւ , այլ կը ցաւիմ այն պատճառի գոյութեան համար , որ տեղի տուեր է այդ դաւանափոխութեան : Այդ պատճառը կարգացիք արդէն Արեւելքի մէջ . այսինքն Հապէշաստանի հայերը յուսահատած թէ երբ եւ իցէ Հայ . Եկեղեցւոյ պաշտօնեայի մը երեսը պիտի տեսնեն , խալտիներուն կը դիմեն , որ անոնք իրենց հոգեւոր հայր մը զըրկեն : Եւրոպական եւ ամերիկեան միսիոնարներ կը ձգեն կեանքի բոլոր հաճելի պայմանները եւ Աւետարանը ծոցերնին դրած կ'երթան մինչեւ Ծայրագոյն Արեւելքի եւ Ափրիկէի խորերը , Տիրոջ բանը քարոզելու համար , մթամած միտքով մարդիկը լուսաբանելու , քաղաքակրթելու համար : Ու որքան խոչընդոտներու կը հանդիպին անոնք իրենց ամբողջ ճամբուն երկարութեանը , եւ սակայն այդ ամէնքը պատճառ մը չեն որ տարուէ տարի չի շատնայ թիւը միսիոնարներուն ուրոնք իրենց կեանքի նպատակ ընտրած են Տիրոջ խօսքին հետ քաղաքակրթութիւնը տանիլ նախնական պայմաններու մէջ ապրող մարդկային խումբերուն : Ի՞նչ է ուզածը մեր կրօնական պաշտօնեաներուն : Կրօնականները չեն կրնար իրենց գոյութիւնը շարունակել իրենց կոչումի միջնադարեան ըմբռնումովը :

Կրօնականներուն հետ դասակարգ մըն ալ կայ որ անսպառ նիւթ մատակարարողն է մեր

հրապարակի գործներուն . գուշակեցիք կարծեմ . մեր կրթական պաշտօնեաներն են անոնք : Որքան չեն յոգնիր գործները ամէն օր գրելու բան մը գտնելով կրօնական եւ կրթական պաշտօնեաներու մասին , այնքան ալ կրօնականները եւ ուսուցիչները նոր բան մը կը գտնեն ընելիք որուն վրայ մարդ ակամայ կը սկսի խօսիլ : Այս անգամ եղանակի միւս նորութիւններուն հետ կրթական նորութիւնն ալ Բերայէն կուգայ : Վարժուհի մըն է , որ Էստեան վարժարանէն կը ճամբուի , շատ խորհրդաւոր պատճառներով : Ըսողներ կան որ այդ ուսուցչուհին նշանուելով , վերջերս քանի մը անգամներ իր նշանածին հետ դուրսը տեսնուեր է , ու այս պատճառը եղած ըլլայ խեղճին հրաժարեցումն : Ուրեմն ուսուցչուհի մը որ նշանուելուն համար կը հեռացուի իր պաշտօնէն . սա տխուր բացատրութեամբ թէ ասկից առաջ ուրիշ ուսուցչուհի մըն ալ նշանուելով մինչեւ տարեշրջանի աւարտելուն չէ սպասեր եւ ամուսնութեան առթիւ հրաժարեր է , եւ ասկից հոգաբարձութեան համար անոր յաջորդ մը նշանակելու տեսնկէտէն դժուարութիւններ ծագե՞ր են : Ուրեմն հիմա ուսուցչուհի մը եթէ նշանուի , տարեշրջանին սկիզբէն պէտք է հրաժարեցնել զայն . սիրո՞ւն տրամաբանութիւն եւ պատուական բարքեր , այնպէս չէ : Լսեցի նոյն իսկ Էստեան վարժարանի պատասխանատու անձերէն մէկը , որ երբ նեղը կը գրուէր այդ տեսակ տպիկար տրամաբանութեան մը համար , կը սկսէր ուրիշ միջոցի մը դիմել կասկած յայտնելով թէ ակնարկուած երիտասարդը չի կարծեր որ ճշմարտապէս աղջկան նշանածը եղած ըլլայ : Ուրիշ պարագայ մըն ալ կայ որ իբր հրաժարեցումն պատճառ յամուութեամբ կը կրկնուի : Յիշուած ուսուցչուհին եղբայր մը ունի կոչումով վարդապետ եւ դաւանութեամբ պապական . այս կէտն ալ հրաժարեցումն պարագային մէջ իբրեւ թէ դեր մը խաղացած ըլլայ : Թէ որքան ճիշդ է այդ տարաձայնութիւնը բան մը չենք կրնար ըսել , միայն սա պէտք է շեշտել որ տարբեր դաւանանքէ ազգական մը կամ շատեր ունենալը եւ նոյն իսկ անոնց հետ մէկտեղ ապրիլը , մէկէ աւելի պարագաներու մէջ արդէն ցոյց

տուած ենք որ պատճառ մը չի կրնար ըլլալ մէկը ազգային պաշտօնէ մը հետու պահելու համար : Ուրեմն ինչո՞ւ այդ տեսակ նկատում մը խեղճ ուսուցչուհի մը հրաժեցնելուն մէջ դեր մը խաղալ :

Երբ մենէ տկարներու հանդէպ կը դըռնուինք , մեր ջանքը պէտք չէ ըլլայ մեր բովանդակ ոյժը անոնց վրայ ի գործ դնել , այլ պէտք է գիտնանք փափկութեամբ վարուիլ այնպիսիներուն հետ : Այս պահանջումը սակայն իր բարքերով աւելի բարձր աստիճանի մը վրայ գտնուող հասարակութիւններէն միայն կրնանք ընել :

Մեր բարքերուն համաձայն ոչ միայն մենէ տկար մարդոց հետ պէտք եղածին պէս չենք վարուիր , այլ նոյն իսկ ամէն կերպով մենէ վար կենդանիները անգամ յաճախ ենթակայ են մեր խժոժութիւններուն :

Այսօր եւրոպական եւ ամերիկեան բոլոր քաղաքակիրթ երկիրներու մէջ կենդանիներու պաշտպան ընկերութիւնները բազմաթիւ են , Բուն մարդկայնութիւնը , հանդէպ մենէ տրկարներուն մեր ունեցած արգահատանքովը


կը սկսի : Ասիկա նոյն իսկ վիճակագրական թուանշաններով հաստատուած ճշմարտութիւն մըն է : Եւրոպական եւ ամերիկեան վիճակագրութիւններ այսօր կը հաստատեն թէ երկրի մը մէջ որքան կատարելագործեալ օրէնքներ եւ կազմակերպութիւն մը ունենայ կենդանիներու պաշտպան ընկերութիւն մը , այնքան ընդհանուր զարգացման տեսակէտէն ժողովուրդին բոլոր խաւերը քաղաքակրթութեան ճամբուն մէջ յառաջ գացած կ'ըլլան : Սոյն վիճակագրական ցուցակին գլուխը կը գտնուին Զուիցերիա եւ Անգլիա . եւ իրաւ ալ այս երկիրները մէկը հին եւ միւսը նոր աշխարհին մէջ իր ամէն դասակարգերով զարգացած առաջին ժողովուրդները կը ներկայացնեն :

Մեր մէջ ալ վերջերս կը լսուէր փափաքը կենդանիներու պաշտպան ընկերութիւն մը կազմելու . նոր քայլ մըն է ատիկա քաղաքակրթութեան ճամբուն մէջ , միայն այդ ծրագիրը պէտք է ի գլուխ հանել : Պէտք է պաշտպանենք տկարները , կենդանիները . առով մենք աւելի կը զօրանանք բարոյապէս :

ՎԵՐՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

I.

Leo Tolstoy, the grand Mujik, by G. H. Perris (Fisher Union).



ԱԼՍԹՈՅԻ վրայ գրուած կենսագրական մը չէ պարզապէս զոր Բէրիս հրատարակութեան տը-

ւած է : Այդ տեսակ բանի մը մասին հետաքրքրութիւնը շատ չափաւոր պիտի ըլլար , որովհետեւ թէ՛ տեսակցութիւններու , թէ՛ յիշատակներու միջոցով մեծ Ռուս մտածողին կեանքը արդէն ամէնուս ծանօթ է : Սոյն աշխատութեան հեղինակը գրեթէ մի միայն զբաղած է քաղաքական եւ կրօնական յեղա-

շըրջումի մը տարբեր բուկերովը , որոնց մէջէն անցած է կոմս Լէօ Թալսթոյ իր աղայութիւնէն սկսելով : Բաց աստի կոմսը ուրիշ գործ մըն ալ կատարած է անթիւ հրատարակութիւններով , գիրքերով , վէպերով , ուսումնասիրութիւններով , յօդուածներով օրաթերթերու եւ հանդէսներու մէջ ու այս առթիւ ունեցած է նաեւ տեսակցութիւններ , ըրած է յայտարարութիւններ որոնց ամէնուն հետ ալ կը զբաղի Բէրիս :

Բէրիսի գրածին նայելով «Լէօ Թալսթոյ ուսու ժողովուրդին մէկ մանրաշխարհն (microcosme) է» : Նոյն ինքը անձնաւորումն է այդ ուսական խորհրդաւոր հոգիին , զոր այնքան մարդիկ ուղած են նկարագրել առանց խոր ճանաչողութեան մը : Յետոյ ճիշդ չէ նաեւ կարծելը թէ սոյն նոր հեղինակութիւնը ջատագովանք մըն է իր գիւցազին նուիրուած : Անգլիացիները շատ դժկամակութեամբ , արբանեակի մը , հետեւողի մը դերը

կը կատարեն , մանաւանդ հանդէպ օտարականներու :

Իբ՝ խորհող կեանքի մը մէջ մտած օրէն , Թալսթոյ միշտ խռոված է կեանքի խնդիրներէն , եւ իր առաջին ստուգած իրողութիւնները շատ մը ուրիշներ յուսահատութեան մատնած է : Հազիւ թէ կեանքի պարագայի մը մասին բացատրութիւն մը կը գտնուէր եւ ահա Թալսթոյ կը հաստատէր անոր անբաւականութիւնը : Զեռք չէր զարներ ոչ մէկ տեսութեան բայց եթէ անով իր ենթարկած առաջին քննութեամբ այդ տեսութեան քայքայելը տեսնելու : Լէօ Թալսթոյի կազմուելու վրայ եղած մտաւորական կեանքին ամբողջ շրջանները իր գրական երկերուն մէջ կ'երեւայ : Ամէն վայրկեան կ'ընդունի նոր հաւատք մը . «Ի՞նչպէս չէի հասկցած ասիկա աւելի կանուխ , որքան գէշ եղած եմ անցելոյն մէջ եւ որքան կարող եմ երջանիկ եւ բարի ըլլալ ապագային : Այս վայրկեանէն կ'ուզեմ ուրիշ մարդ մը դառնալ եւ ուրիշ կեանք մը սկսիլ » : Այդ շրջանին մէջ կը հաւատայ մարդկութեան մը դէպի լաւագոյն աշխարհ մը յառաջանալուն , դէպ աւելի բարձր արդարութիւն մը , դէպի աւելի կատարեալ առաքինութիւն մը , դէպի անդադար բարեօրոյց մը : Յետոյ հազիւ թէ կը ծանօթանար Շոքէնհաուէրի իմաստասիրութեան , յոռետեսութիւնը իր վրայ կը խուժէր : 1860 թուականին է որ իր եղբոր մահը իր մէջ յառաջ կը բերէ բուն տաքնապ մը գաղափարապաշտութեան դէմ , որուն տեղը կը բռնէ շուտով դիտական կատարեալ գրականութիւն մը : Այդ վայրկեանին մէջ է ուր կ'ըսէ .

«Հազիւ թէ մարդս մտաւորական զարգացման որոշ առօրեանի մը կը հասնի , յատկապէս կը տեսնէ ամէն ինչ որ յիմարութիւն եւ խափկանք է : Զջմարտութիւնը զոր անիկա կը սիրէ , ամէն բանէ վեր , զինքը կ'ահաբեկէ : Բնականաբար եթէ դուք կը կրէք ձեր մէջ ճշմարտութիւնը ճանչնալու եւ հռչակելու բաղձանքը , զայն պիտի ճանչնաք եւ հռչակէք : Ահա ամէն ինչ որ ձեռքս կը մնայ իմ բարոյական աշխարհէս : Ահա ինչ որ պիտի ընեմ , բայց ձեր արուեստի ձեւին տակ :

Արուեստը խափկանք մըն է : Ես այլ եւս չեմ կրնար խափկանք մը սիրել , որքան ալ հիասքանչ եղած ըլլայ անիկա : »

Եւ սակայն գիտութիւնը զոր մէջ կը բերէր այլեւս պէտք չէր զինքը գոհացնէր : Վտանգ մը կը սպառնար որ իր կեանքը անորոշութիւններու մաքառումի մը մէջ կորսուէր : Եւ սակայն երեք պարագաներ զինքը փրկեցին այդ կորուստէն . ամուսնութիւնը , հողագործութիւնը եւ գրականութիւնը : Այս ժամանակին էր որ կը գրէր Պասերուզը եւ խաղաղութիւնը , Սենտ Քառէնիս : Վերջապէս եօթնասունական թուականի վերջերուն , երբ իր յիսուներորդ տարին կը թեւակոխէր , Թալսթոյ կը յաջողէր կեանքի խորհուրդին գոհացուցիչ բացատրութիւն մը տալ եւ իր երկոստարգի տարիներուն հաւատքին կը դառնար : Այդ ժամանակէն ի վեր տարակոյսը ա'լ զինքը չի վրդովեր : Իր բարոյական հաւատալիքը կազմուած է արդէն , եւ կարելի չէ այլեւս որ փոփոխութեան ենթարկուի , բայց եթէ թերեւս մանրամասնութիւններու մէջ , իր հաւատալիքը հինգ պատուերներու մէջ կ'ամփոփուի «միակ նպատակ ունենալով մարդոց միջեւ խաղաղութիւն հաստատելու» . Բէրլին հետեւեալ կերպով կ'ամփոփէ այդ հինգ պատուիրանները .

1. Զարին մի յամառիր . ոչ մէկը վշտացուր . համբերութեամբ տար անարգանքները եւ քննէ խնդրուածէն աւելին ըրէ : Մի դատեր եւ կոչում մի ընէր օրէնքին :

2. Ամէն բանի մէջ համեստ եղիր եւ այն կինը զոր առիբ երբէք մի ձգեր :

3. Երգում մի ընէր : Մարդս միշտ Հօր ձեռքին մէջ է եւ չի կրնար բան մը խոստանալ :

4. Բնաւ խորութիւն մի դնէր հայրենակիցներու եւ օտարականներու միջեւ , որովհետեւ բոլոր մարդիկը զաւակներն են միակ Հօր մը :

5. Ուրիշները կարելի եղածին չափ քիչ աշխատեցուր եւ անոնց համար աշխատէ որքան կրնաս :

Եւ Բէրիս, իմաստասիրական գեղեցիկ համադրութեան (synthèse) մը մէջ կ'եզրակացնէ թէ Թալսթոյի համար «Հաւատքը ոչ մէկ կերպով փախուստ մը չէ մտածելէն ու գործունէութենէն, բայց ընդհակառակը ամէնէն բարձր կէտը նախկին բնագոյական հոսանքներուն որոնք կը բովանդակեն ցեղին բարութիւնը եւ զայն կը փոխանցեն դարէ ի դար :»

II.


Le tableau de l'histoire littéraire du monde,
par Frédéric Loliée (Schleicher frères)

Ֆրէտէրիք Լոլիէի այս երկասիրութիւնը առիթը կուտայ մեզ մեր ոտքը առողջ դատողութեան հողին վրայ դնելու : Ծշմարտապէս նշանաւոր աշխատութիւն մըն է այս փոքրիկ հատորը, որուն մէջ խտացած ոգեկոչութեան արտակարգ կարողութեամբ մը գծուած են մարդկային իմացականութեան չեղաշրջումի բոլոր բուլբոր եւ հեղինակը իրաւունք ունի ըսելու որ իր դիրքը «մատենիկ մը, էջերուն թիւով, կը ներկայացնէ ամբողջ մտահնադարան մը իր նիւթին ընդարձակութեամբ» Իրաւալ, Լոլիէ առած է մարդը նոյն իսկ նախնական քաղաքակրթութեան մը ծագումին մէջ ուր անիկա իր սկզբնական մտածումը արտայայտելու համար ուրիշ բան չի ճանչնար բայց եթէ խաղտու ձայնարկութիւն մը կամ միավանկային չփոթ լեզու մը : Լոլիէ ամբողջ ժամանակներու տեւողութեամբը կ'անցնի, հետեւելով մարդուն որ դարերու ընթացքին տակաւ կատարելագործելով իր արտայայտութեան միջոցը, լեզուն, ա՛յն չափով, որ իր արտայայտելիք գաղափարներն ալ հետզհետէ աւելի բարդ եւ աւելի վերացական հանգամանք մը կը ստանան : Յետոյ կ'առնէ արդէն գրեթէ պատմական ժամանակները, Եգիպտոսը, Քաղդէան, Ասորեստանը, Չինաստանը, իրենց գիտուններով, բանաստեղծներով, իմաստասէրներով : Ասոնցմէ վերջ կը տեսնենք մարդկութիւնը որ միշտ յառաջընթացութեան մէջ է, արագ շարժութեամբ մը զէպ ի յառաջիմութիւն : Արեւելքի այս հին քաղաքակրթութիւն-

ներուն կը յաջորդեն արիական հանճարին առաջին նշանները : Հելլենացիներուն հաստատուելովը արուեստին՝ զանազան ձեւերու տակ եղած արտայայտութիւնները կը սկսին աւելի ազնիւ եւ աւելի անխառն երեւալ, եւ այդ հեռաւոր հին ժամանակէն ստանալով այնպիսի կատարելագործութիւն մը զոր դրերու երկար յաջորդութիւն մը չպիտի կարենար եղածին վրայ բան մը աւելցնել, եւ այս կերպով ստեղծելով, մէկ ցայտով, մարդաս մտաւորական ժառանգուած ստացուածք : Շարժելու նշանը տրուած է արդէն եւ երկրիս բովանդակ մակերեսին վրայ, մարդկութիւնը յարատեւ կերպով կը նրբանայ : Հռոմէական դարաշրջանը, դարաշրջան մը օրէնսդիրներու եւ իրաւագէտներու, ապագայ քաղաքակրթութեան մը սկզբունքները կը հաստատէ, այն քաղաքակրթութեան որ միջին դարու աղջամուղջին մէջէն աւելի կենդանի ու աւելի ուժով դուրս պիտի ելլէ, յետոյ փթթելու համար ազատ քննութեան եւ փորձառական մէթոտներու արեւին տակ :

Այս աշխատասիրութեան մէջ, Ֆրէտէրիք Լոլիէի գլխաւոր արժանիքը կը կայանայ այն բանին մէջ որ անիկա կրցած է ամուր կապով մը իրարու զօդել աշխարհի պատմութեան բոլոր ժամանակներուն այդ ցիր ու ցան շըլթայի օղակները, ցոյց տալով առանց միջամտութեան շարունակութիւնը յառաջդիմութեան, իր վստահ եւ մշտատեւ յառաջխաղացութիւնը նոյն իսկ այն տեսակ ժամանակներու մէջ ուր ամէն ինչ կը թուէր կանգ առած ըլլալ : Նմանապէս Լոլիէի արժանիքն է լուսաբանած ըլլալը սա կենսական իրողութիւնը թէ «մարդկութիւնը արուեստի ինչպէս նաեւ առեւտուրի եւ ճարտարարուեստի բոլոր արտայայտութիւններովը կը ձգտի հետզհետէ խորտակել ազգայնութիւններու շրջանակը :» շատ քիչ բան կայ որ այնքան թեւադրիչ եւ համոզկեր ըլլայ իր հակիրճ ըլլալուն մէջ, որքան այս համառօտ ուսողմասիրութիւնը արուեստի իմաստասիրութեան վրայ, մարդկային մտաւորականութեան մասին իր անդրադարձութիւններով (répercussion) :

ԱՆԹԵԼ ՀԵՌԱԶԱՅՆԸ



ՀԵԿՏՐՈՒԳԷՏՆԵՐԸ աշխարհը կը յեղաշրջեն. անոնք անկարելին աշխարհակալներն են. Հազիւ թէ յաղթանակ մը տարած եւ ահա ուրիշ մը կը խորհին, կը պատրաստեն, կ'իրագործեն, ու ափի բերան՝ հասարակութիւնը ինքնին կը հարցնէ թէ ինչ պիտի ըլլայ ան-ծանօթը հետապնդող այնչափ հրաշքներուն վերջին բառը: Արդէն Մարքոնի գիւտը կարեւոր կատարելագործութիւններ կրեց, հիմայ հեռագրական թելերէն ետքը, հեռաձայնին թելերն է որ կը վերցուն եւ մարդկային ձայնը պիտի ճամբորդէ լոյսի ճառագայթի մը վրայ: Նիւ-Եօրքի հանրային պարտէզներէն մէկուն մէջն է որ վերջերս տեղի ունեցեր են փորձերը եւ չափ ալ յաջող կերպով, ինչպէս կը հաւատարմութիւն:

Լուսաձայնը (phothophone) — այս է նոր գործիքին անունը — երկու առաւելութիւն պիտի ունենայ. անմիջական հաղորդակցութիւնը եւ թելերուն հաստատման ծախքին ջնջումը:

Այս դրութեան առաջին գաղափարը յղացած է Պէլ, որ գործիքը մկրտած է Ռատիֆօն անունով: Հարթ հայելի մը, առաքման կայանը, այնպէս մը զետեղուած է որ արեւի ճառագայթ մը կ'անդրադարձնէ *սփէնդլ*է հաւաքիչի մը (percepteur) վրայ որ ընդունող կայանին մէջ կը գտնուի: Փոխանցող հայելիին առջին խօսուելով ձայնին թրթռումները լուսեղէն ճառագայթին ուժգնութիւնը կը խանգարեն, եւ լուսին այս փոփոխութիւնները հաղորդուելով սէլէնիտէ հաւաքչին, առաջ կը բերեն առաջիններուն համապատասխան թրթռումներ:

Ճաճանչաձայնը (radiophone) լուսաձայնին մէկ կատարելագործութիւնն է. գործիքին ամբողջ գաղտնիքը փոշիի հատիկի մը մէջ կը կայանայ:

Փողաբերանը ուր կը խօսուի, լուսային աղեղի մը հետ ելեկտրական յարաբերութեան մէջ է. այս անթել հեռաձայնին միւս ծայրը հաստատուած է ներսի կողմէն արծաթազօծուած զուգորդական (parabolique) մեծ անդրադարձնող մը: Անդրադարձնողին (refluteur) խորը գտնուած ծակէ մը կ'անցնի ապակեայ փոքր խողովակ մը, անդիկէ ջերմաչափներուն ընդունարանին նման գոհնտով մը: Այս ապակեայ խողովակին վրայ հաստատուած է քառաչուէ փող մը որ սովորական հեռաձայնին ծայրը գտնուածին նման ձայնական հաւաքիչով մը կը վերջանայ: Երբ «փնտռող»-ին գիրքը ճշգրտած է, լուսի ճառագայթը ընդունելութեան կայանին անդրադարձնողին մէջ կ'իյնայ: Հաղորդակցողը փողաբերանին մէջ խօսած ատենը ամբողջ լուսի հոսանքը ձայնէն կը ծծուի: Լոյսը կը դողդողայ առանց իր արագութենէն բան մը կորսնցնելու. լուսի այս գողգողումը վայրկեանապէս կը վերադարձուի գործիքին միւս ծայրը, հոն գտնուող ընդունարանով փոքրիկ խողովակին շնորհիւ: Այս խողովակը լեցուած է կոպրանիտի (pissenlit) այրումէն առաջ եկած նիւթով մը:

Ամէնէն ուժով աչքը ճաճանչաձայնական գործիքը քննելով պիտի չկարենար նշմարել որ այս այնքան նուրբ եւ գրեթէ անտեսանելի նիւթը կը թրթռայ երկու կայաններուն միջեւ տեղի ունեցած խօսակցութեան ատեն: Եւ սակայն ան է որ ձայնը կը հաղորդէ ազանջին, պաշտօն՝ զոր կը կատարէ հեռաձայնի արդի դրութեան մէջ մետաղային փոքրիկ նուրբ թիթեղի մը աննշմարելի շարժումը:

Մեր տուած տեղեկութիւնները, որչափ ալ համառօտ՝ սակայն կը բաւեն նոր գործիքին սկզբունքը հասկցնելու համար: Ահաւասիկ գիւտ մը որին շնորհիւ կարելիութեան սահմանին կը մօտենայ չափ մը աստղագէտներու եւ մասնաւորապէս Ֆլամարիօնի մոլորակներուն հետ յարաբերութեան մէջ մտնելու գաղափարը:

ՏՐԷՅՖԻԻՍԻ ԽՆԴՐԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ



ԶԳԻ մը համար ամէնէն փայլուն, ամէնէն գեղեցիկ ու պատուաբեր դիրքին տիրանալէ, ընդհանուր գեղարուեստներու ու գիտութեանց օրրան մը ըլլալէ ու մանաւանդ մարդկայութեամբ առլցուն գրեթէ միակ երկիրը ըլլալու համբաւը վայելելէ ետքը, այսօր ամէնէն մթամած ապագան ունեցող խուժդուժ ու մեծ մասամբ այլասերած, լղրճուած երկրի մը պատկերը կը ներկայացնէ Ֆրանսա՝ զոր օր օրի ալ աւելի եղծուած կը տեսնենք դժբաղդաբար :

Գիտեմ թէ այս անգոյն ու միանգամայն տխուր վիճակը՝ որուն մէջ այդ գեղեցիկ երկիրը կը տապալակի, որչափ կը տխրեցնէ ամէն անոնք որոնք Ֆրանսան սիրել սորված են : Մեզի համար մանաւանդ, շատ ցաւալի բան մըն է ականատեսս ըլլալ այդ տակաւ չեշտուող սորսորումին, որովհետեւ ինչ որ ստացած ենք արեւմուտքի քաղաքակրթութենէն՝ գլխաւորաբար Ֆրանսայի կը պարտինք : Ազդուած իր գրականութենէն, ազդուած իր բարքերէն, ընդհուլուած երբեմնի իր Հոգիով և իր Մտքին թռիչքներուն մէջ միայն մեր գրական վերացումը փնտռած, Ֆրանսայով ճանչցած ենք Եւրոպան՝ որ մեզի մութ կը

մնար : Եւ եթէ այդ ճանաչողութիւնը մեզի համար չէ ունեցած նշանակելի օգտակարութիւն մը՝ պատճառը մենք ենք ապահովաբար, քանի որ շատ գէշ ճանչցած ենք Ֆրանսան ու շատ գէշ ալ կը ճանչնանք դեռ : Զուտ մտաւորական տեսակէտին վրայ խօսած ըլլալու համար, չենք հետեւած Ֆրանսական Մտքին բնաշրջման, ոչ ալ թափանցած անոր Հոգիին նոր երեւոյթներուն : մեզմէ շատերուն համար Ֆրանսա ռօմանթիք գրականութեան շրջանէն չէ ելած դեռ և անոնցմէ շատերն ալ որոնք մեր գրական հրապարակին վրայ կը մնան նախորդ սերունդէն, տակաւին Հիւկոյով ու Լամարգինով կը զբաղին և ատոնց է որ կ'անդրադառնան իրենց գրուածքներուն մէջ : Անոնց համար բնապաշտ դպրոցը մութի մէջ մնացած է : Զուտ միայն կը ճանչնան ուղղակի իր համբաւէն, այն ալ շատ սխալ հասկացողութեամբ և ընդհանրապէս առանց կարդացած ըլլալու : Իսկ նոր գրողները, Բօլ Ատան, Միւսսօ, Մէթէրլինկ, Քամիլ Մօքլէռ, Ռօնինները, Թայեար, տը Ռէնետիէ, Ալպէռ Սամէն, Բիէռ Լուիս, Վէռհառն, Քամիլ Լըմօնիէ, ևլն., բոլորն ալ անձանօթ մարդիկ են իրենց համար, որոնց ոչ գործերուն տեղեակ են և ոչ ալ ուզած են հասկնալ այն նոր ձգտումները՝ որոնց կը յանգի այսօրուան Ֆրանսայի գրա-

կանութիւնը՝ Վէպի, Բանաստեղծութեան
և Թատրոնի մէջ :

Բայց ինչ որ ալ ըլլայ քաղաժօգուտ
նիս , այն ազդեցութիւնը զոր Ֆրանսա
կէս դարէ առելի ժամանակամիջոցէ մը
ի վեր կ'ունենայ մեր Մտքին ու Հոգիին
վրայ , պարտքի մը զգացումը կը ներշնչէ
մեզի . — Խոր քննութեան մը առարկայ
ընել իր այսօրուան վիճակը , որ որդնա-
կեր գեղեցկութեան մը տպաւորութիւնը
միայն կ'առթէ մարդուս :

Որչափ ալ տխուր ու աննախանձելի
երեւայ այդ վիճակը , ապահովաբար
Ֆրանսա անկման մէջ չի կրնար համար-
ուիլ . հոգեվարք մը չէ աստիկա որ մահ-
ուան յանգի : Ֆրանսայի անկումը տեղի
ունեցած է արդէն , և այդ անկման
ծնունդը փնտռելու համար պէտք է շատ
առաջ երթալ , մինչև Լուի Ժե.ի թագա-
ւորութեան վերջին տարիները , մինչև
1789ի յեղաշրջումը , և աստիճանաբար
իջնել մինչև Մեծն Նաբոլէոնի պատե-
րազմներուն հետեւանքով առաջ եկած
մտաւոր ու արուեստական ամլութիւնը :
Առաջին կայսրութեան կործանումը վեր-
ջակէտը կրնար ըլլալ այդ անկումին ,
և առաջին Հանրապետութենէն իսկ թե-
րեւս վերածնունդը սկսէր , եթէ երբեք
երկրորդ կայսրութիւնը և 1870-71 պա-
տերազմը չհետեւէին անոր : Այդ երկ-
րորդ կայսրութիւնը շատ ֆրասեց երկ-
րին . այնչափ ատեն ամուլ ու անգոյն
վիճակի մը մէջ տարուբերելէ ետքը ,
Ֆրանսա յանկարծական վերազարթնումի
մը պէտք ունէր . ուժերը կային արդէն
և ազատ միջնորդութիւն մը միայն պէտք էր
բառին բովանդակ նշանակութեամբ կա-
րենալ վերածնելու համար : Եւ սակայն
կայսրութիւնը շատ բան զսպեց . գրա-
կանութիւնը սեղմուեցաւ , կրկին մնաց

իր առջի անգոյն ձեին և արտադրու-
թեան մէջ , մինչև որ երկիրը պարտա-
ւորուեցաւ Սէտանի նախատիւքը կրելու :
Այդ պատերազմը՝ որ ապահովաբար
կայսրութեան էն փայլուն օրերէն նուազ
ֆրասաբեր եղաւ Ֆրանսայի , տեսակ մը
փրկութեան սկզբնապատճառ կրնայ
նկատուիլ : Վերածնունդի դուռը ան էր
որ բացաւ և իր բովանդակ արհաւիր-
քովը կրկին մեծ ֆրաս մը չառաւ Ֆրան-
սայի՝ զոր կարելի չըլլար դարմանել .
միայն՝ անոր Հոգիին վրայ կրցաւ խոր
հետք մը ձգել . քաղաքական տեսակէտը
կրնար փրկուիլ , բայց ֆրանսական հո-
գին ցեղային ատելութեան տարր մը
կը ստանար , որ ժողովուրդին թափան-
ցուելէ ետքը արմատացաւ գրականու-
թեան ու նոյն իսկ գեղարուեստին մէջ :

Բարեբաղդաբար , երկրին ուժերը
չէին կորսուած : Կայսրութեան անկու-
մէն անմիջապէս ետքը , գրականութիւնը
ամէնէն սուր զարգացումը ստացաւ և այդ-
ատենն է որ ծաղկեցաւ ռոմանթիզմը՝
որուն չափ ծաւալուն գրական սեռ մը
եղած չէ տակաւին : Միւս կողմէ , պա-
տերազմի արհաւիրքներէն ազատած ,
ժողովուրդը ձեռք առաւ իր աշխատու-
թիւնը , սուգը մոռցուեցաւ , ցեղային
ատելութիւնը քնացուեցաւ ու երկիրը
կամաց կամաց սկսաւ իր առջի դիրքին
տիրանալ : Ճշմարիտ վերածնունդը սկսած
էր ու կը խոստանար շատ գեղեցիկ ըլ-
լալ , նկատի առնելով մանաւանդ այն
քաղաքական դրութիւնը՝ որուն ենթա-
կուած էր երկիրը :

Եւ ահա ճիշդ այդ վերածնունդի
ճամբուն մէջ է որ Ֆրանսա կասած է
այսօր , անանցանելի պատուար մը
գտնելով իր առջին՝ Տրէյֆիլսի խնդիրը՝
որ պարզ մատնութեան մը և դատական

սխալի մը խնդիրը չէ : Ընդհակառակը , քաղաքային , մտաւորական եւ ընկերական տեսակէտով շատ բարդ ու բազմակողմանի խնդիր մըն է ան , որուն գլխաւոր կէտերը կուգեմ երեւան հանել : Անկէ առաջ , աւելի որոշ գաղափար մը կարենալ տալու համար , իր ընդհանուր գիծերուն մէջ պիտի ներկայացնեմ հիմա թէ Տրէյֆիւսի խնդիրը ինչ է իր մերկութեան մէջ :

*
* *
*

Փրանսական սպայակոյտէն՝ ազգային պաշտպանութեան տեսակէտով կարեւոր գաղտնի թուղթեր կը գողցուին . լուրը կը տարածուի իսկոյն , ու մամուլը՝ իբր թարգման հանրային կարծիքին , կը պահանջէ որ յանցաւորը գտնուի ու պատժուի :

Օր մը՝ լուր կու տան վերջապէս թէ զինուորական իշխանութիւնները կրցած են ձեռք անցընել անստորագիր ցուցակ մը՝ Պոռտրօն՝ որուն մէջ մատնիչը իր թղթակցին կը խոստանայ կարգ մը վաւերաթուղթեր հաղորդել : Յուցակին գիրը քննութեան կ'ենթարկուի ու նմանութիւն մը երեւան ելած ըլլալով անոր և հրեայ հարիւրապետի մը գիրին միջեւ , ամէնուն սիրտը կը հանգարտի : Մատնիչը՝ Տրէյֆիւս՝ գտնուած է և թերթերը իսկոյն կը հրատարակեն անոր անունը : Քիչ ետքը զինուորական ատեան կը դումարուի և դռնփակ դատաւարութեամբ մը Տրէյֆիւս ցկեանս բերդարգելութեան դատապարտուելով , կը զրկուի Սատանայի կղզին , հակառակ միշտ իր անմեղութեան վրայ պնդելուն :

Հանրային կարծիքը գոհացած է :

Սակայն , դատապարտուող հարիւրապետը ընտանիք մը ունի և բարեկամ-

ներ ալ՝ որոնք կ'աշխատին ապացուցանել իր անմեղութիւնը : Անոնց աշխատած պահուն յանկարծ երեւան կ'ելլէ թէ Տրէյֆիւս ապօրէն կերպով դատապարտուած է , թէ առանց ամբաստանեալ կողմին զիտութեան գաղտնի թուղթեր հաղորդուած են զինուորական ատեանին : Երիտասարդ գրագէտ մը՝ Պէռնար Լազառ՝ որ հակառակ հրեայ ըլլալուն պատիւ մըն է Փրանսայի համար , տետրակ մը կը գրէ , որուն մէջ՝ Տրէյֆիւսի ապօրէն կերպով դատապարտուած ըլլալուն կրթնելով , կը զգացնէ դատին վերաքննութեան պէտքը : Այդ միջոցին Մաքէն կը հրատարակէ Պոռտրոյին նմանագրութիւնը (fac-similé) և դատապարտուած հարիւրապետին եղբայրը՝ Մաթիէօ Տրէյֆիւս , բաւական ատեն զայն խոր քննութեան մը առարկայ ընելէ ետքը , կ'ամբաստանէ էսթէրհազի անունով հրամանատար մը՝ իբր հեղինակ Պոռտրոյին :

Խնդիրը տակաւ սուր հանգամանք մը կը ստանայ : Ամէնէն յարգուած երեսփոխան մը՝ Պ. Շէօրէ-Քէսթնէր՝ ծերակոյտին բեմը կը հանէ զայն և յիշատակելէ ետքը թէ Տրէյֆիւս մի միայն Պոռտրոյին վրայ դատապարտուած է , կը շեշտէ սա կէտը թէ Պոռտրօն ուրիշի մը՝ էսթէրհազի կողմէ գրուած է :

Երկիրը կը սկսի յուզուիլ :

Երկու տարի անցած է Տրէյֆիւսի դատապարտութենէն ի վեր , և ամէն մարդ սոսկումնով կը մտածէ այն ահռելի կացութեան վրայ՝ որուն անշուշտ ենթարկուած պիտի ըլլար դատապարտեալը՝ եթէ իրօք անմեղ էր :

Այդ հոգեկան կացութեան միջոցին՝ սպայակոյտին կողմէ գաղտնի կերպով

Թուղթ մը կը հաղորդուի Էֆիէն Թերթին՝ որուն մէջ «Սա սրիկայ Տ...ը» պարբերութիւնը կը գտնուէր և որ իբր գլխաւոր ապացոյց մը նկատուած էր պատերազմական նախարարութենէն՝ Տրէյֆիւսի մեղապարտութեան մասին ։ Էֆիէն մի միայն Տ» սկզբնատառին գոյութիւնը բաւական չսեպելով, կը խեղաթիւրէ Թուղթը ու կը հրատարակէ զայն՝ վերոյիշեալ «Սա սրիկայ Տ...ը» պարբերութիւնը փոխելով «Սա անասուն Տրէյֆիւսը»ի ։

Այս հրատարակութիւնը նոր հոսանքի մը կը մղէ միտքերը ։ Ժողովուրդին ու մամուլին մեծամասնութիւնը վերջնականապէս կը համոզուին Տրէյֆիւսի մեղապարտութեան, մինչդեռ փոքր մաս մը չուզեր հաւատալ այդ Թուղթին, և հիմնուելով Տրէյֆիւսի ապօրինի դատապարտութեան ու Պռուտրոյին և Էսթէրհազիի գիրին միջեւ գտնուող նմանութեան վրայ, վերաքննութիւն կը պահանջէ ։

Պայքարը կը սկսի այդ երկու կուսակցութեանց միջեւ, որոնք շարունակ կը ստուարանան ։ Մինչեւ այն ատեն անտարբերութիւն ցոյց տուող մարդիկ կը նետուին գործին մէջ, միթիւնկներ կը գումարուին, հաւաքումներ, բանախօսութիւններ և թեր ու դէմ ցոյցեր կ'ըլլան, մինչեւ որ նախարարութիւնը կը ստիպուի զինուորական ատենանի մը առջեւ դրկել Էսթէրհազին՝ որ սակայն, երեք փորձ-քննիչներու եզրակացութեան վրայ անպարտ կ'արձակուի ։

Սակայն անոնք՝ որ կասկածներ ունին Էսթէրհազիի մասին, չեն ուզեր վստահիլ զինուորական ատենանին ուղղամտութեան վրայ, արդէն անգամ մը տեսած

էին նմանօրինակ ատենանի մը կողմէ կատարուած ապօրինաւորութիւնը ։

Պայքարը նորէն կը սկսի, այս անգամ ակաւաւի սուր հանդամանք մը ստացած ։ Փրանսա երկու մասի բաժնուած է, Հակատրէյֆիւսեաններու եւ Տրէյֆիւսեաններու ։ Շատ մարդիկ գործերին երեսի վրայ թողած, փողոց կ'իյնան իրենց մտածածը յայտարարելու, մամուլը կատարեալ պատերազմի դաշտի մը կը վերածուի ու քիչ ետքը փողոցները նոյնին իրականութիւնը կը պարզեն ։ Մարդիկը չեն գոհանար միայն իրենց գաղափարը յայտնելով, հապաիրար ալ կը ծեծեն և արիւնը հոսիլ կը սկսի ։

Բարիզի հանդարտիկ ժողովուրդը բառին բովանդակ նշանակութեամբ խուժան մըն է դարձած, փոթորկոտ ծովի ալիք մը կարծես՝ որ ամէն մէկ ելեւէջին քիչ մը աւելի կը բարձրանայ ։

Այդ խռովայոյզ վիճակին մէջ էր երկիրը՝ երբ օրին մէկը՝ սոսկալի ցունց մը զայն կը դղրդէ հիմէն ։ Մարդ մը՝ որ ամբողջ իր կեանքին մէջ բնաւ չէր մասնակցած քաղաքական վիճաբանութեանց, մարդ մը՝ որ Փրանսային ամէնէն հարուստ քաղաքացիներէն մէկը ըլլալուն հետ, ամէնէն ալ մեծ միտքերէն մէկն էր, Էմիլ Զոլա՝ խնդրին մէջ կը մտնէ և երկու բաց նամակներով (*) վերաքննութեան կողմը բռնելէ ետքը Կ'աւքաւսաւեմը կը հրատարակէ ։

Բովանդակ Փրանսա՝ ինչպէս ըսի, կը ցնցուի այդ նամակէն՝ որուն հրատարակուած օրը վերաքննութեան հիմնարկէքին թուականը կրնայ համարուիլ ։

[*] Lettre à la jeunesse եւ Lettre à la France .

Իր այդ նամակով՝ որ Հանրապետութեան նախագահին ուղղուած էր, Զօլա կը շեշտէ Տրէյֆիլսի ապօրէն կերպով դատապարտուած ըլլալը, Պոռտօն Էսթէրհազիի կը վերագրէ՝ փախուկներու տեղ դնելով անոր գիրը քննող փորձ-քննիչները, կը ձաղկէ սպայակոյտին աղտոտ մասը և կը զգացնէ կարգ մը իրողութիւններ, կ'ամբաստանէ կարգ մը մարդիկ. բոլոր ասոնք անկէ ի վեր՝ յաջորդաբար տեղի ունեցած յայտնութեանց հետեւանքով հաստատուած բաներ են հիմա:

Այդ նամակը վերաքննութեան հիմ. նարկէքը եղած էր. իսկ այն դատը՝ որուն Զօլան ենթարկեցին՝ բուն իսկ չէնքը կը բարձրացնէ: Զօլայի դատապարտութենէն ետքը կարելի չէր խնդիրը փակել. վերաքննութիւնը պէտք էր տեղի ունենար, որովհետեւ երկիրը այդպէս՝ շարունակ անստոյգ ու խնդրին վրայ տգէտ ձգելէն կրնային առաջ գալ շատ ծանր հետեւանքներ՝ զորս ճշմարտութիւնը միայն պիտի յաջողէր խեղդել իրենց ձուի վիճակին մէջ:

Բայց ով գիտէ դեռ որչափ ատեն Պրանսա այդ կացութեան մէջ պիտի մնար, եթէ երբեք Հանրիի պարագան անմիջական չդարձնել վճռաբեկ ատեանին գումարումը: Զօլայի կամաւոր աքսորէն ետքը երբ դեռ հակադրէյֆիլսեաններու և տրէյֆիլսեաններու միջև պայքարը կը շարունակուէր, պատերազմական նախարար մը (*) երեսփոխանական ժողովին բեմէն կը յայտարարէ թէ Տրէյֆիլս օրինաւորութեան ռահմանին մէջ դատապարտուած է և թէ կառավարութիւնը անոր մեղապարտութեան ապա-

ցոյցը ի ձեռին ունի: Կը ստիպեն որ աւելի բացօթեց կերպով խօսի, ու Պ. Քավէնեաք, Պրանսայի ներկայացուցիչներուն առջև կը կարգայ «Սա սրիկայ Տ...ը» թուղթը՝ զոր ծափահարութեամբ կ'ընդունին երեսփոխանները և անոր՝ բովանդակ Պրանսայի նահանգներուն մէջ փակցուիլը կը քուէարկեն՝ անօրինակ վատութիւնը ընելով միեւնոյն ատեն պախարակելու բոլոր այն անձերը՝ որոնք վերաքննութեան ի նպաստ կ'աշխատէին:

Մէկ երկու օր ետքը, երեւան կ'ելլէ սա ամենակարեւոր իրողութիւնը թէ Պ. Քավէնեաքի կարգացած թուղթը կեղծ էր և թէ զայն շինողն էր Հանրի՝ որ պատերազմական նախարարէն հարցաքննուելով կը խօստովանի իր անուրակելի ոճիրը ու նոյն իրիկունն իսկ ածելով մը վիզը կը կտրէ բանտին մէջ:

Այնպատճառ պէտք կար վերաքննութեան: Տրէյֆիլսի դէմ հանուած ամենամեծ ապացոյցը ջուրը կ'իյնար ու Պոռտօն ալ կասկածի տակ էր թէ իրաւ իր գրածն է: Պրիսոնի դահլիճը քաջութիւնը կ'ունենայ վերջապէս վերաքննութիւնը արտօնելու և վճռաբեկ ատեանը գումարուելով, հաւաքական նիստերու շարքէ մը ետքը վճիռ կուտայ ի նպաստ վերադատման:

Եւ ահա այսօր ճիշդ այդ վերադատումն է որ տեղի կ'ունենայ Ռէնի զինւորական ատեանին առջև:

* * *

Ինչպէս տեսնուեցաւ, խնդիրը իր ինքնութեան մէջ մատնութեան արարքի մը և դատական սխալի մը վրայ հիմնուած է միայն. և սակայն, առաջին անգամը չէ որ Պրանսայի մէջ մատնութիւն մը կը գործուի, անմեղ մը կը

[*] Պ. Քավէնեաք:

դատապարտուի . Հարիւրաւոր օրինակներ կան ճիշդ ատոր նման , որոնց մասին ժողովրդական ո՛ր և է յուզում կամ զայրոյթ չէ արտայայտուած բնաւ . անմեղներ եղած են՝ որոնք դատական պարզ սխալի մը հետեւանքով իրենց բովանդակ կեանքը թիարանի մէջ անցուցած՝ և տաժանակիր աշխատութեան ենթարկուած են : Յետոյ երեւան ելած է իրենց անմեղութիւնը , և դրամական փոխարինութիւն մը ստանալով , մարդիկը դացած հանգիստ ապրած են առանց ո՛ր և է վրդովում առաջ բերելու : Ուրեմն ինչո՞ւ Տրէյֆիւսի խնդիրը այս աստիճան յուզեց Պրանսան :

Հոս է գործին ամէնէն բարդ կէտը :

Որչա՛փ ալ զօրաւոր ըլլային Տրէյֆիւսի ընտանիքն ու բարեկամները , որչա՛փ ալ հիմնաւոր ըլլային այն փաստերը՝ զորս մէջտեղ կը դնէին 1894ի դատաւարութեան ապօրինաւոր՝ և Տրէյֆիւսի ալ անմեղ ըլլալը ապացուցանելու համար , խնդիրը կրկին այս համեմատութիւնը չպիտի ստանար : Ուրեմն կա՛ր պատճառ մը որ այս աստիճան հրդեհեց զայն . այո՛ , և այդ պատճառը ուրիշ բան չէր՝ եթէ ոչ սա ակնյայտի պարագան՝ թէ վերաքննութեան ի նըպաստ պայքարը սկսելէն ի վեր՝ Տրէյֆիւսի խնդիրը դադրեցաւ մատնութեան գործի մը և դատական սխալի մը վրայ հիմնուած բան մը ըլլալէ : Ընդհակառակը , եթէ հոգեբանօրէն հետեւելու ըլլանք խնդրին յաջորդաբար ստացած երեւոյթներուն , պիտի տեսնենք որ Տրէյֆիւսի անուան շուրջը յարուցուած բոլոր կռիւները , արտասանուած բոլոր խօսքերը , կատարուած բոլոր գործերը ու վերջապէս առաջ եկած կոռուակցութիւնները երկու որոշ դրոշմ կը կրեն .

— Անոնք որ Տրէյֆիւսի հակառակորդ կը հանդիսանան՝ Հին Միաբով ընդելուզուած են , մինչդեռ բոլոր անոնք՝ որ Տրէյֆիւսի կողմը կը մնան՝ հակառակ յարուցուած փոթորիկներուն , նոր Միտքին ազդեցութիւնը կը կրեն շատ յետակ կերպով :

Խնդրին բանալին հոս է , ու քիչ մը բացատրութիւն կը բաւէ հասկցնելու համար թէ ինչո՞ւ Պրանսա այս աստիճան դժգոհեցաւ պարզ մատնութեան գործի մը , դատական սխալի մը հետեւանքով : Այդ բացատրութիւնը սակայն զմեզ շատ առաջ պիտի տանի , մինչև երկրորդ կայսրութեան կործանումը՝ մինչև Պրանսայի վերածնել սկսելու թուականը :

Այս յօդուածիս սկիզբը բացատրեցի արդէն թէ ի՛նչ պայմաններու մէջ սկըսաւ այդ վերածնունդը : Հոս դիտել տալիք կէտս սա է միայն որ այդ վերածնութիւնը կ'ըլլար ի վնաս կաթոլիկութեան . Պրանսա՛ այն մեծ անկումէն ետքը՝ որուն ենթարկուած էր՝ եթէ երբեք կարենար իր նախնի դիրքին հասնիլ , կրօնքով կաթոլիկ մնալուն հակառակ՝ կաթոլիկ երկիր մը չպիտի ըլլար ա՛լ . այսինքն , կաթոլիկութիւնը չպիտի ազդեր իր մտաւորական , ընկերական ու քաղաքական կեանքին վրայ և առջի պէս երկրորդ Սպանիա մը չպիտի մնար :

1789 ի յեղաշրջութենէն ի վեր երկիրը արդէն իսկ խորթ նկատել սկըսած էր կրօնական տիրապետութեան տարրը , այնպէս որ , երբ իրաւունքի հաւասարութեան սկզբունքը տարածուեցաւ , կղերը սկսաւ կորսնցնել իր ազդեցութիւնը : Քաղաքական նոր փոփոխութիւններ կրկին անոր տուին իր առջի դիրքը . յետոյ ուրիշ նոր փոփոխու-

թիւններ եղան ու վերջապէս, երկրորդ կայսրութեան կործանելէն ետքը, կղերը սկսաւ իյնալ, սնանկանալ և քայլ առ քայլ նահանջումէ մը ետքը պարտաւորուեցաւ նորէն փակուիլ ծնունդ տուող արգանդին՝ Եկեղեցիին շրջանակին մէջ։

Կղերին այս անկումը եղած էր առանց յայտնի ճիգի մը, առանց մասնաւոր պայքարներու։ 1789ի սկզբունքները՝ որոնք արմատացած էին ժողովուրդին մէջ, ընկերվարական գաղափարներու ծաւալումը, տնտեսագիտական պայմաններ, գործաւորական շէն-սիֆաներու հաստատումը, ժողովուրդական բանախօսութիւնները ինքնին կրցած էին այդ արդիւնքին յանգիլ, ժողովուրդին ներշնչելով իր ձեռքին աշխատութեան միայն ապաւինելու գաղափարը՝ և զայն անդգալաբար պաղեցնելով կղերէն։

Եւ սակայն, կղերին անկումը վերջնական չէր. ինքնին շատ զօրաւոր էր արդէն անիկա՝ վերջնականապէս կործանելու համար։ Անգամ մը որ ինքզինքը իր տարրին՝ Եկեղեցւոյ շրջանակին մէջ գտաւ՝ չափեց այն անկումը զոր ունեցած էր, և հասկնալով իր կորսնցուցածին կարևորութիւնը մտածեց կրկին շահիլ զայն, ինչ գինով ալ ըլլար։ Ան ատեն սկսաւ կրօնական հակազդեցութիւնը, որ մինչեւ այսօր կը յարատեւէ և մեծ յաջողութեամբ։ Նախ որ ուխտեր հաստատուեցան, ջանքեր եղան գործաւոր տարրին վրայ ազդելու և յաջողեցան կաթողիկ գործաւորներու ընկերակցութիւններ կազմել, Լուստի խայտառակութիւնը ստեղծեցին, կրօնական թերթերը աւելցուցին, քարոզներուն առին քաղաքական գոյն մը և նպատակաւոր ուղղութիւն մը՝ վերջապէս ինչ որ կրնային ընել։ Եւ սակայն

ատոնք բաւական չէին։ Ժողովուրդը միշտ անտարբեր կը մնար Եկեղեցիին հանդէպ ու չէր հաւատար։ Ի՞նչ ընել։

Այդ վիճակին մէջ, օր մը հակասեմականութիւնը ստեղծուեցաւ, որ կղերին մեծ յաջողութիւն մը ապահովեց, միեւնոյն ատեն կաթողիկոսութեան հիմերը վերահաստատելով։ Ու ժողովուրդը՝ փրանքօ-գերման պատերազմէն ի վեր արդէն իսկ իր հոգիին մէջ ցեղային ատելութեան ընդունակութիւն մը ստացած ըլլալով, յարեցաւ այդ նողկալի, անանուն գաղափարին որ մինչև «Պրանսան Պրանսացւոյ համար»ի ցաւագար սկզբունքին տարաւ զինքը։ Ալֆէրիի, Մարսիլիոյ և Թուլոնի մէջ Հրեաներու դէմ գործուած խուժուժ արարքները՝ կատարելապէս կ'ապացուցանեն ասիկա։ Շատ չանցած՝ հակասեմականութիւնը ստացաւ ահագին համեմատութիւն մը. ամէն մարդ որ ոխ մը ունէր հրեայի մը դէմ, — ու շատեր կային՝ քանի որ պէտք է խոստովանիլ թէ հրեայ ցեղը միշտ յանձնարարելի չի հանդիսանար — ընդգրկեց այդ ատելութեան հոսանքը, ամենաթեթեւ պատճառի մը համար կատաղի հակասեմական մը դառնալով։ Եւ այդ ախտը, — որովհետեւ ախտ մը դարձած էր տակաւ, — տարածուեցաւ վերջ ի վերջոյ դրականութեան, մամուլին ու քաղաքականութեան մէջ, միեւնոյն ատեն ռէքլամ ընելով կաթողիկոսութեան՝ որ այդ պատրուակին տակ կը ծաւալէր։

Կղերականութիւնը իր այս յաղթական ճամբուն մէջ էր երբ Բանամայի խնդիրը ծագեցաւ։ Եւ ահա բոլոր հակասեմականները ոտքի ելան. հրեաները Պրանսան կողմադրեցին կը պոռային թերթերը, Պրանսայի խնայողութիւնները

գողցուեցան կը գողային աղտոտ հոգիներ . և ատեւութիւնը ա՛լ աւելի շեշտուեցաւ հրեաներուն դէմ՝ որոնք ամէնէն աւելի ձեռնամուխ եղած էին գործին : Եւ սակայն , այդ աստիճան յանցաւոր չէին Իսրայէլի զաւակները , ինչպէս որ հաստատուեցաւ Արթուրի վերադարձէն ետքը : Բայց կղերականութեան շահը կը պահանջէր որ այդպէս չկարծէր ժողովուրդը և համազուէր թէ հրեայ ցեղը գող ու վնասակար տարր մըն է երկրին մէջ (*) :

Ընկերական այս առաջին ոճիրէն ետքը , բնական է որ կղերականութիւնը չպիտի կասեր : Պիտի տեսնենք քիչ մը ետքը թէ ներկայացած առաջին առիթէն կրցաւ օգտուիլ ան՝ ալ աւելի ամուր կերպով հաստատուելու համար իր վերադառած դիրքին մէջ : Անկէ առաջ պէտք է ըսել հոս որ ուղղակի կղերատեաց ու ազատամիտ մասը ֆրանսական ժողովուրդին , անգործ չէր մնար . ինքն ալ իր կողմէ առաջ կը տանէր հակազդեցութիւնը , ու կը ջանար միշտ ժողովրդին ներշնչել աշխատութեան գաղափարը ու զայն գերադասել տալ հոգեկան վերացումներէն :

Այս պայմաններուն մէջ սկսաւ Տրէյսֆիլսի խնդիրը , պարզ մասնութեան գործ մը՝ որուն հեղինակը երեւան ելլելէն ետքը ամէն մարդ մոռցաւ զայն : Կղերականութիւնը սկիզբէն դեր մը չի խաղաց այս գործին մէջ ու մամուլին հակասեմական մասն ալ քիչ մը վիժուք

(*) Այս գաղափարը տարածուեցաւ ֆրանսայէ դուրս ալ . Նոյն իսկ մեր մէջ , Բանամայի խնդրին յուզուած պահուն՝ Բիւզանդ Քէչեան կը պոռար Արեւելքի մէջ . «Բարաները ետ տուէ՛ք » :

փրցնելէ ետքը լուռ մնաց , սակայն ատիկա լուռ նոթ մը չէր իրենց համար . մասնութիւն մը գործուած էր ու մասնիչը պատժուած . ի՞նչ կը մնար ընել . մանաւանդ որ ամէն ֆրանսացի , ո՛ր կուսակցութեան , ո՛ր գաղափարին ալ պատկանէր , գոհունակութիւն մը պիտի զգար տեսնելով որ հայրենիքին դաւաճանող մարդ մը կը պատժուի : Իրարանցումի պէտք չէր մնացած ուրեմն :

Բայց քիչ մը ետքը , խնդիրը յանկարծ փոխուելով սուր հանգամանք մը ստացաւ : Դատապարտութիւնը ապօրինաւոր եղած էր և կը կասկածուէր այն ցուցակին վաւերականութեան վրայ՝ որով Տրէյսֆիլսը դատապարտած էին : Անմիջապէս այս գաղափարը յայտնողներուն շուրջը խմբուեցան ֆրանսայի բոլոր կղերատեացներն ու ազատ , մաքուր ձգտումներու տէր մարդիկը , ու պայքարը սկսաւ վերաքննութեան ի նըպաստ : Գրեթէ միեւնոյն ժամանակ ոտքի ելան ասոնց հակառակորդներն ալ , ի գլուխ ունենալով ազգին կղերական ու զինուորական մասը :

Պայքարը սկսած էր երկուստեք , սկիզբները շատ տարտամ ու անորոշ : Նախ երկու կուսակցութիւններ իրար չէին ճանչցած , յետոյ չէին գիտեր թէ ուրիշ կու գար հակազդեցութիւնը . իւրաքանչիւրը գաղափար մը ունէր եւ իր այդ գաղափարը կը պաշտպանէր անոնց դէմ՝ որոնք զայն հերքել կը ջանային . սակայն երբ Զուլա մէջ մտաւ խնդրին , լոյսը տակաւ սփռուիլ սկսաւ երկու հակառակորդ տարրերուն վրայ , այնպէս որ , եղեռնադատ ատեանին վճիռէն ետքը , անոնցմէ իւրաքանչիւրը գիտէր թէ որո՞ւ հետ գործ ունի : Անոնք որ վերաքննութիւն կը պահանջէին , հասկցան թէ ի-

ընդ դէմ ունէին Թրանսայի բոլոր շա-
րաւոտ տարրերը, «ազգայնական անունին
տակ խմբուած դաւադիրներու, որջա-
ցած պաշտօնատարներու, լծացած միտ-
քերու, հակասեմականներու, կղերա-
կաններու, վերջապէս սուրն ու խաչը
պաշտօններու խուժան մը՝ որ օր օրի
կը ստուարանար: Միւս կողմէ՝ «գատ-
ուած իրը» անվերաքննելի, այսինքն
Տրէյֆիւսի խնդիրը վերջացած նկատող-
ներու այդ աղտոտ խումբը՝ իր դէմը
կը գտնէր երկրին ազատական տարրը՝
կազմուած խիզճի ու դատողութեան
տէր մարդոցմէ՝ որոնք մի միայն լոյս ու
ճշմարտութիւն կը պահանջէին: Եւ ան-
գամ մը որ երկու կուսակցութիւնները
իրար ճանչցան, խնդիրը ստացաւ բոլո-
րովին տարբեր երեւոյթ մը՝ որուն հետ
Տրէյֆիւսի խնդիրը գրեթէ բնաւ առն-
չութիւն չունէր, ինչպէս որ պիտի տես-
նուի հիմայ:

Ըսի արդէն թէ Տրէյֆիւսի խնդրէն
շատ առաջ իսկ, երկու որոշ հոսանքներ
կազմուած էին Թրանսայի մէջ. կղերա-
կանութիւնը և կղերատեացութիւնը:
Յայտնեցի նաև թէ այս երկու կուսակ-
ցութիւններն ալ իրենք իրենց հաշուին
կ'աշխատէին շարունակ, իւրաքանչիւրը
ջանալով ի'նք տանիլ յաղթանակը: Այդ
աշխատութիւններն ու ջանքերը բնական
է որ արդիւնքի մը պիտի յանգէին ու
բաղխում մը անխուսափելի պիտի ըլլար:
Բանամայի առթիւ այդ բաղխումը իրաւ
է որ տեղի ունեցաւ, սակայն շատ

տարտամ ու շատ ալ թեթեւ էր
անիկա: Բայց այդ օրէն ի վեր մա-
նաւանդ շեշտուած էր վճռական բաղ-
խումի մը հաւանականութիւնը՝ որ վեր-
ջապէս իրականացաւ. առիթ մը, պատ-
րուակ մը ծագած էր, Տրէյֆիւսի դա-
տին վերաքննութեան խնդիրը՝ որ, —
ինչպէս քիչ մը վերը ըսի, — երկու
անհաշա կուսակցութիւնները դէմ-դէմի
դրաւ, երկուքն ալ տրամադիր մինչև
յետին շունչը կռուելու:

Թրանսայի այս օրուան վիճակը դիւ-
րաւ կը բացատրուի բոլոր ասոնցմով.
դէպքերը ինքնին ցոյց կու տան թէ հո-
գեբանօրէն որչա'փ հիմնաւոր են այս
նկատողութիւնները: Տրէյֆիւսի խնդիրը
այսօր ելած է իր ինքնութենէն. պատ-
րուակ բռնուած ըլլալով կռուի մը՝ որ
երկար ատենէ ի վեր կը պատրաստուէր
և որ ամէնէն սուր համեմատութիւնները
ստացաւ, այդ խնդիրը կղզիացած մնաց
իր մերկութեան մէջ, մինչդեռ պայքարը
կը շարունակուէր ասդին: Պատրուակը
կարեւորութիւն չունի ալ. ինչ որ ալ
ըլլայ Ռէնի զինուորական ատեանին
վճիռը, Տրէյֆիւս անմեղ հռչակուի կամ
ոչ, կռիւը պիտի մնայ կրկին, և շա'տ
աւելի բուռն թափով մը առաջ պիտի
տարուի: Վերադատումը պարզ հանգ-
րուան մըն է միայն, ինչպէս որ վերա-
քննութիւնը եղած էր, տեսակ մը զի-
նադուլ՝ զոր այնչափ անհամբերութեամբ
սպասուած վճիռը պիտի լուծէ:

ՕԳՏԱԿԱՐ ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Գաւառական եւ Պոլսոյ աղքատիկ դպրոցները եւ որբանոցները ձրիապէս Մասիս զըրկուելու համար վճարած է Եւալրուեան Կարապետ էֆէնտի $\frac{1}{4}$ օսմ. ոսկի մէկ օրինակ վեցամսեայի փոխարէն, Էսաեան Վահան էֆէնտի 5 օսմ. ոսկի 20 օրինակ վեցամսեայի փոխարէն, Իսազուլեան Յովհաննէս էֆէնտի $\frac{1}{4}$ օսմ. ոսկի մէկ օրինակ վեցամսեայի փոխարէն, Կիւլպէնկեան Գառնիկ էֆէնտի $\frac{3}{2}$ օսմ. ոսկի 10 օրինակ վեցամսեայի փոխարէն, Կիւմիւշկէրտան Տիրան էֆէնտի $\frac{1}{2}$ օսմ. ոսկի 2 օրինակ վեցամսեայի փոխարէն :

13րդ թիւէն սկսելով թերթ կը ղրկենք

Եւալրուեան Կարապետ էֆէնտիի հաւելոյն

1. Կարմրաւորի վանքի որբանոց, Վան :

Էսաեան Վահան էֆէնտիի հաւելոյն

1. Վանայ Ալիւր գիւղի վարժարան, 2. Պայազիտի Աղգ. վարժարան, 3. Լիւմ վանքի դպրոց, 4. Կառուց վանքի դպրոց, 5. Աղթամարայ վանք, 6. Պայպուրթի Աղգ. վարժարան, 7. Մուշի Ս. Մարինէ թաղի վարժարան, 8. Մարաշի Աղգ. վարժարան, 9. Ուրֆայի որբանոց, 10. Տիարպէքիւրի որբանոց, 11. Մամէստիայի Աղգ. վարժարան, 12. Զէյթունի որբանոց, 13. Սիսի վանք, 14. Մուշի Ս. Կարապետի Ժառանգաւորաց վարժարան, 15. Բալուի Քաղցրահայեաց վանքի որբանոց, 16. Վանայ Նրամեան վարժարան, 17. Զորք Մարզուանի Աղգ. վարժարան, 18. Կարմիր վանքի որբանոց, Կարին, 19. Արծնեան թանգարան, Կարին, 20. Կարինի որբանոց :

Իսազուլեան Յովն. էֆ.ի հաւելոյն

1. Վանայ Վարազայ վանքի որբանոց :

Կիւլպէնկեան Գառնիկ էֆ.ի հաւելոյն

1. Թաւրուսունի Աղգ. վարժարան, 2. Քղիի Խուփս գիւղի Աղգ. վարժարան, 3. Ա. Ոսկեանց նախակրթարան Գարակէօմրիւկ, 4. Խորէնեան նախակրթարան Պալաթ, 5. Վանայ Աւանց գիւղի նախակրթարան, 6. Ա. Ներսէսեան նախակրթարան Խասգիւղ, 7.

Զարանձաքի Աղգ. նախակրթարան, 8. Խարբերդի Խուլէվանքի որբանոց, 9. Մուշի Առաքելոց վանքի որբանոց, 10. Զարնապատի Ս. Գրիգոր վանքի որբանոց, Վան :

Կիւմիւշկէրտան Տիրան էֆ.ի հաւելոյն

1. Բաղէշի Խնդրակաւար վանքի որբանոց, 2. Եղեւիոյ Ս. Սարգիս վանքի որբանոց :

Վ Ր Ի Պ Ա Կ

Այս թիւին 536րդ էջին լրայ ֆրանսերէն ոտանաւորին 11րդ տողին մէջ baiser պէտք է ըլլայ baisers. Նոյն ոտանաւորին հայերէն թարգմանութեան չորրորդ տողը պէտք է կարդալ : Ահ, մէկըմէկ մենք կ'ատէինք բրտօրէն :

Ն Ա Մ Ա Կ Ս Տ Ո Ւ Փ

ԻԶՄԻՐ, Գործակալ. — Կը հաստատենք մեր 12 օգոստոսի նամակը. ուղուած թերթերը ամէնքն ալ ղրկեցինք, անհամբեր Զեր պատասխանին կը սպասենք :

ԷՆԿԻԻՐԻԻ, Գործակալ. — Զեր լուրերուն կը սպասենք անհամբեր :

ԱՏԱՅԱՂԱՐ, Գործակալ. — Նմանապէս :

ԿԻՐԱՍՈՆ, Գործակալ. — Նմանապէս :

ՍԱՄՍՈՆ, Գործակալ. — Նմանապէս :

ՄԱՐԶՈՒԱՆ, Գործակալ. — Նմանապէս :

ՏՐԱՊԻԶՈՆ, Գործակալ. — Նմանապէս :

ԵՆԿԻՍԻՐԻՐԱ, Գործակալ. — Ուղուած թերթերը ժամանակին ղրկուած են. Զեր լուրերուն կը սպասենք անհամբեր :

ՔԵՍՏԻՔ, Պ. Գ. — Թերթերու առաքումը սկսած ենք 13րդ թիւէն. Զեր լուրերուն կը սպասենք :

Արսօնասէր Կ. Ս. ԻԻԹԻԼՃԵԱՆ

Տպագրութիւն 6. Մ Ա Տ Թ Է Ո Ս Ե Ա Ն

Թիւ 27, Ֆինճանճըլար Եօզուշու, Կ. Պոլիս

THE INTERNATIONAL BROKER

(Ծանուցում)

Այն բոլոր վաճառականները, նաւորդները, խուզարկուները, հնա-
րիշները, առեւտրական մարդիկը, կալուածատէրները և մասնաւոր անձեր
որոնք գնելու կամ ծախելու բան մը ունին, ինչպէս տուն, շինութեան
տեղ, հողեր, հանքային հորեր, գործարաններ, առեւտրական տուններ,
բաղէնդներ կամ զանազան ապրանքներու ծրարներ, մեքենաներ, և այլն
ինչպէս նաև այն տեսակ մարդիկ որոնք կ'ուզեն ուրիշի մը հետ ընկեր
ըլլալ կամ ընկեր մը կը փնտռեն, հետազօտութիւններու, առեւտրական
գործառնութիւններու, սենտիքաներ և ընկերութիւններ կազմելու և կամ
թէ առեւտրական որ և է գործ մը աշխարհիս որ և է մէկ մասին մէջ կա-
տարելու համար, պէտք է որ կարգան, բաժանորդ գրուին (տարեկան 2
շիլին) և աղդարարութիւններ տան վերը յիշուած նպատակներէն միոյն
համար, կամ պատասխանեն եղած ծանուցումներու որոնք կը հրատարակուին
The International Broker ի մէջ, հասցէն 11, Southampton Row, London. W. C

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՆԱՆՍԻՐ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Այն ուսանողները, որոնք կ'ուզեն բժշկական մասնագիտութեան հե-
տեւիլ, կը ծանուցուի իրենց թէ մօից քննութենէ ազատ պիտի ըլլան, երբ
հետեւեալ կրթական հաստատութիւններէն միոյն վկայականովը ներկայա-
նան. Կեդրոնական վարժարան, Պէրպէրեան վարժարան, Կալթա Սէրայի
Լիսէն և Ռոպէրթ Բօլէճ :

Մօից քննութենէ ազատ մնալու համար, բոլոր դիմումները պէտք է
տեղի ունենան Կրթական նախարարութեան հասցէին, Բարիդ, ամէնէն ուշը
մինչև եւրոպական 1 Հոկտեմբեր 1899 :

Մանրամասն տեղեկութիւններ առնելու համար դիմել Նանսիի Համալ-
սարանի բժշկական Ֆաբիլըէի քարտուղարին :

Դասախօսութիւնները կը սկսին յառաջիկայ Նոյ. 3ին (Ն. Տ.):

ՄԱՍԻՍ, Ձեռ-Բէ ԿԸ ԾԱՆՈՒԻ ՀԱՏԸ 2 ՂՐԾ.

Մասիսի վերաբերեալ ամէն նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել
թերթիս տնօրէն-խմբագրին

ՄԲԶԱՅԷԼ ԵԱՍՏԱՆԺԵԱՆ

Stamboul, Bible House, Imprimerie H. Matteosian

Սրամպուլ, Պայպըլ Հաուզ, Յ. Մատթէոսեան տպարան

Թերթիս տնօրէնը անձամբ կարելի է տեսնել ա-
մէն օր ժամը 6—9, Մատթէոսեան տպարանը :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՊՈԼՍՈՅ ՀԱՍԱՐ	ԳԱԽԱՌՆԵՐԸ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Տարեկան 44 ղրշ.	54	12 ֆր.
Վեցամսեայ 22 »	27	6 »

«Կեանքը անուշ է» ըսած է ժողովուրդին իմաստութիւնը , բայց որքան աւելի անուշ է , երբ այդ կեանքը ապահովագրուած ըլլայ : Այսօր քաղաքակիրթ երկիրներու մէջ կեանքի ապահովագրութեան ընկերութիւնները , հասարակութեան համար անհրաժեշտութիւն մը կը նկատուին , որովհետեւ անոնք փոխադարձութեան բարերար սկզբունքին վրայ հիմնուած են : Կեանքի ապահովագրական ընկերութիւն մը առիթը կուտայ որպէս զի ամէն ոք խնայողութիւններ ընէ իր ծերութեան օրերուն համար :

ԷՔԻԹԱՊԼ, կեանքի ապահովագրութեան ընկերութիւնը , որ ամէնէն մեծ պահեստի դրամագլուխը ունի , այս կարգի գեղեցիկ առիթ մը կուտայ : 30 տարեկան անձ մը , որ ԷՔԻԹԱՊԼ ընկերութեան տարեկան 24 ոսկի եւ 27 դրշ. (եռամսեայ մասնավճարներով) կը վճարէ , մինչեւ 20 տարի , 50 տարեկան եղած ատենը , ընկերութիւնը նախ իրեն պիտի վերադարձնէ 500 ոսկի՝ իր վճարած 485 ոսկիին փոխարէն , ու նաեւ 20 տարուան կուտակեալ իր շահաբաժինը , որ այնքան կը բարձրանայ որքան օրէ օր ընկերութեան գործառնութիւնները ծաւալին : Գաղափար մը տալու համար այդ շահաբաժինն վրայ , ըսենք միայն որ ԷՔԻԹԱՊԼ ընկերութիւնը անցեալ տարւոյ վերջին , տարեկան 24 ոսկի եւ 27 դրշ. վճարող յաճախորդներուն իբր 20 տարուան կուտակեալ շահաբաժին կը վճարէր 242 ոսկի . ուրեմն 485 ոսկի իբր 20 տարեկան տարւոյ վերջը ԷՔԻԹԱՊԼ ընկերութեան կը ստանային 742 ոսկի : Իսկ եթէ պատահի որ կեանքը ապահովագրուած մէկը բազմը չունենայ ամբողջ 20 տարի ապրելու , եւ եթէ նոյն իսկ իր կեանքը ապահովագրելուն հետեւեալ օրը մեռնի , այն ատեն ընկերութիւնը պարտաւոր է իսկոյն նոյն անձի ընտանիքին 500 ոսկի վճարել :

Մի՛ կասկածիք . ԷՔԻԹԱՊԼ, կեանքի ապահովագրական ընկերութիւններուն ամէնէն հզօրն է :

ՏԱՐԵՐՔ ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Հեղինակ ԱԼԻՔՍԱՆ ՊԵՋՃԵԱՆ

Նորագոյն միակ դասագիրքը , զոր գիտնական հեղինակը երկար տարիներու փորձառութենէ վերջ պատրաստած է խնամով : 280 էջերէ բաղկացած , 115 պատկերներով , մաքուր թուղթի վրայ , կազմուած սիրուն հատոր մըն է , մասնաւորաբար ազդ. նախնական և երկրորդական վարժարաններու մէջ գործածուելու համար : Գինը միայն 8 դրշ. կը գտնուի բոլոր գրավաճառներուն քով . կեդրոնատեղին է Մատթէոսեան վաճառատունը : Կայ նոյն հեղինակութեան հայատառ տաճկերէնն ալ , հայերէն տպագրութեան յար և նման :

Սոյն հեղինակութիւնը յանձնարարելի է նաև իբր ընթերցանութեան գիրք բոլոր բնութեան գաղտնիքներով հետաքրքրուողներու համար :

Ամառուան տաք օրերուն , զովանալու համար ծանկատտանի մէջ ընդհանրապէս պաղ ջուր և օշարոյ կը փոխեն , բան մը որ զիրենք աւելի կը տաքցնէ , վայրկեանով : Եւ թիւն մը միայն տալով : Տեւական զովութիւն տալու և կը յանձնարարենք գաւաթ մը թէյ , որուն պաղն ալ (thé glacé) կ'ըլլայ ամառուան համար : Անոնք որոնք կ'ուզեն փորձել թէյին զովացնող յատկութիւնը , թող գիմեն Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ թէյի վաճառատունը որ իր զանազան խառնուրդներովը և գինի աժանութեամբ կը մրցի ծանկատտանի մէջ գտնուած բոլոր միւս վաճառատուններուն հետ :

Ուշադրութիւն վաճառատան մտքեային :

Վաճառատունը կը գտնուի Կ. Պոլիս ձեւալ պէյ խանին օսկ , քիւ 10

